ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**76**-րդ տարի) **Թիվ-7** (1665) *Հուլիս 2022*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Յայտարարութիւն

Հ.Յ.Դ. Բիւրոյի յայտարարութիւնը (էջ 1)

2- Առաջնորդող

Նիկոլը, ճակատագրական սպառնալիքներն ու ընդդիմությունը (էջ 2-3)

3- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայաստանի ու Ադրբեջանի բանակցային դիրքորոշումները (էջ 4-6)

4- Աշխարհաքաղաքական

Արմեն Պետրոսյան
Ուկրաինական ճգնաժամն ու Թուրքիայի միջանկյալ դիրքավորումը (էջ 7-13)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ վարչակազմերի կողմից 907-րդ բանաձևի շրջանցման ազդեցությունը Ադրբեջանին -տրամադրվող օգնության վրա (էջ 14-16)

5- Տարածաշրջանային

Ժաննա Վարդանյան
Ռաշթ-Ասթարա. Իրանը և Ադրբեջանը չեն կարողանում իրար կապել երկաթգծերը (էջ 17-20)

Լիանա Պետրոսյան
Հետխորհրդային Ադրբեջանի ամբողջատիրական քաղաքականությունը (էջ 21-24)

Նարե Գևորգյան
ԻԻՀ Փորձագետների խորհուրդը (էջ 25-27)

6- Պատմաքաղաքական

Արարատ Հակոբյան
Ադրբեջանի Հանրապետության անվանակոչման հարցի շուրջ (էջ 28-32)

Անի Մելքոնյան
Հայ ազգային-ազատագրական պայքարի փուլերը, մարտավարական փոփոխություններն ու արտաքին կողմնորոշման խնդիրը (էջ 33-38)

7- Դաշնակցական բեմ

Խաժակ Մկրտիչեան
ՀՅԴ կազմակերպական ապակեդրոնացումը ծուռ հայելիներու մէջ (էջ 39)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Մեզմէ պիտի չլսէք (էջ 40)

Հ.Յ.Դ. Բիւրոյի յայտարարութիւնը

Հայաստանի ապազգային իշխանութիւնների՝ սահմաններ չճանաչող անհանդուրժողականութիւնը նորանոր դրսևորումներ է ստանում: Այս գիշեր առանց բացատրութեան ու հիմնաւորման արգելուել է Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ, Ֆրանսիայի հայկական կազմակերպութիւնների համակարգող խորհրդի (CCAF) համանախագահ Մուրադ Փափազեանի մուտքը Հայաստան:

Հայաստանի, Արցախի և Հայ դատի համար տասնամեակներ պայքարած ազգային գործչի նկատմամբ նման վերաբերմունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ քինախնդիր, փոքրոգի քայլ և թշնամուն հաճոյանալու պարզունակ դրսևորում:

Համոզուած ենք, որ Ֆրանսիայի Հանրապետութեան ազգային տօնի՝ Բաստիլի գրաւման օրը Ֆրանսիայում ճանաչուած և յարգուած հայազգի քաղաքացու նկատմամբ ազատ տեղաշարժուելու իրաւունքի կոպիտ ոտնահարումը պատշաճ գնահատական կ'ստանայ նաև ֆրանսիական իշխանութիւնների կողմից:

Ցաւալիօրէն յատկանշական է, որ Թուրքիայում և Ադրբեջանում անցանկալի անձ յայտարարուած Մուրադ Փափազեանը հիմա արդէն անցանկալի անձ է փաշինեանական իշխանութիւնների համար. ազգային գործիչներին թիրախաւորելու և սփիւռքահայերին Հայաստանից օտարելու փաշինեանական ծանօթ ձեռագիրն է: Սա հարուած է համահայկականութեան գաղափարի իրականացման ճիգին, ժողովրդավարութեան լուրջ նահանջ է Հայաստանում և բռնապետութեան հաստատման ակնյայտ դրսևորում:

Խստիւ դատապարտում ենք Մուրադ Փափազեանի նկատմամբ կիրառուած ապօրինի քայլը, ինչը առանց պատշաճ բացատրութեան և վերանայման չի կարող մնալ:

Դաշնակցականների նկատմամբ սանձազերծուած հալածանքների նորօրեայ դրսևորումները՝ ձերբակալութիւնները, կալանաւորումները, պաշտօնազրկումները, տարատեսակ ապօրինութիւնները, ըստ էութեան, քողազերծում են հայութեան դէմ ուղղուած ազգադաւ ծրագրերը: Դրանք որևէ կերպ չեն կարող յետ պահել մեզ պայքարի մեր ուղուց:

Թուրք-ադրբեջանական տանդեմի շահերը սպասարկող փաշինեանական վարչախումբը ի վերջոյ ինքնաբացայայտուելու է և գտնելու է իր վախճանը:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕ
14 յուլիսի 2022 թ.

Նիկոլը, ճակատագրական սպառնալիքներն ու ընդդիմությունը

2022 թ. ապրիլ-հունիս ամիսներին Հայաստանում ընթացավ հայրենիքի փրկության կարգախոսներով հրապարակ իջած դիմադրական շարժման երկրորդ փուլը: Ճիշտ չի լինի ասել, թե շարժումը պարտություն կրեց, քանի որ այն ունեցավ մի շարք ձեռքբերումներ և ընդլայնեց իր շրջանակները Հայաստանում, Արցախում և Սփյուռքում: Մյուս կողմից՝ իրականությունից հեռու կլինի եզրակացնելը, թե շարժումը հաղթանակ տարավ, քանի որ այն չհասավ իր գլխավոր նպատակին՝ Նիկոլ Փաշինյանի ու ապազգային իշխանական համակարգի հեռացմանը:

Իսկ կարելի՞ է մտածել, թե հաղթեց Նիկոլ Փաշինյանը: Իհարկե, իրականությունը նա այդպես կներկայացնի թիմակիցներին, հանրությանը, ինչպես և արտաքին շահագրգիռ ուժերին, որպեսզի թույլ չտա թիմի թուլացումն ու քայքայումը, երկրի ներսում դիմադրական շարժման ընդլայնումը և միևնույն ժամանակ արտաքին ուժերին համոզի, թե նրանք պետք է շարունակեն իր հետ գործ ունենալ, քանի որ երկրի լեգիտիմ իշխանությունն է ներկայացնում, և ընդդիմության ներուժը համարժեք այլընտրանք չէ իր իշխանության համար: Թե՛ սեփական թիմը և թե՛ արտաքին ուժերը, իհարկե, որոշ ժամանակ կձևացնեն, թե հավատում են այս պնդումներին, թեև միայն Նիկոլի անվտանգությունն ապահովող միջոցառումները բավական են փաստելու, որ նա ինքը վստահ չէ իր իշխանության կայունության հարցում: Նիկոլ Փաշինյանը լավ գիտի, որ այլևս չի կարողանալու սեփական երկրում ազատորեն կատարել ղեկավարի իր պարտականությունները, այլևս մերժված է Հայաստանի հասարակական, մտավորական ու քաղաքական ակտիվ հատվածի, եկեղեցու, Արցախի ու Սփյուռքի կողմից: Այլ խոսքով՝ որպես պետության ղեկավար և ժողովրդի առաջնորդ՝ նա կորցրել է իր լեգիտիմությունը և, ըստ էության, սեփական երկրում մեկուսացած վիճակում է՝ գլխում մշտապես կրելով մեծ բանտից փոքր բանտ տեղափոխվելու վախը:

Վերջնականապես կորցնելով երբեմնի համաժողովրդական աջակցության վերականգնման հույսը՝ ներքին կյանքում իշխանությունը պահպանելու համար նրա քաղաքական հենարանը մնում է արտաքին շահագրգիռ ուժերի աջակցությունը, ինչի երաշխիքն էլ բոլոր շահագրգիռ կողմերի՝ անգամ իրար հակասող նպատակներին ու շահերին ծառայելու նրա պատրաստակամությունն է:

Իհարկե, իր գավառական խորամանկությամբ, անսկզբունքայնությամբ, բոլորին խոստանալու և բոլորին խաբելու խուսանավումներով Փաշինյանը հասցրել է բացարձակապես անվստահելի դառնալ բոլորի համար, մյուս կողմից՝ նմանվել է Նիկարագուայի երբեմնի դիկտատոր Սամոսային, որի մասին ամերիկացիները (ենթադրաբար նախագահ Ռեյգանը) ասել են «Սամոսան շան որդի է, բայց մեր շան որդին է»: Իհարկե, բոլոր տեսակի սամոսաները պետք են, քանի դեռ հնարավոր է նրանց օգտագործել, որից հետո դառնում են ավելորդ ու հաճախ խանգարող: Արտաքին ուժերի աջակցության մյուս պատճառը ընդդիմության նկատմամբ եղած կասկածներն են: Մի ընդդիմություն, որը կախման մեջ չէ որևէ արտաքին ուժից և, ըստ էության, վարում է ազգային-ազատագրական պայքար, բացառում է Արցախի ներառումը Ադրբեջանի կազմում, խստորեն քննադատում է պարտված վարչապետի կնքած պարտվողական պայմանագրերը, հաղթելու դեպքում կարող է շատ խաղաթղթեր իրար խառնել, զգուշավորության է մղում շահագրգիռ բոլոր կողմերին: Մյուս կողմից՝ դեռևս մշուշոտ է ընդդիմության հաղթելու հավանականությունը, և նման պարագայում օտարները չեն կարող հաշվի նստել կասկածելի հեռանկարի հետ՝ այդպիսով դեպի հակառակ բևեռ վանելով սկզբունքներից ու ազգային պատասխանատվությունից զուրկ քաղաքական բախտախնդիրների իշխանությանը:

Իհարկե, երկրի ներսում, իշխանության և հատկապես քաղաքական առաջնորդի ֆիզիկական անվտանգությունը աչալրջորեն ապահովում են ուժային կառույցները, սակայն ժողովրդային աճող դժգոհության, խորացող քաղաքական, տնտեսական ու այլ հիմնահարցերի պայմաններում մարում է որևէ մեկին մինչև վերջ վստահելու և ապավինելու կասկածամիտ ու անհավասարակշիռ ղեկավարի հավատը: Ներկայումս, երբ ընդդիմադիր հրապարակային շարժումը տեղատվության մեջ է, իշխանությունն ու նրա առաջնորդը ձգտում են առավելագույնն անելու՝ շարժման նոր և անխուսափելի մակընթացությանը հնարավորինս նախապատրաստվելու, դրա թափի վրա ազդելու համար: Վարչապետի աթոռի պահպանման հետ ապագան կապած ղեկավարը շարունակում է կենտրոնացնել իշխանությունը առավել վստահելիների նեղացող շրջանակի ձեռքում: Ավտորիտար իշխանության գոյության երկարաձգմանն են ծառայում օրենսդրական փոփոխությունները, ակտիվ ընդդիմադիրների ձերբակալություններն ու դատական հետապնդումները, ուժային կառույցների օգտա-

գործումը որպես ներքաղաքական պայքարի գործիք:

Իշխանության անբարո էության հերթական ապացույցն է աչքի ընկնող մի շարք ընդդիմադիր գործիչների զորակոչումը եռամյա հավաքների: Զինվորական ծառայությունից հիմնականում խուսափած օտարասուն իշխանավորների խառնախումբը հայրենիքին ծառայությունը դարձրել է ընդդիմադիր բազմաթիվ գործիչների գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու միջոց: Հետապնդած նպատակի համար վարչապետը դիմում է նաև մրցակից ճամբարը պառակտելու, շանտաժի և այլ մեթոդներով անհատ գործիչներին չեզոքացնելու՝ իրեն հոգեհարազատ գործելակերպին: Պետք է սպասել, որ մոլագար ղեկավարի մթագնած ուղեղը նորանոր դավեր ու դավադրություններ կնյութի սեփական իշխանության ժամանակը երկարաձգելու համար:

Միևնույն ժամանակ նա իր առջև տեսնում է ի հայտ եկող նորանոր հիմնահարցեր, որոնք բարդացնում են իր ստեղծած ոստիկանապետության անօրինական գործելակերպը: Որքան էլ որ արտաքին պատվիրատուները փորձեն աչք փակել Հայաստանում ծավալվող հակաժողովրդավարական ու հակաօրինական գործընթացների վրա, ի վերջո ստիպված են արձագանքել դրանց աղաղակող դրսևորումներին: Իհարկե, անհասկանալի է մնում, թե ինչու հակադարձելով իշխանությունների քայլերին՝ ընդդիմությունը լուրջ քայլեր գրեթե չի ձեռնարկում բռնապետական իշխանությունների հակաժողովրդական գործունեության փաստերի փաթեթը ներկայացնելու համապատասխան բոլոր միջազգային ատյաններին, կառավարություններին ու խորհրդարաններին, համապատասխան ատյաններում չի պայքարում ժողովրդավարության ու խաղաղության հաստատման կեղծ կարգախոսերի ներքո Հայաստանը թշնամիների առջև ծնկի բերելու ծրագրի բացահայտման ուղղությամբ: Չէ՞ որ այս դեպքում հարցը ոչ թե իշխանության համար պայքարին է վերաբերում, այլ Հայաստանի ու Արցախի փրկությանը ներքին թշնամուց:

Ընդդիմությունն առհասարակ չի կարող հաջողության հասնել, եթե դիմադրական շարժմանը թափ հաղորդելուց առաջ հստակ չլինի հաղթանակի ճանապարհային քարտեզը՝ մինչև վերջնակետ: Այդ քարտեզը, իր գործադրողներով հանդերձ, հնարավորինս հստակ պետք է ներկայացվի նաև հանրությանը՝ ցրելու նպատակով գերիշխող այն անորոշությունը, թե ինչ է լինելու Նիկոլ Փաշինյանի հեռացումից հետո:

Շարժման հաջողության ակնկալիք չպետք է ունենալ նաև այն դեպքում, եթե դիմադրության ալիքը չտարածվի հանրապետությունով մեկ, իսկ եթե դա հնարավոր չհամարվի, ապա ավելի լավ է չսկսել գործընթացները:

Շարժումը պետք է ներկայացնի երկիրը համապարփակ ճգնաժամից դուրս բերելու ամբողջական ծրագրեր՝ լուծումներ անվտանգության, սոցիալ-տնտեսական և այլ խնդիրների վերաբերյալ: Այն պետք է ձգտի ձեռնպահ մնալու այնպիսի գործընկերների հետ գործակցությունից, որոնք խոցելի են:

Ավելորդ է կրկնելը, որ գործող իշխանության օր առաջ հեռացումով է պայմանավորված հայրենիքի ու ազգային շահերի առավելագույնը փրկելու հնարավորությունը: Ամեն սթափ մտածող մարդու համար պետք է պարզ լինի, որ եթե ադրբեջանա-թուրքական տանդեմը հնարավոր բոլոր ճանապարհներով, այդ թվում՝ պատերազմի միջոցով, դեռևս չի համարձակվում դիմել Հայաստանի ու Արցախի նկատմամբ իր հավակնությունների իրականացմանը, ապա դա ոչ թե Հայաստանի իշխանությունների, այլ ռուսական պարտադրանքի հետևանք է: Իհարկե, ռուսները ոչ թե մեր գեղեցիկ աչքերի համար, այլ իրենց շահերից ելնելով թույլ չեն տալիս, որ թուրքական եղբայրական դաշինքը Հայաստանից կորզի այնպիսի զիջումներ, որոնցից հետո ռուսական զինվորական ուժերի ու առհասարակ ռուսների ներկայությունը Ադրկովկասում կդառնա անիմաստ: Ռուսները հնարավորինս զսպում են սադրանքների ու ռազմական գործողությունների սանձազերծումը երկրորդ ճակատում, և այս վիճակի պահպանման հնարավորությունը ուղղակիորեն պայմանավորված է ռուսական ուժերի կայուն հաջողություններով ուկրաինական ճակատում: Սրանով հանդերձ՝ անակնկալ և կարճաժամկետ պատերազմի հավանականությունը չի բացառում անգամ Հայաստանի իշխանությունը, որը մինչ այդ տարփողում էր տարածաշրջանում խաղաղության դարաշրջան բացելու իր «մեծ առաքելության» մասին:

Լավ ճանաչելով Հայաստանի այսօրվա իշխանությունների հակազգային, խարդախ բնույթը՝ հավանական է թվում նաև, որ պատերազմի մասին իշխանավորների հնչեցրած ենթադրությունները ունեն հանրային կարծիքը նախապատրաստելու միտում: Չի բացառվում, որ, Արևմուտքի օրհնությամբ կամ առանց դրա, Ադրբեջանը դարձյալ Թուրքիայի աջակցությամբ կայծակնային և լոկալ պատերազմ սկսի անկլավ ճանաչած հայկական բնակավայրերի, ինչպես և միջանցքի հարցը լուծելու համար: Այդ դեպքում Նիկոլ Փաշինյանը դարձյալ հնարավորություն կունենա արդարանալու, որ եթե հող հանձնող լիներ, կհանձներ առանց պատերազմի: Իսկ մինչ այդ, քանի դեռ ռուսներն էլ զբաղված են պատերազմով, ադրբեջանցիներն ու թուրքերը հապճեպորեն դեպի «սեփական խաղադաշտեր» հանդիպումների են քարշ տալիս Հայաստանի պատասխանատու պաշտոնյաներ զբաղեցնող անձանց՝ վստահ լինելով, որ լավ սեղմելու դեպքում սրանց կարելի է պարտադրել ամեն ինչ:

Հայաստանի ու Արցախի առջև ծառացած են ճակատագրական սպառնալիքներ, որոնք ազգային ուժերին պարտադրում են դրությունը փրկելու քայլեր: Այլապես գլխներիս կախված բախտորոշ վերջին պարտությունից հետո, թե՛ ընդդիմության ուշացած քայլերը և թե՛ ինքը՝ ընդդիմությունը, այլևս կկորցնեն իրենց նշանակությունը:

Հայաստանի ու Ադրբեջանի բանակցային դիրքորոշումները

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

2020 թ. 44-օրյա պատերազմի ավարտից անմիջապես հետո Հայաստանն ու Ադրբեջանը վերսկսել են բանակցային գործընթացը, որը կողմերի փոփոխական ակտիվությամբ շարունակվում է մինչ օրս: Ժամանակ առ ժամանակ հակամարտող կողմերի ղեկավարները, կամ միջնորդի դերակատարում ստանձնած երկրների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները հանրությանը տեղեկացնում են, որ այս կամ այն հարցի շուրջ պայմանավորվածություններ են ձեռք բերվել: Եղել են նաև համատեղ հայտարարություններ, կատարվել որոշ պայմանավորվածություններ և այլն: Այսինքն՝ ամեն ինչ վկայում է այն մասին, որ բանակցային գործընթացն իրական է, բուռն, իսկ հաճախ՝ նաև արդյունավետ... Համենայնդեպս՝ ադրբեջանական կողմի համար:

Այս լույսի ներքո արդիական է այն հարցը, թե բանակցային ինչ օրակարգեր ունեն հակամարտող կողմերը, և որքանով են Հայաստանի ու Ադրբեջանի հռչակած ծրագրերը տարբերվում իրենց իրական նպատակադրումներից:

Սկսենք թերևս ամենասկզբից: Ինչպես հայտնի է (տե՛ս «Դրօշակ»-ի 2022 թ. 6-րդ համարում տպագրված իմ հոդվածը), 44-օրյա պատերազմից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև ձևավորվել են բանակցային երկու հարթակներ՝ մոսկովյան և բրյուսելյան: Երկու հարթակներում էլ բանակցող կողմերի օրակարգային հիմնական խնդիրներն են տարածաշրջանային կոմունիկացիաների ապաշրջափակումն ու Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանագծման ու սահմանազատման աշխատանքների իրականացումը: Այս երկու գլխավոր խնդիրներին զուգընթաց քննարկվում են դրանց ստորադասված այլ հարցեր, որոնք հիմնականում ունեն հումանիտար բնույթ՝ ռազմագերիների ու պահվող անձանց վերադարձ, ականապատված տարածքների ականազերծում, հոգևոր և մշակութային ժառանգության պահպանություն, անվտանգային խնդիրներ և այլն:

Թե՛ Մոսկվայում և թե՛ Բրյուսելում Փաշինյանի ու Ալիևի միջև ժամանակ առ ժամանակ որոշ պայմանավորվածություններ են ձեռք բերվում, որոնք հաճախ նաև կյանքի են կոչվում: Սա նշանակում է, որ երկու ձևաչափերն էլ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություններով հանդերձ, ամեն դեպքում աշխատող են: Սակայն կա մի կարևոր խնդիր, այն

է՝ երկու պարագայում էլ օրակարգ թելադրողը ոչ թե հակամարտող կողմերն են, այլ միջնորդները, այսինքն՝ Ռուսաստանն ու Արևմուտքը, որոնք, ի դեպ, պատմական այս ժամանակաշրջանում բավական լուրջ տարաձայնություններ ունեն միմյանց հետ:

Հայաստանն ու Ադրբեջանը ստիպված են շատ հարցերում տեղի տալ Մոսկվայի և Բրյուսելի պահանջներին՝ հընթացս փորձելով նաև՝ ա) խուսանավել աշխարհաքաղաքական երկու կենտրոնների միջև և բ) ամեն դեպքում որոշակի շահաբաժիններ քաղել իրենց պարտադրված բանակցային օրակարգից: Բայց և այնպես, թե՛ Երևանը և թե՛ Բաքուն սեփական ծրագրերն ու երազանքներն ունեն, որոնք կարծես քննարկվում են բացառապես երկկողմ շփումների ընթացքում, այսինքն՝ առանց միջնորդների: Իսկ սա նշանակում է, որ փաստացի կայանում է նաև հայ-ադրբեջանական բանակցությունների երրորդ՝ ուղիղ շփումների ձևաչափը: Թե որքանով են ազդում աշխարհաքաղաքական կենտրոնները Հայաստանի և Ադրբեջանի դիրքորոշումների վրա այդ ձևաչափում, ներկա պահին դժվար է հստակ ասել: Բայց որ նման ազդեցություն կա, կասկած չկա:

Ինչպես հայտնի է, 2022 թ. մարտին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հանրայնացրել է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման իր 5 սկզբունքները, որոնք են՝

- **ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և միմյանց քաղաքական անկախության փոխադարձ ճանաչում,**
- **միմյանց նկատմամբ տարածքային պահանջ-**

ների բացակայության և ապագայում նման պահանջներ չներկայացնելու իրավական պարտավորության փոխադարձ հաստատում,

- զերծ մնալ միջպետական հարաբերություններում միմյանց անվտանգությանը, քաղաքական անկախությանը և տարածքային ամբողջականությանը սպառնացող, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին հակասող այլ գործողություններից,

- սահմանազատում և սահմանագծում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում,

- տրանսպորտային և այլ հաղորդակցությունների բացում, այլ հաղորդակցությունների հաստատում և համագործակցություն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Ուշադիր ընթերցողը, իհարկե, հեշտությամբ կարող է նկատել, որ ադրբեջանական կողմի ներկայացրած 5 առաջարկ-բանաձևումները իրականում լուծում են Ադրբեջանի համար երկու կարևոր խնդիր՝ Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության (ներառյալ Արցախը) ճանաչում ու ՀՀ ինքնիշխան տարածքներին անխոչընդոտ հասանելիություն: Այս կետերը որոշակի առնչություն ունեն Մոսկվայում և Բրյուսելում քննարկվող բանակցային օրակարգերի հետ, բայց հիմքում ադրբեջանական կողմը դնում է հենց վերոնշյալ երկու խնդիրները, որոնք ուղիղ հակասության մեջ են Ռուսաստանի և Արևմուտքի դիրքորոշումների հետ: Աշխարհաքաղաքական երկու կենտրոններն էլ մերժում են թե՛ Արցախի խնդրի վերջնական լուծման և թե՛ ՀՀ տարածքով թուրք-ադրբեջանական այլոց կողմից չվերահսկվող միջանցք ստեղծելու հնարավորությունը: Չնայած դրան՝ ադրբեջանական կողմը պայքարում է վերոնշյալ 5 կետերի կենսագործման համար, որոնք էլ, ըստ էության, արտացոլում են պաշտոնական Բաքվի բանակցային դիրքորոշումը:

Իսկ ինչ է հակադրում սրան հայկական կողմը: Ցավոք, այս հարցի պատասխանը բավական մշուշոտ է: Ադրբեջանի ԱԳՆ-ի կողմից իրենց բանակցային դիրքորոշման հրապարակումից անմիջապես հետո ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը հայտարարել է.

ա) Երկու երկրները, դեռևս 1991 թ. դեկտեմբերի 8-ին ստորագրելով «Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին» համաձայնագիրը, արդեն իսկ ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունը և ընդունել, որ չունեն միմյանց նկատմամբ տարածքային պահանջներ... Մեզ համար ԼՂ հիմնախնդիրը

Բանակցություններ Բրյուսելում

տարածքային հարց չէ, այլ իրավունքների:

բ) 2020 թ. նոյեմբերի 9-ի, 2021 թ. հունվարի 11-ի և 2021 թ. նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարություններով ամրագրված պայմանավորվածությունները պետք է լիարժեքորեն կյանքի կոչվեն, և մենք շարունակում ենք հետևողական լինել այդ հարցում:

Այսպիսով՝ պաշտոնական Երևանի պատասխանի առաջին կետով փաստացի համաձայնություն է տրվել Ադրբեջանի օրակարգի զգալի մասին, իսկ երկրորդ կետով՝ փորձ արվել բանակցային գործընթացն ամեն դեպքում պահելու մոսկովյան ձևաչափում:

Հանրային ճնշումներից հետո հայկական կողմը հայտարարեց, որ, ի պատասխան Ադրբեջանի ներկայացրած 5 առաջարկ-պայմանների, Երևանում մշակվել են 6 կետեր, որոնց համադրմամբ ՀՀ իշխանությունները հույս ունեին որոշակի փոխզիջումների հասնելու Ադրբեջանի հետ:

2022 թ. մայիսի 13-ին ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը հյուրընկալել է Հանրային հեռուստաընկերությանը և հայտնել, որ պաշտոնական Երևանի առաջարկների **առաջին կետում** նշվում է, որ հայկական կողմը պատասխանել է ադրբեջանական կողմի՝ փետրվարի 21-ով թվագրված նամակին, որը հայկական կողմին է փոխանցվել մարտի 11-ին:

Երկրորդ կետով հայկական կողմը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունը երբեք չի ունեցել և չունի տարածքային պահանջներ Ադրբեջանի նկատմամբ:

Երրորդ կետում հայկական կողմը նշում է, որ իր համար հիմնարար են Լեռնային Ղարաբաղի

հայության անվտանգության երաշխավորման, նրա իրավունքների և ազատությունների հարգման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերջնական որոշման հարցերը:

Չորրորդ կետում հայկական կողմը կարևորում է Հայաստանի վարչապետի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի, 2021 թ. հունվարի 11-ի և 2021 թ. նոյեմբերի 26-ի հայտարարություններում ամրագրված պարտավորությունները:

Հինգերորդ կետում նշվում է, որ հայկական կողմը պատրաստ է բանակցություններ սկսելու Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման, միջպետական հարաբերությունների հաստատման համար՝ հիմնվելով ՄԱԿ-ի կանոնադրության, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի» և հելսինկյան եզրափակիչ ակտի վրա:

Վեցերորդ կետով հայկական կողմը հայտնում է, որ համապատասխան բանակցությունների համար Հայաստանը դիմել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին:

Այս ամենը պաշտոնական Երևանի կողմից մինչ օրս ներկայացվում է որպես հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործընթացում Հայաստանի բանակցային դիրքորոշում: Համաձայնեք՝ ներկայացված «կետերից» հատկապես առաջինը ոչ մի կերպ չի կարելի բանակցությունների քննարկման առաջարկ համարել: Երկրորդ «կետով» Հայաստանն ընդունում է Ադրբեջանի «տարածքային ամբողջականությունը»: Երրորդ կետով նշվում է, որ իր համար հիմնարար է Արցախի կարգավիճակի վերջնական որոշման հարցը, բայց որևէ ակնարկ չի արվում այն մասին, որ հայկական երկրորդ պետությունը չպետք է լինի Ադրբեջանի կազմում: Չորրորդ և

Բանակցություններ ադրբեջանական կողմի հետ

Բանակցություններ Մոսկվայում

հինգերորդ «կետերը» կրկին հղում են արդեն իսկ գոյություն ունեցող, մասամբ նաև կյանքի կոչված փաստաթղթերին: Իսկ վեցերորդ «կետը» պարզապես տեղեկացնում է այն մասին, որ Հայաստանը դիմել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ խնդրելով միջնորդ լինել Ադրբեջանի հետ բանակցություններում: Վերջ:

Թե ինչ խնդիր կարող է լուծել հայկական դիվանագիտությունն այսպիսի «բանակցային դիրքորոշմամբ», դժվար է ասել: Նկատենք, որ կողմերը լուրջ հակասություններ ունեն նաև սեփական օրակարգով բանակցություններ վարելու հարթակի ընտրության հարցում: Ինչպես տեսանք, հայկական կողմը ցանկանում է կրկին ասպարեզ բերել ԵԱՀԿ Մինսկի խմբի ինստիտուտը: Նույնն անում է հավաքական Արևմուտքը: Ադրբեջանն ու Ռուսաստանը մերժում են եռանախագահության դերակատարումը, և ներկա պահին այս հարցում կարծես առավել հաջողակ են հենց վերջիններս:

Որպես քաղաքական վերջնանպատակ Հայաստանի իշխանությունները խոսում էին նաև, այսպես կոչված, խաղաղության դարաշրջանի բացման մասին: Սակայն այս հարցում էլ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցները կարծես հիասթափվել են: Համենայնդեպս, ՀՀ գործող վարչապետն այլևս բաց հայտարարում է այն մասին, որ Ադրբեջանը նոր պատերազմ սկսելու հիմքեր է նախապատրաստում, և Հայաստանի ու Արցախի գլխին կրկին ամպեր են կուտակվում: Այս ամենը նշանակում է, որ պաշտոնական Երևանն ինքն էլ չի վստահում իր մարտավարությանն ու դրանից բխող բանակցային դիրքորոշմանը: Սակայն, չնայած դրան, բանակցություններն Ադրբեջանի հետ չեն դադարում: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ բանակցային սեղանին Բաքվի մշակած օրակարգն է՝ հայկական կողմի համար դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ…

Ուկրաինական ճգնաժամն ու Թուրքիայի միջանկյալ դիրքավորումը

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

Դեռևս 2021 թ. տարեվերջին, երբ արդեն իսկ կանխատեսելի էր մի կողմից Ռուսաստան-Ուկրաինա, մյուս կողմից Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների աննախադեպ սրացումը, Թուրքիան փորձեց դիրքավորվել նոր իրավիճակում՝ ակնկալվող զարգացումներում նվազագույնը կորցնելու ու առավելագույնը շահելու սկզբունքի համաձայն: Բանն այն է, որ մի կողմից ՆԱՏՕ-ին անդամակցությունը, Ուկրաինայի հետ բազմավեկտոր համագործակցությունը, մյուս կողմից Ռուսաստանի հետ բազմաշերտ հարաբերություններն Անկարային ընձեռում էին առնվազն սեփական քաղաքական կշիռն ամրապնդելու և ակտիվ դիվանագիտությամբ իրադարձությունների զարգացման տարբեր սցենարներում մանևրելու լայն հնարավորություններ:

Դիվանագիտական գործընթացին Թուրքիան լծվեց հնարավոր ամենաբարձր՝ նախագահ Ռ. Թ. Էրդողանի, ԱԳ նախարար Մ. Չավուշօղլուի, նախագահի գլխավոր խորհրդական Ի. Քալընի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով: Ուկրաինական ճգնաժամը դարձավ Թուրքիայի բարձրագույն իշխանության ներկայացուցիչների տարաբնույթ բանակցային օրակարգերի առանցքային թեմաներից մեկը: 2021 թ. դեկտեմբերից 2022 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում թուրքական կողմի գործուն նախաձեռնողականությամբ գրանցվել են մի քանի տասնյակ հեռախոսազրույցներ, այցելություններ, քննարկումներ՝ միտված ճգնաժամի ռազմական փուլի կանխմանը, և այդ ամենը, անշուշտ, Անկարայի միջնորդական ջանքերի ընդգծման համատեքստում:

Գլոբալ հակամարտությունից, սակայն, խուսափել այդպես էլ չհաջողվեց. Ռուսաստանը փետրվարի 24-ին Ուկրաինայում սկսեց «հատուկ ռազմական գործողություն»: Ռուս-ուկրաինական բախումը, ինչպես և կանխատեսվում էր, բացառապես երկկողմ հակամարտություն չէ: Այն գործող աշխարհակարգի և իրավակարգի փոփոխությանը միտված լրջագույն դիմակայություն է, ռուս-ուկրաինական ռազմաքաղաքական ընդհարմանը զուգահեռ՝ նաև Ռուսաստան-Արևմուտք բազմաշերտ հակամարտություն, որն ընդգրկում է միաժամանակ քաղաքական-դիվանագիտական, իրավական, ֆինանսատնտեսական, հումանիտար և այլ հարթություններ: Ռուսաստանին «պատժելու» Արևմուտքի ռազմավարությունը ենթադրում էր ոչ միայն համակողմանի ուղիղ աջակցության ցուցաբերում Ուկրաինային, այլև քաղաքական, տնտեսական բազմաշերտ պատժամիջոցների կիրառմամբ Ռուսաստանի ռազմավարական մեկուսացման քաղաքականության իրականացում, այսինքն՝ Ռուսաստանի բացարձակ մեկուսացում,

ազդեցության չեզոքացում՝ աշխարհում եղած տարաբնույթ հիմնախնդիրներում «ազդեցիկ խոսքի» հնարավորությունից զրկելու վերջնարդյունքով: Այս նպատակների իրականացման համար Արևմուտքը առաջնորդվում է Ռուսաստանի դեմ դաշնակից-համախոհների հնարավորինս լայն ճամբար ձևավորելու տրամաբանությամբ:

Արևմուտքի տվյալ ռազմավարության համաձայն՝ հակառուսական ճամբարում ներգրավված յուրաքանչյուր դերակատար միանշանակորեն և առանց երկընտրանքի պետք է միանա Ուկրաինային համակողմանի աջակցություն ցուցաբերելու և Ռուսաստանի դեմ բազմաբայլ ու բազմոլորտ պատժամիջոցների քաղաքականությանը: Արևմուտքի նման դիրքավորումն օբյեկտիվորեն ենթադրում էր Մոսկվայի պատասխան քաղաքականությունն ու քայլերը:

Աշխարհաքաղաքական նման լարվածության պայմաններում զգալիորեն տուժելու էին հատկապես այն երկրները, որոնք շատ ավելի սերտաճած քաղաքական, տնտեսական կապեր, կամ կախվածություն ունեին Ռուսաստանից: Այս տեսանկյունից առավել զգայուն էին հատկապես Ռուսաստանին հարևան, բայց նաև արևմտյան դաշինքներում ընդգրկված խաղացողները, այդ թվում՝ Թուրքիան: Հետևաբար նման պայմաններում Անկարայի համար օրակարգային խնդիր էր այնպիսի դիրքավորման ընտրությունը, որը թույլ կտար հնարավորինս քիչ տուժել աշխարհաքաղաքական բարդագույն իրավիճակում, ավելին՝ նաև օգտվել կանխատեսվող զարգացումներից:

Այս համատեքստում ուկրաինական ճգնաժամում Թուրքիայի դիրքավորման հիմքում կարելի է դիտարկել հետևյալ պայմանական նպատակները, որոնց առարկայացումը հնարավոր է ապահովել «մարտահրավերները որպես հնարավորություն» գնահատելու միջոցով.

1. Հնարավորինս խուսափել ճգնաժամի տնտեսա-

կան և քաղաքական հետևանքներից: Դիրքավորվել այնպես, որ մի կողմից Թուրքիա-Արևմուտք, մյուս կողմից Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունները տուժեն նվազագույն չափով:

2. Ուկրաինական ճգնաժամի խորացմանը զուգահեռ՝ փորձել հընթացս օգուտներ քաղել՝ մանևրելով հակամարտ ճամբարների միջև: Ճգնաժամի ընթացքում բացված հնարավորություններն օգտագործել սեփական խնդիրները լուծելու, շահերն առաջ մղելու բազմակողմանի քաղաքական առևտրում:

3. Նույն համատեքստում բարելավել արևմտյան գործընկերների հետ ոչ այնքան հարթ հարաբերությունները, ինչպես նաև, օգտվելով Մոսկվայի ռազմավարական թուլացումից, բարելավել սեփական դիրքերն այն տարածաշրջաններում, որոնցում կողմերը հանդես են գալիս իբրև մրցակից-գործընկերներ:

Թուրքիայի միջնորդական դիրքավորումը

Վերոնշյալ սկզբունքների վրա հիմնվելով՝ ճգնաժամի հենց սկզբնական փուլում Թուրքիան դիրքավորվեց որպես միջնորդ դերակատար, որպես եզակի ընդունելի խաղացող, որը հակամարտության բոլոր մասնակիցների հետ ունի երկկողմ խոր հարաբերություններ և անհրաժեշտության դեպքում ունակ է վերածվելու բանակցային կարևոր հարթակի կամ իրականացնելու այլ միջնորդական գործառույթներ: Անկարայի այս քաղաքական ուղեգիծը պայմանականորեն ձևակերպվեց՝ որպես «հավասարակշռման» քաղաքականություն: Ընդ որում, կարևոր է արձանագրել, որ Անկարայի միջնորդական դերակատարումը, պայմանավորված ճգնաժամի ընթացքով, գրանցել է նաև իրավիճակային համապատասխան կերպափոխումներ՝ միտված լինելով նախ հրադադարի հաստատմանը, ապա՝ հումանիտար և պարենային խնդիրների լուծման ուղղությամբ ջանքերի գործադրմանը:

Նման դիրքորոշման որդեգրումը չափազանց կարևոր էր Թուրքիայում գործող վարչակարգի համար ոչ միայն սեփական աշխարհաքաղաքական հավակնությունների իրացման, այլև նախանշված ներքաղաքական բարդ գործընթացներին (2023 թ. համապետական ընտրություններ) նախապատրաստվելու տեսանկյունից: Ընդ որում, այդ մոտեցման հաջողումը կարևոր էր երկրի հնարավոր դիվանագիտական ձեռքբերումները ներքին քարոզչության համար կիրառելու և, որ ամենակարևորն է, երկրի տնտեսությունը կոլապսից փրկելու տեսանկյունից: Բանն այն է, որ շուրջ մեկ տարի տոկոսադրույքների նվազեցման Էրդողանի քաղաքականության հետևանքով Թուրքիայի տնտեսությունը հայտնվել է բարդագույն իրավիճակում: «Տոկոսադրույքը պատճառ է, գնաճը՝ հետևանք» թեզի շրջանակում հռչակված տնտեսական նոր մոդելի կիրառման, դրա պատճառով 2021 թ. ցուցանիշներով թուրքական լիրայի աննախադեպ արժեզրկման հետևանքով արձանագրվել է վերջին 20 տարվա ամենախոր ու շարունակ խորացող տնտեսական ճգնաժամը: Ընդ որում, Էրդողանի վարչակարգի յուրօրինակ դրամավարկային քաղաքականության հետևանքով լիրան նաև միջազգային դափնիներ ձեռք բերեց՝ դառնալով աշխարհում ամենից շատ արժեզրկված դրամական միավորը: Այսպես, Թուրքիայի կենտրոնական բանկի տվյալներով, 2021 թ. մեկ տարվա կտրվածքով դոլարի նկատմամբ լիրայի արժեզրկումը կազմել է 75%[1]: Իսկ ըստ երկրի վիճակագրական ծառայության տեղեկատվության՝ նույն ժամանակահատվածում սպառողների համար գնաճը տարվա կտրվածքով կազմել է 36.08 %, ներքին արտադրողների համար՝ 79.89 %[2]:

Հետևաբար նաև ներքին լրջագույն ցնցումներից խուսափելու նպատակով վերոնշյալ սկզբունքների համատեքստում ռուսական գործողության մեկնարկից անմիջապես հետո՝ փետրվարի 24-ին, «միաժամանակ երկու լարի վրա խաղալու տրամաբանությամբ» Էրդողանն այն գնահատեց որպես «միջազգային իրավունքին հակասող քայլ, միջազգային խաղաղությանը և կայունությանը հասցված ծանր հարված»[3]: Նա հայտարարեց, որ Թուրքիան աջակցում է իր տարածքային ամբողջականությունը պահպանելու համար Ուկրաինայի պայքարին՝ զուգահեռաբար ընդգծելով, որ Անկարան ցանկանում է, որ խնդիրները լուծվեն Մինսկի համաձայնագրերի շրջանակներում, ինչի մասին հայտնել էր ՌԴ նախագահ Վ. Պուտինին: Իսկ «Ռուսաստանի՝ Ուկրաինայի դեմ սկսած ռազմագործողության» վերաբերյալ Թուրքիայի ԱԳՆ-ի տարածած հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր. «ՌԴ ԶՈՒ-երի՝ Ուկրաինայի դեմ սկսած ռազմական գործողությունն անընդունելի ենք համարում և մերժում: Այս հարձակումը ոչ միայն անվավեր է դարձնում Մինսկի համաձայնագրերը, այլև միջազգային իրավունքի կոպիտ խախտում է և լուրջ սպառնալիք է ներկայացնում մեր տարածաշրջանի ու աշխարհի անվտանգության համար: Թուրքիան, որ հավատում է երկրների տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը հարգելու անհրաժեշտությանը, դեմ է զենքով սահմանները փոխելուն: Ռուսաստանին էլ կոչ ենք անում այս անօրինական գործողությունը վայրկյան առաջ դադարեցնելու: Ուկրաինայի քաղաքական միասնությանը, ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը մեր աջակցությունը շարունակվելու է»[4]:

Զուգահեռաբար Թուրքիան, ի պատասխան ուկրաինական կողմի դիմումի, ԱԳ նախարար Մ. Չավուշօղլուի շուրթերով հայտարարեց Մոնտրյոյի կոնվենցիայի դրույթների կիրառման և Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները ռազմական նշանակության նավերի համար փակելու հնարավորության մասին, եթե իրավական առումով ընդունեն պատերազմական վիճակի գոյությունը[5]: Իսկ արդեն փետրվարի 28-ին տեղի ունեցած կառավարության նիստից հետո Չավուշօղլուն հայտարարեց, որ Թուրքիան որոշել է կիրառել Մոնտրյոյի համաձայնագրի այն դրույթը, ըստ

որի՝ այն դեպքերում, երբ Թուրքիան պատերազմի կողմ չէ, լիազորություն ունի պատերազմի մասնակից երկրների նավերին թույլ չտալու անցնել նեղուցներով: Նա նաև հիշեցրեց, որ, ըստ Մոնտրյոյի համաձայնագրի, եթե նավերը վերադառնում են Սև ծովում գտնվող իրենց բազաներ, ապա դրանց անցումը նեղուցներով չի խոչընդոտվում[6]:

Բացի նշվածից՝ թուրքական ուղեգծի շրջանակում էին նաև միջազգային կառույցներում հակառուսական դիրքորոշման անթաքույց արտահայտումը, որը դրսևորվեց հատկապես ՄԱԿ-ի ԳԱ-ում տեղի ունեցած քվեարկությունների ընթացքում, և հումանիտար օգնության պարբերական ցուցաբերումն ու սպառազինության, մասնավորապես՝ տարաբնույթ ԱԹՍ-ների անխափան նվիրատվություն-վաճառքն Ուկրաինային:

Միևնույն ժամանակ Թուրքիան, հատկապես ճգնաժամի տնտեսական ծանր հետևանքներից խուսափելու և Մոսկվայի դեմ արևմտյան պատժամիջոցներին միանալուց հրաժարվելու քայլը հիմնավորելու նպատակով, հետևողականորեն հիմքեր էր ստեղծում հակամարտ կողմերի միջև սեփական միջնորդական ուղեգիծն առաջ մղելու համար: Այսպես՝ փետրվարի 28-ին Էրդողանը հայտարարեց. «Թուրքիան կատարել և կատարելու է ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի ու ԵՄ-ի և այլ կազմակերպությունների ու դաշինքների շրջանակներում իր պարտավորությունները: Մենք, անշուշտ, մեր ազգային շահերի հարցում զիջումներ չենք անելու: Տարածաշրջանային ու միջազգային հավասարակշռությունն էլ չենք անտեսելու: Դրա համար ո՛չ Ուկրաինայից ենք հրաժարվելու, ո՛չ էլ Ռուսաստանից»[7]: Նույն թեզը զարգացրեց նաև Չավուշօղլուն՝ ընդգծելով. «Առաջնայինն այս պահին զինադադար հաստատելն է, քանի որ ոչ մի արդյունք չի ստացվի, քանի դեռ բախումները և ռմբակոծությունները շարունակվում են: Իհարկե, մենք ՆԱՏՕ-ի անդամ ենք և ՆԱՏՕ-ի որոշումներին հետևում ենք, դրանցում մեր ներդրումն ենք ունենում: Թուրքիան սկզբունքային դիրքորոշում է հանդես բերում: Չնայած տեսակետների տարբերությանը՝ մի երկիր ենք, որ երկու երկրի հետ էլ զարգացնում է իր համագործակցությունը: Մենք ստիպված չենք պատերազմի ժամանակ որևէ մեկի կողմն ընդունել: Ընդհակառակը՝ մենք մի երկիր ենք, որ պատերազմի դադարեցման հարցում կարող է երկու կողմի հետ էլ հավասարապես երկխոսություն հաստատել: Մենք որևէ կողմին պաշտպանելու շքեղություն մեզ չենք կարող թույլ տալ....»[8]:

Նույն անդրադարձում Չավուշօղլուն շոշափել է նաև Անկարայի համար հանգուցային՝ երկկողմ պատժամիջոցների կիրառման խնդիրը՝ նշելով, որ Թուրքիան ուսումնասիրում է այլ երկրների կողմից Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցները՝ հասկանալու, թե դրանք ինչպես կանդրադառնան սեփական տնտեսության և էներգետիկ անվտանգության վրա: Իսկ Անկարայի՝ Ռուսաստանի դեմ հնարավոր պատժամիջոցներ սահմանելու վերաբերյալ նշել է, որ Թուրքիան սկզբունքորեն չի մասնակցել պատժամիջոցներին և հակված էլ չէ մասնակցելու:

Պաշտոնական Անկարայի նման հրապարակային ուղերձներին զուգահեռ՝ թուրք պաշտոնյաներն ակտիվ հեռախոսազրույցներ և բանակցություններ էին վարում ինչպես հակամարտ կողմերի իրենց պաշտոնակիցների, այնպես էլ այլ շահագրգիռ դերակատարների ներկայացուցիչների հետ:

Միջնորդական ուղեգծի առաջմղման հարթությունում Անկարայի արձանագրած լրջագույն հաջողությունը մարտի 11-13-ը կայացած Անթալիայի միջազգային դիվանագիտական ֆորումի շրջանակներում Ռուսաստանի և Ուկրաինայի ԱԳ նախարարներ Ս. Լավրովի և Դ. Կուլեբայի հանդիպման կազմակերպումն էր՝ Չավուշօղլուի անմիջական մասնակցությամբ: Ընդ որում, հարկ է փաստել, որ ուկրաինական ճգնաժամի մեկնարկից ի վեր սա հակամարտ կողմերի միջև կայացած ամենաբարձր մակարդակի հանդիպումն էր:

Անթալիայում արձանագրված հաջողությունն ամրապնդելու նպատակով Թուրքիայի ԱԳ նախարարն անմիջապես այցելեց նախ Մոսկվա, ապա՝ Լվով՝ բարձր մակարդակի բանակցությունների շարունակականությունն ապահովելու և սեփական միջնորդական դերակատարումն ավելի ընդգծելու համար:

Հրադադարի հաստատման առումով թուրքական միջնորդական վերջին հաջողությունն արձանագրվեց մարտի 29-ին՝ պայմանավորված Ստամբուլի Դոլմաբահչե նախագահական պալատում Ռուսաստանի և Ուկրաինայի պատվիրակությունների միջև բանակցությունների անցկացմամբ: Ընդ որում, հանդիպումից առաջ պատվիրակություններին ողջունեց Թուրքիայի նախագահը՝ հայտարարելով, որ շատ գոհ են բանակցությունների համար նրանց հյուրընկալելու և խաղաղության հաստատման ճանապարհին ներդրում ունենալու համար[9]:

Ըստ էության, ստամբուլյան հանդիպումը հրադադարի հաստատմանը միտված հակամարտ կողմերի միջև բանակցային վերջին առարկայական շրջափուլն էր: Այս ուղղությամբ հետագա միջնորդությունը կորցրեց իր արդյունավետությունը՝ պայմանավորված ուկրաինական ճգնաժամի խորացման իրողությամբ: Մինչդեռ քանի որ Թուրքիայի համար չափազանց կարևոր էր սեփական դիրքավորման պահպանումը, ուստի Անկարան ձեռնամուխ եղավ հակամարտության ընթացքում ծագող կամ այլ մասշտաբային խնդիրների լուծմանը: Դրանք հիմնականում հումանիտար բնույթի խնդիրներ էին: Այս համատեքստում հատկապես կարևոր էր պարենային՝ Ուկրաինայից հացահատիկային մատակարարումներին առնչվող ճգնաժամի համակարգումը: Եվ Անկարան հակամարտ կողմերի ու միջազգային կառույցների հետ համագործակցությամբ սեփական դիվանագիտական օրակարգ ներառեց նաև այս խնդիրը:

Արդեն ապրիլի 24-ին Պուտինի հետ ունեցած

հեռախոսազրույցի ընթացքում Թուրքիայի նախագահը շեշտեց հրադադարի հաստատման, հումանիտար միջանցքների բացման ու տարհանումների անվտանգ իրականացման կարևորությունը՝ հայտնելով, որ Թուրքիան կշարունակի ջանքեր գործադրել բոլորին վնասող այս զարգացումների դադարեցման ու տևական խաղաղության հաստատման հարցում[10]: Իսկ մայիսի 19-ին նշվող երիտասարդության և սպորտի տոնի կապակցությամբ ունեցած ելույթում Էրդողանը հայտարարեց, որ Ուկրաինայի հետ էլ համագործակցում են գյուղատնտեսության, մասնավորապես՝ սննդամթերքի և հացահատիկի արտադրության ոլորտում[11]:

Հունիսի 3-ին Չավուշօղլուն աշխարհում պարենային անվտանգության հարցի առնչությամբ ընդգծել է. «Աշխարհում հացահատիկի 1/3-ն Ուկրաինան և Ռուսաստանն են արտադրում: Հիմա հացահատիկի արտահանման համար եղած խոչընդոտները վերացնելու հարցում առանցքային երկիրը Թուրքիան է: Միջանցքը կբացվի, տարածքը կականազերծվի, Ռուսաստանն իր ռազմանավերն այդտեղ չի մտցնի, հացահատիկ տեղափոխող նավերն էլ Ուկրաինա զենք չեն տանի: Շատ մանրամասնություններ կան, որոնց մասին մեր նախագահն անընդհատ խոսում է Պուտինի և Զելենսկու հետ»[12]:

Տվյալ խնդրի կարևորությունն ընդգծվում է հատկապես այն դեպքերում, երբ Ուկրաինայի իշխանությունները մեղադրում են Ռուսաստանին շուրջ 400 հազար տոննա ուկրաինական հացահատիկը «գողանալու», նաև Սև ծովով այլ շուկաներ արտահանելու մեջ[13]: Եվ այս հարցում վերահսկողական հատուկ դերակատարում է վերապահվում Թուրքիային:

Դիվանագիտական այս ուղղությամբ ձեռք բերած հնարավորությունները զարգացնելու համար Թուրքիայի իշխանությունները փորձում են նախաձեռնել բանակցային հերթական շրջափուլը՝ ներգրավելով նաև ՄԱԿ-ին: Այս հարցի առնչությամբ Չավուշօղլուն հունիսի 20-ին մասնավորապես հայտարարել էր. «Թուրքիան կառուցողական դեր է ստանձնում Սև ծովում «հացահատիկի միջանցքի» համար: Ստամբուլում Ռուսաստանի ծրագրած հանդիպմանը դրական պատասխան ենք տալիս: Մենք դեմ ենք նաև Ռուսաստանի կամ որևէ այլ երկրի կողմից ուկրաինական հացահատիկի կամ որևէ այլ ապրանքի ապօրինի վաճառքին: Որպես Թուրքիա՝ մենք նույնպես թույլ չենք տա, որ այն մեզ մոտ գա»[14]: Նա նաև հավելել էր, որ եթե Ստամբուլում համաձայնություն ձեռք բերվի, ապա կառավարման կենտրոն և Ուկրաինայի տարածքային ջրերից դուրս անվտանգության գոտի կստեղծվեն: Ավելին, այս ուղղությամբ միջնորդության համակարգումն իր անմիջական հսկողության տակ է վերցրել Էրդողանը, ով հուլիսի 11-ին նախաձեռնած հեռախոսազրույցների ընթացքում հարցը քննարկել է նախ Ռուսաստանի, ապա՝ Ուկրաինայի նախագահների հետ[15]:

Ռուս-ուկրաինական հակամարտություն

Քրդական խաղաքարտի գործարկումը

Ուկրաինական ճգնաժամի և դրան զուգահեռ՝ Ռուսաստան-Արևմուտք դիմակայության խորացման տրամաբանությամբ հընթացս ծագած խնդիր-հնարավորությունները Թուրքիան առայժմ կարողանում է օգտագործել սեփական շահերն առաջ մղելու համար: Այս համատեքստում Անկարայի համար բավականաչափ կարևոր հաղթաթղթեր ստեղծվեցին ապրիլի կեսերին՝ պայմանավորված Շվեդիայի և Ֆինլանդիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու որոշմամբ: Վերջինները կառույցին անդամակցելու գործընթացի մեկնարկը նախատեսում էին հունիսի վերջին՝ Մադրիդում նախանշված գագաթնաժողովի ընթացքում: Հարցին անմիջապես արձագանքեց Անկարան՝ հայտարարելով սկանդինավյան երկրների անդամակցության հարցում վետոյի կիրառման հնարավորության մասին: Թուրքիայի նման դիրքավորումը միտված էր նախ և առաջ Շվեդիայի և Ֆինլանդիայի հետ քրդական և ներքաղաքական հիմնախնդիրներով պայմանավորված խորքային տարաձայնությունները հարթելուն՝ վերջիններից հստակ քայլեր ակնկալելով: Մյուս կողմից՝ Անկարան կարողացավ այս հարցը վերածել նաև Արևմուտքի և Ռուսաստանի հետ քաղաքական բազմաշերտ սակարկությունների գործիքի: Հաշվի առնելով ընդհանուր գործընթացի ռազմավարական կարևորությունը՝ բոլոր շահառու դերակատարներն էլ դիրքավորվեցին Անկարայի առաջարկած «առևտրում»: Նման մոտեցումը թուրքական իշխանությունները փաթեթավորեցին սկանդինավյան երկրների կողմից Թուրքիայում ահաբեկչական ճանաչված «Քրդական բանվորական կուսակցության» (ՔԲԿ), դրա սիրիական ճյուղավորման՝ «Սիրիական ժողովրդավարական միության» զինյալներին, ինչպես նաև Էրդողանի վարչակարգին ընդդիմադիր կառույցներին շարունակական աջակցության հանգամանքով: Այս համատեքստում Մադրիդի գագաթնաժողովին ընդառաջ՝ հունիսի սկզբին, թուրքական կողմը հրապարակեց սկանդինավյան երկրներին ուղղված 10 պահանջները.

1. Երկու երկրները պետք է աջակցեն ահաբեկչական կազմակերպություններ PKK-ի,

DHKP-C-ի («Հեղափոխական ժողովրդական ազատագրական կուսակցություն-ճակատ»), DEAŞ-ի, FETÖ-ի և դրանց ճյուղավորումների դեմ Թուրքիայի պայքարին:

2. Ահաբեկչական կազմակերպություններին պաշտպանող Շվեդիան և Ֆինլանդիան ահաբեկչության դեմ պայքարի համար պետք է իրավական կարգավորումներ և օրենսդրական ենթակառուցվածքներ ձևավորեն:

3. Պետք է փակեն ՔԲԿ ճյուղավորումներին պատկանող ներկայացուցչությունները և թույլ չտան նորերի բացումը:

4. Պետք է արգելեն գյուլենականների գործունեությունը և փակեն նրանց հարող կայքերն ու մեդիա կառույցները:

5. Պետք է բավարարեն Թուրքիայի պահանջները, որոնք վերաբերում են արտահանձնմանը, ունեցվածքի/ֆինանսական միջոցների սառեցմանը և ահաբեկչությանը հարող կազմակերպությունների փակմանը:

6. Շվեդիայում և Ֆինլանդիայում գտնվող ահաբեկչության հետ կապ ունեցող անձինք պետք է արտաքսվեն կամ արտահանձնվեն:

7. Չպետք է թույլատրվի PKK-ի և DHKP-C-ի նման ահաբեկչական կազմակերպությունների դրոշներով ցույցերի կազմակերպումը:

8. Շվեդիան և Ֆինլանդիան պետք է Թուրքիայի հետ հետախուզական տվյալներ փոխանակեն:

9. Երկու երկրները պետք է չեղարկեն Թուրքիայի դեմ պաշտպանական արդյունաբերության ոլորտում կիրառվող սահմանափակումները:

10. Շվեդիան և Ֆինլանդիան ՆԱՏՕ-ի անդամ դառնալու դեպքում այս պարտավորություններ պետք է կատարեն[16]:

Քրդական խնդրի ակտիվացմանը զուգահեռ՝ Անկարան կրկին օրակարգ բերեց Սիրիայի հյուսիսում քրդական խմբավորումների դեմ նոր ռազմագործողություն նախաձեռնելու հնարավորությունը՝ 2016 թ.-ից նույն հատվածում իրականացված 3 գործողությունների հետևանքով հիմնած սահմանային անվտանգային գոտին ընդլայնելու նպատակով: Թուրքիան այս անգամ ընտրեց հատկապես լոգիստիկ առումով զգալի նշանակություն ունեցող Թալ Ռիֆաաթ և Մանբիջ շրջանները: Դրանց նկատմամբ վերահսկողության փորձը գետնի վրա բախումների հնարավորություն էր ստեղծելու քրդական կառույցների և սիրիական բանակի, իսկ քաղաքական հարթությունում՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի հետ: Հարկ է նշել, որ ծրագրված ռազմագործողությունը Թուրքիայի համար չափազանց կարևոր է Սիրիայի հյուսիսում՝ Եփրատ գետից արևմուտք ընկած հատվածում, թուրքական վերահսկողության գոտին ամբողջացնելու տեսանկյունից: Կառավարության մայիսի 23-ի նիստի ավարտին ունեցած ելույթում Էրդողանը հայտարարեց. «Առաջիկայում մենք կսկսենք նոր քայլեր ձեռնարկել մեր հարավային սահմանների երկայնքով 30 կիլոմետր խորությամբ կիսատ մնացած հատվածներում անվտանգության գոտիներ ստեղծելու նպատակով: Մեր գործողության համար առաջնահերթ են լինելու այն տարածքները, որոնք մեր երկրի ու մեր հիմնած անվտանգության գոտիների վրա հաճախակի իրականացվող հարձակումների, ոտնձգությունների ու թակարդների կենտրոն են: Աստծո կամքով, այս գործողությունները կսկսեն հենց մեր թուրքական զինված ուժերը, երբ հետախուզությունն ու ոստիկանությունն ավարտեն իրենց նախապատրաստական աշխատանքները»[17]:

Հաջորդիվ թուրքական իշխանության տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ նախագահի գլխավորությամբ նախաձեռնեցին ակտիվ բանակցություններ՝ միաժամանակ մի քանի ուղղություններով: Այսպես՝ Էրդողանի գլխավոր խորհրդական և խոսնակ Ի. Քալընը հարցը քննարկեց ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ հեռախոսազրույցում[18], Էրդողանը՝ Պուտինի հետ հեռախոսային բանակցություններում[19] և այլն: Բացի այդ՝ թուրքական ղեկավարությունն այս հարցը ևս վերածեց հրապարակային քաղաքականության թեմայի՝ տարբեր առիթներով շեշտադրելով, թե իբր Անկարան նման գործողություն իրականացնելու համար ազատ է, որևէ մեկի թույլտվության կարիքը չունի և այլն:

Քրդական խնդրի առնչությամբ թուրքական կողմից հրահրված քաղաքական սակարկությունների խճանկարը ենթադրում էր պայմանավորվածությունների հետևյալ պայմանական սցենարները: Բնականաբար, Անկարայի շահերից առավելապես բխում էր Արևմուտքի հետ համաձայնությունը, որը ենթադրում էր մի կողմից սկանդինավյան երկրների կողմից թուրքական պահանջների կատարում, դրան ի պատասխան՝ ՆԱՏՕ-ին նրանց անդամակցության հարցում վետոյի կիրառումից հրաժարում և, իհարկե, որպես կողմնակի արդյունք՝ Թուրքիա-ԱՄՆ, Թուրքիա-ԵՄ խնդրահարույց հարաբերությունների ջերմացում, ամերիկյան կողմից հատկապես ռազմական ոլորտում մի շարք կարևոր համագործակցությունների վերականգնում:

Զարգացումների մյուս տարբերակն արդեն հանգեցնելու էր Թուրքիա-Ռուսաստան համաձայնությանը, որը կարող էր տեղի ունենալ առաջին սցենարի տապալման պայմաններում: Դրա շրջանակներում Թուրքիան արգելափակելու էր Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցությունը դաշինքին, իսկ Ռուսաստանն արտոնելու էր թուրքական սահմանափակ գործողությունը Սիրիայի հյուսիսում, չէր խոչընդոտելու թուրքական դիրքերի ամրապնդումն ինչպես արաբական երկրի այլ հատվածներում, այնպես էլ գուցե այլ տարածաշրջաններում:

Բայց և այնպես, հատկապես Արևմուտքի համակողմանի ակտիվ ջանքերով զարգացումներն ընթացան առաջին սցենարով:

Հունիսի 28-29-ը Մադրիդում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի շրջանակում կայացած հանդիպումից հետո Թուրքիան համաձայնեց աջակցել կառույցին Շվեդիայի ու Ֆինլանդիայի անդամակցության գործընթացի մեկնարկին: Բանակցություններից հետո ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը հայտարարեց. «Ուրախ եմ տեղեկացնել, որ մենք համաձայնության եկանք: Այն Ֆինլանդիայի և Շվեդիայի համար ճանապարհ է բացում դեպի ՆԱՏՕ: Թուրքիան, Ֆինլանդիան և Շվեդիան համատեղ հայտարարություն են ստորագրել, որում հաշվի են առնվում Թուրքիայի շահերն ու մտահոգությունները՝ ներառյալ զենքի արտահանումը և ահաբեկչության դեմ պայքարը»[20]:

10 կետից կազմված եռակողմ հայտարարությամբ, ըստ էության, բավարարվում էին սկանդինավյան երկրներին ուղղված Թուրքիայի վերոնշյալ պահանջները:

Մադրիդյան պայմանավորվածությունից հետո, պայմանավորված ռուսական կողմի դիրքորոշման կոշտացմամբ, բնականաբար, առժամանակ հետաձգվեց Սիրիայում թուրքական ծրագրված ռազմագործողությունը: Հարցի առնչությամբ հուլիսի 4-ին Չավուշօղլուն հայտարարեց. «Ֆինլանդիան և Շվեդիան ստիպված են հավատարիմ մնալ այդ փաստաթղթին: Եթե հավատարիմ չմնան, մենք նրանց չենք ընդունի ՆԱՏՕ»[21]: Իր խոսքում Թուրքիայի արտգործնախարարը նաև ակնարկեց Սիրիայում ռազմագործողության հետաձգման մասին. «Մենք պայմանավորվածություններ ունեինք նաև ԱՄՆ-ի և Ռուսաստանի հետ: Նրանք պատրաստվում էին այդ ահաբեկիչներին քաշելու 30 կիլոմետր հարավ, բայց չարեցին: Վերջերս ահաբեկչական կառույցն ավելացրել է ոտնձգությունները Սիրիայի ներսում և նաև Սիրիայից դեպի մեր տարածքներ: Մեր հարցերն ինքներս ենք լուծելու և մաքրելու ենք: Եթե այդ երկրները տեր չկանգնեն իրենց խոսքին, մենք էլ կանենք մեր համապատասխան քայլերը: Թուրքիան, երբ դեմ հանդիման է դուրս գալիս վտանգին, հաշվի չի առնում, թե ով որտեղ է գտնվում, անում է այն, ինչ պետք է ու վերացնում է»[22]:

Ռուսաստանի և Ուկրաինայի արտգործնախարարների հանդիպումը Թուրքիայում՝ միջնորդ կողմի նախաձեռնությամբ

Թուրքիայի դիրքավորումն այլ տարածաշրջաններում

Ուկրաինական ճգնաժամին համընթաց՝ Անկարան շարունակում է համապատասխան քաղաքական քայլերը հետաքրքրություն ներկայացնող մի շարք տարածաշրջաններում: Ընդ որում, այս ուղղությամբ ևս թուրքական կողմն առաջնորդվում է ստեղծված իրավիճակում առավելագույնս շահելու սկզբունքով: Այսպես՝ դեռևս 2021 թ. սկզբից նախաձեռնված «կարգավորման» քաղաքականության շրջանակներում Անկարան ընդգծված նախաձեռնողականությամբ շարունակում է Մերձավոր Արևելքի մի շարք առանցքային դերակատարների հետ հարաբերությունների կարգավորմանը միտված նպատակային քայլերը: Այս համատեքստում շոշափելի տեղաշարժեր են արձանագրվել Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ-ի հետ հարաբերություններում, փորձ է արվում առաջ մղելու Իսրայելի հետ ընթացիկ տարվա սկզբին մեկնարկած բաց երկխոսությունը, ինչպես նաև հասնելու Եգիպտոսի հետ արդյունավետ շփումների մեխանիզմի ձևավորման:

Ի տարբերություն Մերձավոր Արևելքի՝ արևելամիջերկրածովյան տարածաշրջանում Հունաստանի և Կիպրոսի հետ հարաբերություններում Անկարան կրկին կոշտացրել է իր դիրքորոշումը, սրել հռետորաբանությունը՝ փորձելով ԱՄՆ-ի հետ ՆԱՏՕ-ի շրջանակներում հարաբերությունների բարելավման միտումն օգտագործել նաև այս տարածաշրջանում սեփական շահերն առաջ մղելու նպատակով: Այս ուղղությամբ ռազմաքաղաքական հարթությունում վերջին լուրջ սրացումը գրանցվել էր 2020 թ. ընթացքում: Այդ ժամանակ ԵՄ պատժամիջոցների սպառնալիքի ճնշմամբ Անկարան փոխեց մարտավարությունը, և խնդիրները տեղափոխվեցին բանակցային հարթություն: Ներկայումս հենց թուրքական կողմի հրահրմամբ իրավիճակը կրկին սրվել է: Անկարան դարձյալ օրակարգ է վերադարձրել Էգեյան ծովում հունական կղզիների ռազմականացման խնդիրը՝ սպառնալով վիճարկել դրանց նկատմամբ հունական ինքնիշխանության հարցը:

Թուրքիայի շահերի գոտի հանդիսացող մեկ այլ տարածաշրջանում՝ Հարավային Կովկասում, նկատվում է Անկարայի քաղաքականության ակնհայտ պասիվություն: Մասնավորապես, ուկրաինական ճգնաժամի ակտիվ փուլի մեկնարկից հետո Թուրքիայի արտաքին քաղաքական ուղեգծի առաջնահերթություններում հետին պլան են մղվել այս տարածաշրջանի խնդիրները: Վերոնշյալ

Թուրքիան համաձայնվում է ՆԱՏՕ-ին Շվեդիայի ու Ֆինլանդիայի անդամակցության առաջարկի հետ

տեսակետի օգտին է խոսում ինչպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի տեմպի դանդաղեցման իրողությունը, այնպես էլ մինչև ճգնաժամը նաև Թուրքիայի կողմից ակտիվորեն առաջ մղվող «3+3» ձևաչափի նախաձեռնման ուղղությամբ ակտիվ քայլերի բացակայությունը: Թուրքական հարավկովկասյան օրակարգի այս միջանկյալ մարտավարությունը, ամենայն հավանականությամբ, հաշվարկվում է ուկրաինական հակամարտության խորացման պայմաններում նաև այս տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացման հնարավորությամբ, որը, ինչպես ապացուցված է պատմականորեն, ավելի կդյուրինացնի Հարավային Կովկասում Թուրքիայի դիրքերի ամրապնդումը և, որ ամենակարևորն է, առանց լուրջ զիջումների: Հետևաբար թուրքական ներկայիս մարտավարությունը հիմնված է Ադրբեջանի դերակատարությանը համակողմանի աջակցության, ինչպես նաև ընդհանուր խնդիրների առաջմղման տրամաբանության վրա: Ինչ վերաբերում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, ապա ներկա փուլում Անկարայի հիմնական խնդիրը զուտ գործընթացի կենսունակության ապահովումն է՝ առանց շոշափելի արդյունքների արձանագրման: Որպես վերոնշյալ տեսակետի փաստարկում կարելի է դիտարկել Թուրքիայի կողմից Հարավային Կովկասում տրանսպորտային կապուղիների ապաշրջափակման գործընթացում ադրբեջանա-թուրքական «Զանգեզուրի միջանցքի» նախագծի առաջմղումը առնվազն պաշտոնական հռետորաբանության և քարոզչական հարթություններում:

Ամփոփելով կարելի է նշել, որ ուկրաինական ճգնաժամն իր աշխարհաքաղաքական հետևանքներով ինչպես լրջագույն մարտահրավերներ, այնպես էլ կարևոր հնարավորություններ է ստեղծում նաև Թուրքիայի համար: Զարգացումներին արձագանքելու Անկարայի քաղաքական ճկունությունը և ցայժմ արձանագրված իրավիճակային հաջողված դիրքավորումները հնարավորություն են ընձեռում ոչ միայն լուծելու տարաբնույթ խնդիրներ, մեծացնելու սեփական քաղաքական կշիռը, այլև երկիրը զերծ պահելու հնարավոր գլոբալ անկայունության հետևանքներից: Միևնույն ժամանակ սեփական շահերի վրա գերկենտրոնացման թուրքական մանևրային հայտնի քաղաքականությունը հերթական անգամ հավաստում է այս պետության՝ վտանգավոր և անվստահելի խաղացող լինելու պատմականորեն փաստված իրողությունը: ■

Հղումներ

1. Տես TL, Dolar karşisinda 1 yilda yüzde 75 değer kaybetti, yabancilara konut satişi yüzde 44 artti | Euronews (մուտք՝ 10.07.2022):
2. Տես Enflasyon rakamlari açiklandi (aa.com.tr) (մուտք՝ 10.07.2022):
3. Erdoğan: Rusya'nin askeri harekati kabul edilemez, reddediyoruz - Arti Gerçek (artigercek.com) (մուտք՝ 10.07.2022).
4. No: 62, 24 Şubat 2022, Rusya Federasyonu Tarafindan Ukrayna'ya Yönelik Başlatilan Askeri Operasyon Hk. / T.C. Dişişleri Bakanliği (mfa.gov.tr) (մուտք՝ 10.07.2022).
5. Տես Dişişleri Bakani Çavuşoğlu: Boğazlar'dan savaş gemilerinin geçişini Türkiye durdurabilir ama yine de Rusya'nin böyle bir hakki var (t24.com.tr) (մուտք՝ 10.07.2022):
6. Տես Dişişleri Bakani Çavuşoğlu'ndan Montrö açiklamasi: Bütün ülkeleri uyardik - Son dakika dünya haberleri – Sözcü (sozcu.com.tr) (մուտք՝ 10.07.2022):
7. Erdoğan: Ukrayna'nin verdiği mücadeleyi takdir ediyoruz - Son dakika haberleri – Sözcü (sozcu.com.tr) (մուտք՝ 10.07.2022).
8. Dişişleri Bakani Mevlüt Çavuşoğlu'ndan Rusya'ya yönelik yaptirimlar hakkinda açiklama: Katilma eğilimimiz yok (ahaber.com.tr) (մուտք՝ 10.07.2022).
9. Տես Ստամբուլում մեկնարկել են ռուս - ուկրաինական բանակցությունները (azatutyun.am) (մուտք՝ 10.07.2022):
10. Տես Erdoğan Putin ile görüştü: İstanbul sürecini liderler düzeyine taşiyalim - Son Dakika Haberleri (trthaber.com) (մուտք՝ 10.07.2022):
11. Տես Cumhurbaşkani Erdoğan: Gerek Rusya gerek Ukrayna'yla ilgili denge politikasi güdüyoruz (aa.com.tr) (մուտք՝ 10.07.2022):
12. Bakan Çavuşoğlu: ABD ve Rusya'nin temizlemediği teröristler Suriye'den bize saldiriyor - Yeni Şafak (yenisafak.com) (մուտք՝ 10.07.2022).
13. Տես Ukrayna, Türkiye'den tahil yüklü üç geminin incelenmesini talep etti - Arti Gerçek (artigercek.com) (մուտք՝ 10.07.2022):
14. Bakan Çavuşoğlu: Tahil koridoru için yapici rol üstleniyoruz - Son Dakika Haberleri (trthaber.com) (մուտք՝ 10.07.2022).
15. https://www.ermenihaber.am/am/news/2022/07/12/%D4%B9%D5%B8%D6%82%D6%80%D6%84%D5%AB%D5%A1-%D5%8C%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%88%D6%82%D5%AF%D6%80%D5%A1%-D5%AB%D5%B6%D5%A1/233911
16. Տես İsveç ve Finlandiya'ya 10 şart - Yeni Şafak (yenisafak.com) (մուտք՝ 10.07.2022):
17. Son Dakika! Erdoğan'dan Suriye'de yeni harekat sinyali: Hazirliklar bitince operasyon başlayacak - Haberler (մուտք՝ 10.07.2022).
18. Տես T.C.CUMHURBAŞKANLIĞI : Cumhurbaşkanliği Sözcüsü Büyükelçi İbrahim Kalin'in Abd Ulusal Güvenlik Danişmani Jake Sullivan İle Gerçekleştirdiği Telefon Görüşmesine İlişkin Basin Açiklamasi (tccb.gov.tr) (մուտք՝ 10.07.2022):
19. Տես T.C.CUMHURBAŞKANLIĞI : Rusya Devlet Başkani Vladimir Putin ile Telefon Görüşmesi (tccb.gov.tr) (մուտք՝ 10.07.2022):
20. Ortak bildiri: Türkiye, İsveç ve Finlandiya'nin üyeliğini destekleyecek - Diken (մուտք՝ 10.07.2022).
21. https://www.ermenihaber.am/am/news/2022/07/04/%D4%B9%D5%B8%D6%82%D6%80%D6%84%D5%AB%D5%A1-%D5%89%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B7%D6%85%D5%B2%D5% AC%D5%B8%D 6%82-%D5%86%D4%B1%D5%8F%D5%95/233619 (մուտք՝ 10.07.2022)
22. Նույն տեղում

ԱՄՆ վարչակազմերի կողմից 907-րդ բանաձևի շրջանցման ազդեցությունը Ադրբեջանին տրամադրվող օգնության վրա

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Ինչ է իրենից ներկայացնում 907-րդ բանաձևը

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանը և մյուս նորանկախ հանրապետությունները կանգնեցին մի շարք խնդիրների առաջ, որոնք ինքնուրույն հաղթահարելը չափազանց դժվար էր փլուզված տնտեսություն և քաղաքական համակարգ ունեցող, ինչպես նաև սոցիալական ծանր վիճակում գտնվող երկրների համար: Որպեսզի նման պայմաններում այդ պետությունները ժողովրդավարական կառավարման մոդել որդեգրեին և ազատականացված տնտեսություն կառուցեին, Միացյալ Նահանգների Կոնգրեսի երկու պալատները 1992 թ. հուլիս-օգոստոս ամիսներին ընդունեցին «Ազատության աջակցության ակտը», որը 1992 թ. հոկտեմբերի 24-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Հ. Ու. Բուշը ստորագրեց և օրենքի ուժ հաղորդեց դրան[1]: «Ազատության աջակցության ակտի» կարևորությունը հայերի և Հայաստանի համար պայմանավորված էր 907-րդ բանաձևի ներառմամբ: Վերջինս սահմանում էր, որ «Միացյալ Նահանգները չի կարող այս կամ ցանկացած այլ ակտի շրջանակում օգնություն տրամադրել Ադրբեջանի կառավարությանը, քանի դեռ [ԱՄՆ] նախագահը չի պարզել և զեկուցել Կոնգրեսին, որ Ադրբեջանի կառավարությունը ակնհայտ քայլեր է ձեռնարկում դադարեցնելու բոլոր շրջափակումները և ուժի կիրառման այլ ագրեսիվ ձևերը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ»[2]:

Իսկ ինչպե՞ս 907-րդ բանաձևը հայտնվեց «Ազատության աջակցության ակտում»: Այս հարցում մեծ դեր խաղացին ԱՄՆ-ում հայկական լոբբիստական կազմակերպությունները և հայ համայնքը: Այսպես՝ Հայ դատի հանձնախմբի և Ամերիկայի հայկական համագումարի ջանքերով Սենատում հենց ակտի ընդունման օրը դեմոկրատ սենատոր Ջոն Քերին առաջադրեց 907-րդ բանաձևը որպես «Ազատության աջակցության ակտի» լրացում, որն ակտի հետ մեկտեղ ընդունվեց նույն օրը Սենատում: Բանաձևի հապճեպ ընդունումը պայմանավորված էր նրանով, որ ԱՄՆ-ի համար կարևոր էր հնարավորինս արագ ընդունել մի ակտ, որը նախատեսում էր նորանկախ պետություններին օգնության տրամադրում, ինչից և օգտվեցին հայ լոբբիստները: 907-րդ բանաձևը ԱՄՆ-ում հայ լոբբիստների մեծագույն ձեռքբերումներից մեկը դարձավ, որը գործեց շուրջ 10 տարի՝ խոչընդոտելով ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները, քանի որ դրա առկայության պայմաններում Ադրբեջանը միակ նորանկախ պետությունն էր, որ ԱՄՆ-ից ուղիղ օգնություն չէր ստանում:

Իրավիճակը փոխվեց 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, երբ Միացյալ Նահանգները ահաբեկչության դեմ գլոբալ պայքարի քաղաքականություն որդեգրեց: Նման պայմաններում 907-րդ բանաձևը արգելում էր Միացյալ Նահանգներին ռազմական օգնություն տրամադրել Ադրբեջանին՝ աջակցելու Աֆղանստանում իրենց հակաահաբեկչական պայքարին: Ուստի սա է պատճառը, որ 2001 թ. հոկտեմբերի 24-ին Սենատն ընդունեց օտարերկրյա հատկացումների 2002 թ. ակտը, որը հնարավորություն տվեց ԱՄՆ նախագահին յուրաքանչյուր բյուջետային տարի շրջանցելու 907-րդ բանաձևը՝ ռազմական օգնություն տրամադրելու Ադրբեջանին ազգային անվտանգությանը սպառնացող ուղղակի վտանգի առկայության հիմքով, այն դեպքում, եթե՝

1) անհրաժեշտ է աջակցել ԱՄՆ-ին՝ միջազգային ահաբեկչությանը հակազդելու համար,
2) անհրաժեշտ է աջակցել ԱՄՆ զինված ուժերին կամ կոալիցիոն գործընկերներին՝ միջազգային ահաբեկչությանը հակազդելու համար,
3) կարևոր է Ադրբեջանի սահմանային անվտանգության համար,
4) չի խաթարի կամ չի խոչընդոտի Հայաստանի ու Ադրբեջանի միջև ընթացող խաղաղ բանակցությունները և չի օգտագործվի Հայաստանի դեմ հարձակողական նպատակներով[3]:

Առաջին անգամ 907-րդ բանաձևը շրջանցեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ կրտսերը 2002 թ. հունվարի 25-ին՝ այդպիսով վերացնելով ԱՄՆ կառավարության կողմից Ադրբեջանի կառավարությանը օգնության տրամադրման արգելքը[4]:

Հետաքրքրական է, որ 907-րդ բանաձևի առնչությամբ ԱՄՆ-ում հայկական երկու խոշորագույն լոբբիստական կազմակերպությունները տարաձայնություններ ունեին: Եթե նախկինում երկուսն էլ պայքարում էին հնարավոր շրջանցման դեմ, ապա Սենատի կողմից օտարերկրյա հատկացումների 2002 թ. ակտի ընդունումից հետո հանդես եկան տարբեր դիրքորոշումներով: Այսպես՝ Հայ դատի հանձնախումբը դեմ էր

բանաձևի շրջանցմանը՝ համարելով, որ այն ԱՄՆ նախագահին տալիս է «գրեթե անսահմանափակ իշխանություն՝ ռազմական օգնություն տրամադրելու Ադրբեջանին»[5]: Իր հայտարարության մեջ Հայ դատը նշում էր. «….ծայրաստիճան հիասթափված ենք այս երեկո Սենատի քվեարկությունից և կշարունակենք օրենսդիր գործընթացում մեր ջանքերն ուղղել ցույց տալու Կոնգրեսի անդամներին 907-րդ բանաձևի թուլացման բացասական ազդեցությունը Կովկասում ԱՄՆ շահերի վրա»[6]: Իսկ Ամերիկայի հայկական համագումարը դա որակեց «հաղթանակ Հայաստանի համար»: Իր հայտարարության մեջ կառույցը ողջունում էր «սենատոր Մակքոնելի և վարչակազմի ջանքերը՝ 907-րդ բանաձևի հարցում շրջանցման սահմանափակ և հավասարակշռված եղանակ գտնելու կապակցությամբ, որը պաշտպանում է Հայաստանի և Ղարաբաղի լեգիտիմ անվտանգային շահերը՝ միևնույն ժամանակ ապահովելով, որ նախագահ Բուշն ունենա գործիքներ՝ պայքարելու համաշխարհային ահաբեկչության դեմ»: Այստեղ խոսքը նաև այն մասին էր, որ Մակքոնելն առաջարկել էր ներառել նաև դրույթ, որը նախատեսում էր Հայաստանին տրամադրել 4 միլիոն ԱՄՆ դոլարի ռազմական օգնություն և ևս 600 հազար ԱՄՆ դոլար՝ միջազգային ռազմական կրթության և վերապատրաստման համար: Համագումարի նման դիրքորոշումը պայմանավորված էր նրանով, որ վերջինս գիտակցում էր, որ ԱՄՆ-ում 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո բանաձևի շրջանցումը հանրային մեծ աջակցություն էր վայելում, և Սպիտակ տան նախաձեռնության կասեցումն արդեն անհնարին էր: Ուստի «Հայաստանի և Ղարաբաղի համար հնարավոր լավագույն արդյունքն ապահովելու համար [համագումարը] սատարել է 907-րդ բանաձևի հավասարակշռված և սահմանափակ շրջանցումը….»[7]:

Ամերիկայի հայկական համագումարի նման դիրքորոշումը զարմանալի չէր, քանի որ 907-րդ բանաձևի շրջանցումը թույլ կտար ԱՄՆ-ին ռազմական օգնություն տրամադրել նաև Հայաստանին: Այդ բանաձևը խոչընդոտում էր ռազմական օգնության տրամադրումը նաև Հայաստանին՝ արտացոլելով ԱՄՆ-ի, այսպես կոչված, «անկողմնակալության» քաղաքականությունը, որը, սակայն, չպահպանվեց Հայաստանի դեպքում, քանի որ վերջինս սկսեց ստանալ զգալիորեն ավելի փոքր օգնություն, քան Ադրբեջանը[8]:

907-րդ բանաձևի շրջանցումից հետո Ադրբեջանին տրամադրված ռազմական օգնությունը

2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները հնարավորություն տվեցին ԱՄՆ վարչակազմին հեշտությամբ շրջանցելու 907-րդ բանաձևը, որից հետո Ադրբեջանը դարձավ ԱՄՆ-ի կողմից զգալի ռազմական օգնություն ստացող պետություն: Ջորջ Բուշ կրտսերից հետո յուրաքանչյուր ֆիսկալ տարի ԱՄՆ վարչակազմերը շրջանցում են 907-րդ բանաձևը և ռազմական օգնություն տրամադրում Ադրբեջանին: Այն զգալի գումար է կազմում. 2001 թվականից ի վեր Ադրբեջանը ստացել է շուրջ 419 մլն ԱՄՆ դոլարի ռազմական օգնություն: Այդ գումարը տրվել է անվտանգության ոլորտին վերաբերող 20-ից ավելի ծրագրերի միջոցով: Դրանցից առավել խոշորներից է «Սպառնալիքի համագործակցային նվազեցում» ծրագիրը (մոտ 146 մլն ԱՄՆ դոլար), որը նպատակ ունի կանխելու զանգվածային ոչնչացման զենքի և դրա հետ կապված ենթակառուցվածքների տարածման սպառնալիք ներկայացնող երկրներում: Ինչ վերաբերում է ամերիկյան ռազմական արտադրանքի (defence article) և ծառայությունների ձեռքբերմանն Ադրբեջանի կողմից, այն իրականացվում է «Օտար-երկրյա ռազմական ֆինանսավորում» ծրագրի (51 մլն ԱՄՆ դոլար) շրջանակում տրամադրվող վարկերի և դրամաշնորհների միջոցով: Մեկ այլ ծրագիր էլ ուղղված է զենքի տարածումը կանխելու, հակահաբեկչության, ականազերծման և դրանց հետ կապված աշխատանքների իրականացմանը, որոնց համար ԱՄՆ-ն տրամադրել է մոտ 39 մլն ԱՄՆ դոլարի օգնություն[9]:

2018-2019 թթ. տրամադրված օգնության առյուծի բաժինը (101.5 մլն դոլար) ընկել է 333-րդ բանաձևին՝ «Գործընկեր պետության հզորությունների զարգացման» ծրագրին: Վերջինս դեռևս 2006 թվականից գործող «Համաշխարհային վերապատրաստում և սպառազինում» ծրագրի ընդլայնված տարբերակն է, որը ներառում է նաև հակահաբեկչական, ծովային և սահմանային անվտանգության, ռազմահետախուզական օպերացիաների իրականացում և համաշխարհային կոալիցիոն օպերացիաներին աջակցող գործունեության իրականացումը[10]: Հատկանշական է, որ հենց այս ծրագիրն է խախտում ԱՄՆ-ի որդեգրած «անկողմնակալության» քաղաքականությունը և Ադրբեջանին Հայաստանից զգալիորեն ավելի խոշոր ռազմական աջակցություն տրամադրում. այս տարիների ընթացքում նույն ժամանակահատվածի համար Ադրբեջանը ստացել է 419 մլն ԱՄՆ դոլարի օգնություն, Հայաստանը՝ մոտ 189 մլն ԱՄՆ դոլարի[11]:

Հատկապես անհանգստացնող են այն ծրագրերը, որոնց շրջանակներում ռազմական ոլորտի ադրբեջանցի մասնագետները վերապատրաստվում, կամ կրթություն են ստանում ԱՄՆ-ի առաջատար ռազմական, կրթական հաստատություններում: Դրանցից խոշորագույններն են «Միջազգային ռազմական կրթություն և վերապատրաստում» ծրագիրը և «Ահաբեկչության դեմ պայքարի կրթաթոշակային ծրագիրը»[12]:

Չնայած այն հանգամանքին, որ 907-րդ բանաձևի շրջանցման պայմաններից մեկն այն է, որ Ադրբեջանին տրամադրվելիք ցանկացած օգնությունը չպետք է «խաթարի կամ խոչընդոտի Հայաստանի ու Ադրբեջանի միջև ընթացող խաղաղ բանակցությունները և …. օգտագործվի Հայաստանի դեմ հարձակողական նպատակներով», այնուամենայնիվ, 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամա-

նակ եղան ապացույցներ, որ ամերիկյան ռազմական օգնությունն օգտագործվում է Հայաստանի դեմ: Այսպես՝ ադրբեջանական բանակի երկու բարձրաստիճան սպաներ, որոնք սպանվեցին Թալիշի ուղղությամբ Ադրբեջանի իրականացրած հարձակման ժամանակ, ուսանել էին ԱՄՆ-ում՝ Ադրբեջանին տրամադրված ռազմական օգնության շրջանակներում: Մեկը՝ փոխգնդապետ Մուրադ Միրզաևն էր, ով ուսանել էր Տեխասի նահանգի Սան Անտոնիոյի ռազմական լեզվաբանական ինստիտուտում և մասնակցել Վիրջինիայի ռազմածովային ուժերի սպայական հատուկ դասընթացներին, մյուսը՝ փոխգնդապետ Վուգար Յուսիֆովը, ով ուսանել էր Արիզոնա նահանգի ռազմական հետախուզության կենտրոնում: Սա, ըստ էության, 907-րդ բանաձևի կոպիտ խախտում է ադրբեջանական իշխանությունների կողմից[13]:

907-րդ բանաձևը և Բայդենի վարչակազմը

2020 թ. արցախյան պատերազմի ժամանակ ԱՄՆ-ում նախագահական քարոզարշավ էր ընթանում, և նախագահի թեկնածուները չէին կարող ուշադրություն չդարձնել պատերազմին՝ հաշվի առնելով Միացյալ Նահանգներում հայկական մեծ համայնքը և նրա ձայների կարևորությունը նախագահական ընտրություններում: Այդ ժամանակ դեռ նախագահի թեկնածու Ջո Բայդենը հանդես եկավ մի շարք հայտարարություններով պատերազմի վերաբերյալ և, որն առավել կարևոր է, նշեց, որ ԱՄՆ վարչակազմը պետք է ամբողջությամբ կիրառի, այլ ոչ թե շրջանցի «Ազատության աջակցության ակտի» 907-րդ բանաձևը՝ դադարեցնելու համար ռազմամթերքի հոսքը Ադրբեջան»[14]: Դեռ ավելին՝ Ջո Բայդենի՝ նախագահ ընտրվելուց հետո՝ պետքարտուղարի թեկնածու Էնթոնի Բլինկենի՝ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում լսումների ժամանակ, սենատոր Մենենդեզը բարձրաձայնեց 907-րդ բանաձևի խնդիրը: Ի պատասխան՝ Բլինկենը նշեց, որ «եթե հանգամանքները թույլ տան, Բայդեն-Հարիս վարչակազմը պատրաստ է այլևս չշրջանցելու «Ազատության աջակցության ակտի» 907-րդ բանաձևը»[15]:

Այս հայտարարությունները դիտարկվեցին որպես ազդակ, որ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո Բայդենը հնարավոր է չշրջանցի 907-րդ բանաձևը: ԱՄՆ-ում հայ համայնքն ու հայ լոբբիստները սկսեցին ակտիվորեն պայքարել, որ 907-րդ բանաձևը ուժի մեջ մնա և չշրջանցվի Բայդենի վարչակազմի կողմից: Միևնույն ժամանակ ՀՀ իշխանությունների կողմից այս ուղղությամբ ակտիվ քայլեր չձեռնարկվեցին: ԱՄՆ-ի իրենց գործընկերների հետ հանդիպումների ընթացքում 907-րդ բանաձևի վերագործարկման հարցը պաշտոնապես չի բարձրաձայնվել ՀՀ իշխանությունների կողմից: Միայն հայ լոբբիստների ջանքերը այս ուղղությամբ բավարար չեն, անհրաժեշտ է նաև այս խնդրի շուրջ աշխատանք պետական մակարդակով: Ի վերջո, 907-րդ բանաձևը շրջանցվեց ինչպես 2021 թ.[16], այնպես էլ 2022 թ.[17]:

Այսպիսով՝ 907-րդ բանաձևը եղել է ԱՄՆ-ում հայ լոբբիստների մեծ հաղթանակներից մեկը՝ գործելով շուրջ 10 տարի: 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերը հնարավորություն տվեցին Բուշի և հաջորդ վարչակազմերին ամեն տարի շրջանցելու 907-րդ բանաձևը: Ադրբեջանական կողմը ձգտում է ընդհանրապես բանաձևի վերացմանը, բայց դա բարդ գործընթաց է, ուստի դրա ուժը չեզոքացվում է շրջանցումների միջոցով: Մյուս կողմից՝ հայ լոբբիստների և պետական ռեսուրսի հմուտ, ակտիվ և արդյունավետ համատեղ աշխատանքի պարագայում հնարավոր է հասնել 907-րդ բանաձևի վերանայմանը հատկապես Բայդենի վարչակազմի օրոք: Եվ եթե Հայաստանը կարողանա ապացուցել Միացյալ Նահանգներին, որ 907-րդ բանաձևի շրջանցմամբ Ադրբեջանին տրամադրված ռազմական օգնությունն օգտագործվել է իր դեմ, դա կարևոր գործոն կարող է լինել վերանայման գործընթաց սկսելու համար: ■

Հղումներ

1. Տես S.2532 - FREEDOM Support Act, https://www.congress.gov/bill/102nd-congress/senate-bill/2532/text (մուտք՝ 29.06.2022):
2. S.Amdt.2686 to S.2532, https://www.congress.gov/amendment/102nd-congress/senate-amendment/2686/text (մուտք՝ 29.06.2022).
3. Տես H.R.2506 - Kenneth M. Ludden Foreign Operations, Export Financing and Related Programs Appropriations Act, 2002, https://www.congress.gov/bill/107th-congress/house-bill/2506/text (մուտք՝ 29.06.2022):
4. Տես President Lifts Restrictions on Assistance to Azerbaijan, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2002/01/text/20020130-6.html (մուտք՝ 30.06.2022):
5. Senate votes to allow presidential waiver of section 907, https://anca.org/press-release/senate-votes-to-allow-presidential-waiver-of-section-907/ (մուտք՝ 30.06.2022).
6. Նույն տեղում:
7. Armenia 'Understands' Freeze On U.S. Sanctions Against Azerbaijan, https://www.azatutyun.am/a/1567141.html (մուտք՝ 30.06.2022).
8. Տես Azerbaijan and Armenia: The Nagorno Karabakh Conflict, Congressional Research Service, https://sgp.fas.org/crs/row/R46651.pdf (մուտք՝ 30.06.2022):
9. Տես Total Security Sector Assistance to Azerbaijan in Selected Time Period, https://securityassistance.org/security-sector-assistance/ (մուտք՝ 01.07.2022):
10. Տես նույն տեղում:
11. Տես Total Security Sector Assistance to Armenia in Selected Time Period, https://securityassistance.org/map/ (մուտք՝ 01.07.2022):
12. Տես նույն տեղում:
13. Տես Azerbaijani Aggression Shouldn't Be Rewarded With U.S. Aid, https://www.forbes.com/sites/realspin/2017/10/30/azerbaijani-aggression-shouldnt-be-rewarded-with-u-s-aid/?sh=4ba876ad33f5 (մուտք՝ 04.07.2022):
14. Nagorno-Karabakh – Statement by Vice President Joe Biden, October 28, 2020, https://joebiden.com/2020/10/28/nagorno-karabakh-statement-by-vice-president-joe-biden-2/ (մուտք՝ 04.07.2022).
15. Secretary of State-Designate Blinken Testifies in Support of Renewed U.S. Leadership to Strengthen Armenia's Security and Resilience, https://anca.org/press-release/secretary-of-state-designate-blinken-testifies-in-support-of-renewed-u-s-leadership-to-strengthen-armenias-security-and-resilience/ (մուտք՝ 04.07.2022).
16. Տես Extension of Waiver of Section 907 of the Freedom Support Act With Respect to Assistance to the Government of Azerbaijan, https://www.federalregister.gov/documents/2021/05/04/2021-09259/extension-of-waiver-of-section-907-of-the-freedom-support-act-with-respect-to-assistance-to-the (մուտք՝ 05.07.2022):
17. Տես նույն տեղում:

Ռաշթ-Ասթարա. Իրանը և Ադրբեջանը չեն կարողանում իրար կապել երկաթգծերը

Ժաննա Վարդանյան
Իրանագետ

Եթե կառուցված լիներ Ռաշթ-Ասթարա երկաթուղին, Հնդկաստանից բեռները կարող էին Կասպից ծովի հարավ-արևմուտքով՝ Իրանի ու Ադրբեջանի երկաթուղային ցանցով հասնել Ռուսաստան ու Եվրոպա: Հայաստանի հարևան երկու երկրները չեն կարողանում վերջնականապես իրար կապել իրենց երկաթգծերը՝ չնայած մշտական մտադրություններին:

Ղազվին - Ռաշթ - Ասթարա (Իրան) - Ասթարա (Ադրբեջան) շուրջ 350 կմ երկաթուղին Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մաս է: 2018 թվականի մարտին շահագործման է հանձնվել իրանական ու ադրբեջանական համանուն՝ Ասթարա քաղաքները կապող գիծը, իսկ 2019 թվականի մարտին տեղի ունեցավ Ղազվին - Ռաշթ երկաթուղու բացման պաշտոնական արարողությունը: Սակայն այս երկաթուղային հանգույցի զգալի հատվածը՝ Ռաշթ - Ասթարան, մինչև օրս չի կառուցվել:

Երկաթուղին նախատեսվում էր կառուցել իրանա-ադրբեջանական համատեղ ֆինանսավորմամբ, սակայն Ադրբեջանը նախագիծը չի ֆինանսավորում, և Իրանը փորձում է երկաթուղին կառուցելու համար ռուսական ներդրումներ գրավել:

Ադրբեջանով անցնող Հյուսիս-Հարավը

Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքը կոչված է Հնդկաստանը միացնել Ռուսաստանին և Հյուսիսային Եվրոպային, նեղ իմաստով՝ այն նաև Իրանը ՌԴ-ին կապող երթուղի է: Համապատասխան համաձայնությունը ստորագրել են Հնդկաստանը, Իրանը և Ռուսաստանը դեռ 2000 թվականին: Նախատեսվում է, որ այն պետք է այլընտրանք ծառայի Սուեզի ջրանցքին, և բեռները 40-60 օրվա փոխարեն նշանակետ պետք է հասնեն 20-25 օրում:

Ըստ ծրագրի՝ բեռները Հնդկաստանից նավերով գալու են իրանական Բանդար Աբբաս նավահանգիստ, որտեղից երկաթուղու միջոցով տարվելու են Իրանի հյուսիս (քարտեզում՝ նարնջագույն գիծը): Այնտեղից երթուղին ճյուղավորվում է.

1. Կասպից ծովով՝ լաստանավերով Ռուսաստան, ապա Եվրոպա (քարտեզում՝ կապույտ),
2. Իրան - Թուրքմենստան - Ղազախստան՝ երկաթուղով Ռուսաստան, ապա Եվրոպա (քարտեզում՝ մանուշակագույն),
3. Իրան - Ադրբեջան՝ երկաթուղով Ռուսաստան ու Եվրոպա (քարտեզում՝ կարմիր):

Երթուղիներից յուրաքանչյուրն ունի իր խնդիրները, սակայն ի սկզբանե առաջնային է դիտարկվել առաջինը՝ Կասպից ծովով անցնող տարբերակը

(կապույտ): Այն փորձարկվել է բոլորովին վերջերս՝ այս տարվա հունիսին[1]:

Նշվածներից երկրորդը (մանուշակագույն), որը ներառում է Ղազախստան - Թուրքմենստան - Իրան երկաթուղին, պաշտոնապես բացվել է 2014 թ., սակայն տեխնիկական մի շարք խնդիրների պատճառով գրեթե չի գործել: Այդ պատճառներից էր, օրինակ, Իրանի և Թուրքմենստանի երկաթուղային գծերի ստանդարտների տարբերությունը, որին լուծում է տրվել միայն 2021 թ[2]., և նույն տարվա նոյեմբերին երեք երկրները երթուղին զարգացնելու վերաբերյալ հուշագիր են ստորագրել[3]: Իսկ արդեն 2022 թ. հուլիսին այդ երթուղով Ռուսաստանից առաջին կոնտեյներական գնացքն է ուղևորվում Հնդկաստան[4]:

Մայիսին էլ նույն երկաթգծով Ղազախստանից կոնտեյներական գնացք էր մեկնել Թուրքիա: Այսինքն այս դեպքում Ղազախստան-Թուրքմենստան-

Իրան երկաթուղին ծառայել էր արևելք-արևմուտք միջանցքին, և ըստ Թեհրանի՝ այն կարող է դառնալ Չինաստան-Եվրոպա բեռնափոխադրումների հիմնական երթուղիներից մեկը:

Իրան - Ադրբեջան գծի դանդաղ (չ)կառուցումը

Թվարկվածներից երրորդը (քարտեզում՝ կարմիր) Ադրբեջանի տարածքով անցնող երկաթուղային գիծն է, որի ամբողջ երկայնքով անցնելիք երկաթգիծը դեռ պատրաստ չէ:

Ադրբեջանը Հյուսիս-Հարավ միջանցքի մասնակից է դարձել 2005 թ.: Այդ ժամանակ իրանական երկաթգծային ցանցը հյուսիսում հասնում էր մինչև Ղազվին (Կասպից ծովի հարևանությամբ): Իսկ ադրբեջանական ցանցը հարավում հասնում էր մինչև Իրանի սահմանին գտնվող Ասթարա քաղաք, բայց չէր հասնում սահմանին:

2005-ին կողմերը որոշեցին միացնել Իրանի ու Ադրբեջանի երկաթուղիները: Դա ենթադրում էր.

- Իրանում Ղազվին - Ռաշթ - Ասթարա հատվածի կառուցում մինչև Ադրբեջանի սահման,
- Ադրբեջանում Բաքվից մինչև Ասթարա հատվածի վերանորոգում ու այնտեղից երկաթուղու կառուցում մինչև Իրանի սահման:

Այս ուղղությամբ առաջին նշանակալի արդյունքը երևաց միայն 2018 թ. մարտին, երբ շահագործման հանձնվեց Իրանի ու Ադրբեջանի սահմանին գտնվող նույնանուն երկու քաղաքները՝ Ասթարաները իրար միացնող հատվածը[5]: Սա ամբողջ նախագծի ամենակարճ հատվածն էր, որից.

- շուրջ 8,5 կմ կառուցվել է Ադրբեջանի տարածքում,
- շուրջ 1,5 կմ կառուցվել է Իրանի տարածքում:

Իրանի տարածքում 1,5 կմ անց հատվածի, երկաթուղային կայարանի և տերմինալների կառուցման համար Ադրբեջանը պետք է 60 մլն դոլարի ներդրում կատարեր, սակայն Ասթարա - Ասթարա հատվածը շահագործման հանձնելուց հետո իրանական կողմը բազմիցս բողոքել է, որ Ադրբեջանն իր պարտավորությունները չի կատարել և ավարտին չի հասցրել ենթակառուցվածքների ստեղծումը, մասնավորապես՝ տերմինալների կառուցումը[6]:

Իրանի տարածքով անցնող շուրջ 175 կմ-անց Ղազվին - Ռաշթ հատվածը շահագործման է հանձնվել 2019 թվականի մարտին[7]: Իսկ ահա Ռաշթ - Ասթարա հատվածը մինչև հիմա չի կառուցվել: Առհասարակ ամբողջ գծի կառուցումը մինչև հիմա չի ավարտվել մի քանի գործոններով պայմանավորված.

Իրանի նկատմամբ սահմանված պատժամիջոցներ. 2006-2008 թթ. և 2010-2012 թթ. Իրանի դեմ ՄԱԿ ընդունած բանաձևերը, դրանց զուգահեռ ԱՄՆ, իսկ այնուհետև նաև ԵՄ կողմից սահմանված պատժամիջոցները ծանր դրության մեջ են դրել Իրանի տնտեսությունը: Ստեղծված իրավիճակում բավարար միջոցների բացակայության պայմաններում երկաթուղու կառուցումը մղվել է հետին պլան:

Տեղանքի բարդ ռելիեֆը. Ղազվին - Ռաշթ երկաթուղին անցնում է ռելիեֆային բարդ տարածքներով (Ալբորզի լեռներ, Սեֆիդռուդ գետ, ջրամբար), ինչը կառուցման համար մի շարք դժվարություններ է ստեղծել, որոնք հաղթահարելու համար կառուցվել է 9 կմ ընդհանուր երկարությամբ 62 կամուրջ ու 22 կմ ընդհանուր երկարությամբ 53 թունել: Թունելներից մեկն անցնում է Սեֆիդռուդ ջրամբարի կողքով[8]: Նմանատիպ դժվարություններ կան նաև Ռաշթ - Ասթարայի կառուցման համար:

Կապալառուի փոփոխություններ. Թե՛ Ղազվին - Ռաշթ և թե՛ Ռաշթ - Ասթարա գծերի դեպքում բավականին հաճախ են եղել կապալառուի փոփոխությունները: Երկաթուղային այդ հատվածների շինարարությունը մեկ հանձնվել է Իրանի Երկաթուղային ընկերությանը, մեկ՝ Փոխադրումային ենթակառուցվածքների զարգացման և կառուցման ընկերությունը: Ընդ որում՝ այս փոփոխությունները երբեմն եղել են մի քանի ամիսը մեկ կտրվածքով:

Սա իր հերթին դանդաղեցրել է երկաթուղիների կառուցումը: Ղազվին - Ռաշթ հատվածի կառուցումն ի վերջո ավարտել է Փոխադրումային ենթակառուցվածքների զարգացման և կառուցման ընկերությունը: Իսկ չկառուցված Ռաշթ - Ասթարայի դեպքում 2020 թ. երկաթուղու կառուցում հանձնվել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) «Խաթամ ալ Անբիա» ինժեներական ընկերությանը[9]:

Ֆինանսների բացակայություն. Խոսելով կոնկրետ 165 կմ Ռաշթ-Ասթարա հատվածի մասին՝ պետք է նշել, որ այս երկաթուղու կառուցման ամենաառաջին խոչընդոտը ֆինանսականն է: Այս հատվածի կառուցման համար քննարկումները հատկապես ակտիվացել են 2015-2016 թթ. սկսած:

Ռաշթ - Ասթարա նախագիծը գնահատվել է 1,1 մլրդ դոլար: Երկաթուղու ֆինանսավորման հարցն Իրանը համաձայնեցրել է Ադրբեջանի հետ, և 2018 թ. մարտի 14-ին, Թեհրանում Իրանի և Ադրբեջանի էկոնոմիկայի նախարարները ստորագրել են երկաթգծի կառուցման համար համատեղ 1 մլրդ դոլար (500 մլն դոլար Իրանից, ևս 500 մլն դոլարի վարկ էլ Ադրբեջանից)

Կապույտով ներկված երկաթգծի՝ Ադրբեջան-Իրան սահմանի հատվածն է, որը շահագործման է հանձնվել 2018թ.

ներդնելու մասին փաստաթուղթ[10]:

Երկու շաբաթ անց Իրանի նախագահ Հասան Ռոուհանիի Ադրբեջան այցի ընթացքում կողմերը ստորագրել են Ռաշթ - Ասթարա գծի կառուցման համար համատեղ ներդրումներ կատարելու մասին համաձայնագիր: Համաձայնագիրն Ադրբեջանի ղեկավար Իլհամ Ալիևն այսպես էր բնութագել[11].

«Երեկ պատմական փաստաթուղթ ենք ստորագրել: Ասթարա - Ռաշթ երկաթուղու կառուցման մասին պայմանագիր է ստորագրվել: Այս պայմանագիրը Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի իրականացման հարցում հատուկ դեր կունենա: Այս կերպ, մայրցամաքները միացնելով, թե՛ տնտեսական օգուտ կստանանք, քանի որ մեր տարածքով անցնող բեռները տասնյակ միլիոններ են կշռվում, թե՛ միաժամանակ տարածաշրջանում համագործակցության նոր ձևաչափ կստեղծենք»:

Սկզբնական շրջանում թե՛ իրանական և թե՛ ադրբեջանական մամուլն ակտիվորեն լուսաբանում էին այս թեման: Մասնավորապես, ադրբեջանական մամուլն այն ներկայացնում էր մեծ ոգևորությամբ և Իրանին տնտեսական ծանր պայմաններում օգնություն տրամադրելու լույսի ներքո: Սակայն ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից միջուկային համաձայնագրից դուրս գալուց և Իրանի նկատմամբ պատժամիջոցները վերականգնելու ֆոնին՝ Բաքուն աստիճանաբար պասիվացավ:

Եթե մինչ այդ 500 մլն վարկի տրամադրման մասին խոսվում էր որպես հաստատ տեղի ունենալիք, անգամ կատարված իրողության, ապա Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերականգնումից հետո պաշտոնական Բաքուն սկսեց ավելի զգուշորեն արտահայտվել ձևակերպումներում:

2018 թ. նոյեմբերի 8-ին Ադրբեջանում ԻԻՀ դեսպան Ջավադ Ջահանգիրզադեն ստիպված էր արդարանալ, որ նախագիծը մեծ է ու ժամանակատար, բանակցությունները շարունակվում են, նախագիծը չի դադարեցվել[12]: Օրեր անց էլ Ադրբեջանի էկոնոմիկայի նախարը հայտարարեց, որ 500 մլն վարկի տրամադրման քննարկումները շարունակվում են՝ պայմանավորված Իրանի շուրջ ստեղծված իրավիճակով:

Հանդիպումների նոր փուլը սկսվեց երկաթուղու Ղազվին - Ռաշթ հատվածի բացման առիթով (2019): Իրան ժամանած ադրբեջանցի պաշտոնյաներն առանձին հանդիպումներ անցկացրին մինչև իսկ Իրանի նախագահի հետ:

Ադրբեջանի երկաթուղու ղեկավարը տեղեկացրեց, որ իրենց էկոնոմիկայի նախարարը Իրան է եկել ֆինանսավորման հարցը քննարկելու համար, սակայն հետագայում համաձայնությունների մասին որևէ հրապարակում չեղավ: Հանդիպումներ եղան նաև հաջորդող տարիներին, բայց՝ անարդյունք:

Եթե պայմանավորվածությունից հետո 2-3 տարի իրանական կողմից տարբեր պաշտոնյաներ անընդհատ Ադրբեջանին հիշեցնում էին իր պարտավորության մասին, ապա 2021 թ. աստիճանաբար սկսվեց նկատվել, որ Իրանը փորձում է ֆինանսավորում բերել Ռուսաստանից: Միաժամանակ՝ ադրբեջանական կողմի հետ հանդիպումներում Իրանը շարունակում է արծարծել Ռաշթ-Ասթարայի կառուցման հարցը:

Ռուսաստանի մուտքը խաղի մեջ

Մոսկվային ներգրավելու հավանականությունը հատկապես ակնառու դարձավ 2022 թ. հունվարին Իրանի նոր նախագահ Էբրահիմ Ռայիսիի ՌԴ այցի ընթացքում: Հայտարարվեց, որ Իրանն ու ՌԴ-ն նախատեսում են Ռաշթ - Ասթարան կառուցել ՌԴ կողմից Իրանին տրամադրվելիք 5 մլրդ վարկային գծի շրջանակներում՝ ի թիվս այլ նախագծերի[13]: Փետրվարին Իրանի երկաթուղային ընկերության ղեկավարը հայտարարեց, որ պատժամիջոցների պատճառով Ադրբեջանը չի ֆինանսավորել նախագիծը, և հիմա Մոսկվան պատրաստ է դա անել[14]:

Հատկանշական է նաև, որ փետրվարի վերջին՝ ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո, Մոսկվան ևս սկսեց ընդգծել այդ հատվածի և առհասարակ Հյուսիս-Հարավ միջանցքի կարևորության մասին: Ապրիլի 21-ին Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսանդր Նովակը հայտարարեց, որ եթե Հյուսիս-Հարավը նախկինում հեռանկար էր, հիմա՝ խիստ անհրաժեշտություն[15]:

Հունիսի 23-ին էլ ՌԴ պաշտոնակից Սերգեյ Լավրովի հետ հանդիպմանն Իրանի ԱԳ նախարար Ամիր Աբդոլլահիանը հայտարարեց, որ Ռաշթ - Ասթարա գծի կառուցման հարցում լավ պայմանավորվածություն են ձեռք բերել և հույս ունեն՝ համատեղ ներդրումներով ավարտին կհասցնեն նախագիծը[16]: Խոսքն, ամենայն հավանականությամբ, առայժմ բանավոր պայմանավորվածության մասին է: Ուշագրավ է նաև, որ Լավրովի այցից 11 օր անց պաշտոնական այցով Իրանում գտնվող Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը հայտարարեց, որ Բաքուն պատրաստ է կատարել Ռաշթ-Ասթարա երկաթուղու և Ասթարայի երկաթուղային տերմինալի կառուցման հարցում ստանձնած պարտավորությունները[17]: Սակայն թե՛ Մոսկվայի, թե՛ Բաքվի հայտնած պատրաստակամությունը գործնականում ոչինչ չեն նշանակում, այդ իսկ պատճառով Իրանում ընդգծում են սեփական միջոցներով և ամեն գնով այդ երկաթուղին կառուցելու անհրաժեշտության մասին[18]:

Ի սկզբանե Ռաշթ - Ասթարա գծի կառուցման ժամկետը գնահատվում էր նվազագույնը 3-4 տարի: Հաշվի առնելով հնարավոր ձգձգումները՝ թե՛ ֆինանսական, թե՛ աշխատանքերի կատարման բարդության տեսանկյուններից՝ առավել իրատեսական է, որ գոնե Իրանի հարավը Ռուսաստանի հետ կապող երկաթուղու վերջին անավարտ հատվածը կարող է կառուցվել առնվազն

5 տարում:

Ինչ վերաբերում է Կասպից ծովով երթուղուն, որն ի սկզբանե որպես առաջնային երթուղի է դիտարկվել Ռուսաստանի և Իրանի միջև բեռնափոխադրումներում, պետք է նշել, որ Ռաշթից երկաթուղին պետք է ճյուղավորվի և կառուցվի մինչև Կասպյան նավահանգիստ: Ի տարբերություն Ռաշթ - Ասթարայի, Ռաշթ - Կասպյան գծի դեպքում որոշակի աշխատանքներ տարվել են, և հայտարարվել է, որ մինչև իրանական օրացույցով տարեվերջ՝ 2023 թ. մարտ, այն շահագործման կհանձնվի[19]:

Հարկ է նշել, որ հենց Իրան-ՌԴ առևտրի տեսանկյունից Կասպյան երթուղին Իրանի համար շատ ավելի կարևոր է, քան Ադրբեջանով անցնող ավտոճանապարհային ու երկաթգծային երթուղիները՝ հաշվի առնելով դրանցում առկա խնդիրները: Ընդ որում երկաթգծային երթուղու դեպքում խնդիրը ոչ միայն Ռաշթ-Ասթարայի կառուցված չլինելն է, այլ նաև այն, որ ադրբեջանական կողմը տարիներ է, ինչ արտաքին ֆինանսավորմամբ Բաքու-Ասթարա, Բաքու-Յալամա (ՌԴ սահման) երկաթգծերի վերանորոգում է նախատեսում[20]: Իսկ ավտոճանապարհի դեպքում առկա խնդիրներից են բարձր մաքսատուրքերը, բեռնատարների հերթերի գոյացումը, որոնք հատկապես իրանական գյուղմթերքի փչանալու պատճառ են դառնում:Շատ հաճախ իրանական ԶԼՄ-ները նաև գրում են, որ այդ հերթերն արհեստական են, և Ադրբեջանն Իրանին ռուսական շուկայից դուրս թողնելու միտումով է խնդիրներ ստեղծում[21]:

Այս պայմաններում Իրանի համար կարևորվում է ավելի անկախ երթուղու գործարկումը, որն այս դեպքում Կասպից ծովով է: Եվ չնայած այստեղ ևս ենթակառուցվածքային խնդիրներ կան, այդ թվում՝ դեռ վերջնական չկառուցված երկաթուղուց մինչև նավերի պակաս, սակայն վերջին երկու տարիներին Ադրբեջանի հետ խնդիրների սրման ֆոնին Թեհրանը լծվել է այս երթուղու զարգացման գործին:

Այսպիսով Ադրբեջանն առայժմ չի ֆինանսավորում Ռաշթ-Ասթարա երկաթուղու կառուցումը, իսկ Ռուսաստանը, որը հետաքրքրություն է ցույց տալիս դրա նկատմամբ, ամենայն հավանականությամբ, պատերազմի պատճառով կդժվարանա ֆինանսական և այլ հնարավորություններ տրամադրել երկաթուղու պակասող մասի կառուցման համար: Սա գիտակցում են նաև Իրանում ու ընդգծում, որ անկախ այլ երկրների շահագրգռվածությունից պետք է ջանալ երկաթուղին կառուցել սեփական միջոցներով[22], սակայն ինչպես հուլիսի սկզբին հայտարարել է Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարարը նախարարության մեկ տարվա ամբողջ բյուջեն անգամ բավարար չէ այդ երկաթուղու կառուցման համար[23]: Ըստ էության երկաթուղու՝ իրանական միջոցներով կառուցելու հավանականությունն ավելի բարձր կլինի միայն պատժամիջոցների վերացման դեպքում:

Այս պայմաններում Իրանի համար վստահելի երթուղի կարող է լինել Հայաստանը: Սակայն հայկական երթուղին մրցակցային կարող է դառնալ միայն Հայաստանի Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու կառուցման դեպքում, ինչը բազմիցս կարևորվել ու շեշտադրվել է նաև իրանական կողմից: Թեհրանը նաև պատրաստակամություն է հայտնել մասնակցել այս ավտոմայրուղու կառուցմանը: Իրանում նաև ինչում են կարծիքներ, որ Ջոլֆա-Նախիջևան-Հայաստան երկաթուղու գործարկման դեպքում Ռաշթ-Ասթարայի նշանակությունը կարող է նվազել[24]: ■

Ծանոթագրություն

1. Տես ایران عملیات آزمایشی حمل کالا از کریدور شمال - جنوب را آغاز کرد, https://bit.ly/3No5U9S, 11.06.2022, (մուտք՝ 26.06.2022):
2. Տես Ղազախստան-Թուրքմենստան-Իրան երկաթուղին՝ տարածաշրջանային համագործակցության հաջողված օրինակ, https://parstoday.com/hy/news/uncategorised-i175148, 20.06.2022, (մուտք՝ 26.06.2022)
3. Տես ایران، ترکمنستان و قزاقستان تفاهمنامه سه جانبه ریلی امضا کردند, https://www.irna.ir/news/84556091/, 26.11.2021, (մուտք՝ 26.06.2022):
4. Տես Первый грузовой поезд отправлен из России в Индию через Казахстан, https://inbusiness.kz/ru/last/pervyj-gruzovoj-poezd-otpravlen-iz-rossii-v-indiyu-cherez-kazahstan, 11.07.2022, (մուտք՝ 12.07..2022):
5. Տես بهره برداری از فاز نخست راه آهن آستارا - آستارا, https://www.yjc.news/fa/news/6483851/, 27.03.2018, (մուտք՝ 26.06.2022):
6. Տես نماینده آستارا: سرمایه‌گذاری جمهوری‌آذربایجان در راه‌آهن پیگیری می‌شود, https://www.irna.ir/news/84138577/, 07.12.2022, (մուտք՝ 26.06.2022):
7. Տես بهره برداری از راه‌آهن رشت با حضور دکتر روحانی/ اتصال گیلان به شبکه ریلی سراسری کشور, https://president.ir/fa/108404 , 06.03.2019, (մուտք՝ 26.06.2022):
8. Տես Iran made Qazvin to Rasht railway ready for official opening ceremony, https://www.youtube.com/watch?v=VZLD0Sp3OeE , 02.03.2019, (մուտք՝ 26.06.2022):
9. Տես عملیات ساخت راه‌آهن رشت به آستارا از سر گرفته شد, https://www.irna.ir/news/84031715/, 08.09.2020. (մուտք՝ 26.06.2022):
10. Տես امضاي سند همكاري هاي مشترک اقتصادي ايران و آذربايجان, https://www.iribnews.ir/fa/news/2068121/ , 14.03.2018, (մուտք՝ 26.06.2022):
11. Տես Azərbaycan-İran biznes forumuda İlham Əliyevin nitqi, https://president.az/az/articles/view/27637, 29.03.2018, (մուտք՝ 26.06.2022):
12. Տես سفیر ایران در باکو: در این روزهای دشوار، انتظار اتمان از دوستانمان زیاد است, https://bit.ly/39XtNYk, 08.11.2018, (մուտք՝ 26.06.2022):
13. Տես خبر خوش وزیر اقتصاد از توافق ایران با روسیه/ جزییات دستاورد اقتصادی سفر رئیس‌جمهور به روسیه, https://www.khabaronline.ir/news/1594748/, 21.01.2022, (մուտք՝ 26.06.2022):
14. Տես سرمایه‌گذاری مسکو و باکو در مسیر تحریم شکن, https://www.irna.ir/news/84640118/, 06.02.2022, (մուտք՝ 26.06.2022):
15. Տես Новак: транспортный коридор "Север - Юг" станет основой для цепи поставок в России, https://tass.ru/ekonomika/14442643, 21.04.2022, (մուտք՝ 26.06.2022):
16. Տես امیدواریم با واقع‌بینی آمریکا در آینده نزدیک به توافق برسیم/لاوروف:روی ابتکار «توافقی بزرگ» کار می‌کنیم, رئیس‌جمهور ایران برای, https://www.irna.ir/news/84799353/, 23.06.2022, (մուտք՝ 26.06.2022):
17. Տես توافق دو کشور برای تولید مشترک خودرو و تراکتور/ خواستار عادی سازی روابط با جمهوری ارمنستان هستیم, https://www.irna.ir/news/84811258/ , 04.07.2022, (մուտք՝ 04.07.2022):
18. Տես بودجه وزارتخانه کمتر از ساخت ۱۶۰ کیلومتر راه‌آهن است, https://www.isna.ir/news/1401041308862/, 04.07.2022, (մուտք՝ 04.07.2022):
19. Տես اتصال رشت ـ کاسپین به شبکه ریلی تا پایان امسال, https://www.ana.press/news/661720/, 30.05.2022, (մուտք՝ 26.06.2022):
20. Տես В Баку обсужден ход строительства ж/д Баку-Ялама, http://interfax.az/view/858253, 11.02.2022, (մուտք՝ 26.06.2022):
21. Տես فشار محور ترکیه-آذربایجان بر محورهای تجاری-ترانزیتی ایران, https://www.mehrnews.com/news/5120084/, 12.01.2021, (մուտք՝ 26.06.2022):
22. Տես بهره‌برداری از خط‌آهن استراتژیک رشت-آستارا با سرمایه‌گذاری مردم, https://www.tasnimnews.com/fa/news/1401/03/01/2714796/, 22.05.2022, (մուտք՝ 26.06.2022):
23. Տես بودجه وزارتخانه کمتر از ساخت ۱۶۰ کیلومتر راه‌آهن است, https://www.isna.ir/news/1401041308862/ , 04.07.2022, (մուտք՝ 04.07.2022):
24. Տես بازگشایی خط‌آهن جلفا-روسیه-اروپا مستلزم دیپلماسی منطقه‌ای در قفقاز جنوبی/دولت بعد راه‌اندازی خط را دنبال کند, https://www.farsnews.ir/news/14000406000756/, 28.06.2021, (մուտք՝ 26.06.2022):

Հետխորհրդային Ադրբեջանի ամբողջատիրական քաղաքականությունը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ ի իրանագիտության ամբիոնի աշխատակից

Ադրբեջանական կապիտալիզմի սոցիալական դաժանությունը:

Բաքու հաճախակի այցելող ճանապարհորդների աչքին անմիջապես զարնում են այն խոր դառնությունն ու աճող կորստի զգացողությունը, որ քաղաքացիների մեծ մասն ունի վատթարացող կյանքի հանդեպ: Անկախության կարճատև ցնծությանը հաջորդեց այն բանի գիտակցությունը, որ, այսպես կոչված, անցումային շրջանը շատերի կյանքից երկար կտևի: Խաղաղության, անկախության և բարգավաճման խոստումները, որ թվում էր, թե պետք է հաջորդեին կոմունիստական շրջանին, տասը տարվա ընթացքում հօդս ցնդեցին: ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանն անկում ապրեց և հայտնվեց երրորդ աշխարհի երկրների շարքում: Կապիտալիզմը հաղթեց, և իշխանության ու հարստության համար մղվող դասային պայքարը՝ որպես պատմության անիվը պտտող հիմնական ուժ, արժեզրկվեց: Ժողովրդի համատարած վրդովմունքի հիմնական պատճառն այն է, որ բարեփոխումների սկսվելուց ի վեր, առաջընթացի փոխարեն, երկիրն ավելի խորն է գլորվել անդունդը: Ահա թե ինչի հանգեցրեց Ադրբեջանի անկախության առաջին տասնամյակը:

Ադրբեջանցիների մեծ մասը ծայրահեղ չքավոր է, քանի որ ամբողջ ազգը վարակված է կաշառակերությամբ՝ սկսած երթևեկության կարգուկանոնի պահպանությանը կոչված ոստիկաններից մինչև բարձրաստիճան պաշտոնյաները: Բայց գոյություն ունի նաև հին՝ խորհրդային ժամանակների համար անգամ աներևակայելի, աչքի զարնող մեկ այլ Ադրբեջան: «Անցումային» կապիտալիզմն անսահման հնարավորություններ է ստեղծել ստվերային շուկայի զարգացման համար, որը շատ արագ մոնոպոլիզացվել է այն մարդկանց կողմից, որոնք կապեր ունեն երկրի ազդեցիկ ընտանիքի հետ: Ամենաշահութաբերը նավթի մաքսանենգությունն է, որի հետևանքով միլիոնավոր դոլարների եկամուտ բերող նավթը լցանավերով տեղափոխվում է Վրաստան, Թուրքիա, Ուկրաինա և Ռուսաստան՝ շրջանցելով նավթի հիմնական առևտուրը վերահսկող ադրբեջանական մարմիններին:

Առավել մտահոգիչ է այն, որ կառավարությունն ի վիճակի չէ բավարարելու հասարակական ծառայությունների և սոցիալական բարեկեցության նվազագույն պահանջները, առավել ևս ապահովելու այն արտոնությունները, որոնք հասարակությունն ուներ նախքան անկախություն ձեռք բերելը: Պետական կրթական համակարգը փլուզվել է, առողջապահությունը՝ վատթարացել, խղճուկ կենսաթոշակներն այդպես էլ չեն վճարվել, և փլուզվել է սոցիալական հավասարությունը քիչ թե շատ

ապահովող համակարգը:

Ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդները մեղադրում են կառավարությանը, որ վերջինս, կեղծելով մարդահամարի տվյալները, չի հայտնում արտագաղթած տղամարդկանց և կանանց իրական թիվը: Մոտավորապես 20 տարեկանից սկսած՝ տղաները հեռանում են երկրից: Սրա վերաբերյալ ոչ մի պաշտոնական տվյալ չկա, քանի որ կառավարությունը հերքում է **խնդրի գոյությունը**[1]: Համեմատական վերլուծությամբ ցույց է տրվում, որ ԱՀ պաշտոնական աղբյուրները հետևողականորեն խեղաթյուրում են միգրացիոն հոսքերի պատկերը, մահացությունների և ծնելիության վիճակագրությունը՝ արհեստականորեն ավելացնելով Ադրբեջանի բնակչության պաշտոնական թվաքանակը 2.0-2.2 միլիոնով: Սկսած 1996-1997 թվականներից՝ պաշտոնական Բաքուն խեղաթյուրում է բնակչության աճի տարեկան տեմպի և բնակչության սեռական կազմի մասին տվյալները: Հավատարիմ տասնամյակներ ձգվող «ավանդույթներին»՝ պաշտոնական Բաքուն շարունակում է հետևողականորեն աղավաղել երկրի բնակչության ազգային կազմի մասին տվյալները:

Ինստիտուցիոնալացված կոռուպցիա

Երբ կաշառակերությունը տիրում է ղեկավարության վերին օղակներում, այն իր արտահայտությունն է գտնում հասարակության մեջ: Մարդիկ կարծում են, թե պետք է վճարեն ու կաշառք ստանան, և այս կերպ կոռուպցիան ինստիտուցիոնալացվում է: Ադրբեջանցիները շատ են սիրում ասել, թե կոռուպցիան այնքան բնորոշ է իրենց պետությանը, որ, առանց դրա, երկիրը պարզապես չի կարող գոյատևել: Նավթային եկամուտների հոսքի և համատարած կաշառակերության վերաբերյալ իր հոդվածում ամերիկացի լրագրող Ջ. Գոլդբերգը

ժամանակին հասարակ ադրբեջանցիներին հարց էր տվել, թե ինչու, չնայած համատարած կաշառակերությանը, Ադրբեջանում չկա մաֆիա: Տեղացի մի գործարար բացատրել էր. «Երբ կաշառակերությունը գալիս է ղեկավարությունից, էլ մաֆիայի կարիք չի լինում. պետությունն ինքնին մաֆիա է»[2]: Սակայն այս բոլոր հանցանքները խամրում են նավթային մաքսանենգության դիմաց, որը պետական մասշտաբով իրականացվում է նախագահական ընտանիքի կողմից: Վերջինս իր ձեռքում է պահում արտահանման բացարձակ մենաշնորհը, ինչպես նաև նավթային արտադրանքի տեղական բաշխումը: Տարիներ առաջ նախագահ Ալիևի եղբայր Ջալալ Ալիևին է պատկանել «Azpetrol» կոչվող ազգային բենզալցակայանների կարտելը: Վրաստանի կառավարության վիճակագրական տվյալների համաձայն՝ ամեն տարի ԱՀՆՊԸ-ն Վրաստանի սևծովյան Բաթումի և Փոթի նավահանգիստներով արտահանել է 6.5 մլն տոննա ավելի հում նավթ, քան հայտնել են Ադրբեջանի կառավարության պաշտոնյաները: Այս չհայտարարագրված տեղափոխումների միջոցով նախագահական կլանը տարեկան ստացել է մոտ 1 մլրդ դոլարի եկամուտ[3]: Մի քանի միջազգային ուսումնասիրություններ ցույց են տվել, որ Ադրբեջանը դարձել է աշխարհի ամենակոռումպացված երկրներից մեկը:

Հեյդար Ալիև:

Սկսած 1969 թվականից՝ 33 տարի (ներառյալ 1987-1993 թթ. վեցամյա ընդմիջումը) Ալիևը եղել է Ադրբեջանի գլխավոր ղեկավարը: Պոլիտբյուրոյի որոշ հուշագիրներ նշում են, որ 1988 թ. Սումգայիթում և Բաքվում տեղի ունեցած հայկական առաջին ջարդերը Կրեմլում իշխանության համար մղվող պայքարի արտացոլումն էին: Դրանք կառավարում էին Ալիևի հին կադրերը, որոնք հույս ունեին Գորբաչովի կողմից նշանակված Ա. Ռ. Վեզիրովի փոխարեն, ով «չափից ավելի ազնիվ էր հանրապետությունում կազմակերպված հանցավորության համար», Ադրբեջանում վերականգնել Ալիևի իշխանությունը[4]: Հեյդար Ալիևի քաղաքական ծրագրի հիմնական կարգախոսն էր անգործունակ քաղաքական գործիչների՝ իրավասու և գործունյա քաղաքական գործիչներով փոխարինումը[5]: Եվ իշխանության, և՛ ընդդիմության քաղաքական մանևրները կենտրոնացած էին Հեյդար Ալիևի ժառանգության շուրջ: Հ. Ալիևը դեռևս 1994 թ., երբ եկավ իշխանության, իր որդուն՝ Իլհամ Ալիևին, նշանակեց ադրբեջանական նավթային ընկերության՝ «ՍՈԿԱՐ»-ի փոխնախագահ: Նախագահի պաշտոնում Իլհամին ժառանգորդ նշանակելու գործընթացի օրինականացման համար նախագահ Ալիևն առաջարկեց Սահմանադրության մեջ կատարել 39 փոփոխություն և 2000 թ. օգոստոսին դրանց հաստատման համար հանրաքվե անցկացրեց: Ամենակարևոր փոփոխությունն այն էր, որ նախագահի մահվան, հրաժարականի կամ անաշխատունակության

Ադրբեջանի մայրաքաղաքն այսօր

դեպքում նրա պարտականություններն անցնում էին վարչապետին: Տեղի քաղաքական գործիչները միաձայն պնդում են, որ այդ փոփոխությունների նպատակն էր Հեյդար Ալիևին իրավունք տալ որդուն նշանակելու վարչապետի պաշտոնում, ինչը հետագայում նրա համար կապահովեր նախագահի աթոռը:

Ներքին դրությունը Ադրբեջանում Իլհամ Ալիևի օրոք:

Ադրբեջանի ներքին և արտաքին քաղաքականության համար որոշ առումով բախտորոշ տարեթիվ էր 2003 թվականը: Երկրի նախագահ դարձավ Իլհամ Ալիևը, որը շարունակեց իր հոր՝ Հեյդար Ալիևի ուղին՝ որոշ նորամուծություններ մտցնելով քաղաքական դաշտում: Նախ Իլհամի՝ իշխանության գալուց հետո երկրում քաղաքացիական ազատության մակարդակը շեշտակի հետընթաց արձանագրեց: Այսպես՝ «Freedom House» միջազգային կազմակերպության ամենամյա զեկույցներում 2003 և 2004 թվականներին Ադրբեջանը համարվել է «մասամբ ազատ» պետություն, մինչդեռ 2005 թվականից ի վեր այն ներառվել է «անազատ» երկրների շարքում[6]: Ալիևն առնվազն կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում կարողացել է համախմբել իշխանությունը և կայունություն ապահովել Ադրբեջանում, սակայն, իշխանական համակարգի հովանավորչական բնույթը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հեռանկարում կայունությունը խոցելի է՝ պայմանավորված վերնախավի կլանային մրցակցությամբ:

Կառավարությունն ունի նեոֆեոդալական համակարգի բնույթ. երկրի նախագահը բաշխում է տնտեսության եկամտաբեր ճյուղերից ստացված եկամուտները, թույլ տալիս թիմակիցներին հավաքել գումարներ և նույնիսկ վերահսկել տվյալ շրջանը կամ տարածքը: Իշխանական համակարգը գործում է վերևից ներքև սկզբունքով: Իշխող վերնախավն իր շուրջը ստեղծում է նմանատիպ հովանավորչական ցանցեր՝ առանցքային պաշտոններում նշանակելով իր թիմակիցներին ու ազգականներին:

Երկրի նախագահը հանդես է գալիս ոչ միայն

որպես իշխանություն և եկամուտներ բաշխող, այլև որպես հարցեր կարգավորող: Մի կողմից նա համակարգը միասնական է պահում՝ հանդես գալով որպես կապող օղակ վերնախավի անդամների միջև մրցակցությունում, մյուս կողմից՝ կիրառում «բաժանի՛ր, որ տիրես» մարտավարությունը՝ միակենտրոն ու միանձնյա իշխանություն ունենալու նպատակով: Ուստի, ըստ էության, Իլհամ Ալիևի թիմից որևէ անդամ հայտնի չէ, բայց և այնպես, Ալիևի իշխանությունը կախյալ վիճակում է այն մարդկանցից, որոնք շրջապատում են իրեն:

Ադրբեջանի Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը և Ալիևի դոկտրինը:

Ադրբեջանի Հանրապետության տնտեսական համակարգը մոնոտնտեսություն է՝ կառուցված ածխաջրածինների (հում նավթ, հարակից նյութեր և բնական գազ) զգալի պաշարների, դրանց արդյունահանման և արտահանման վրա: ԱՀ իշխանությունները երկրի ածխաջրածինների պաշարներն ընկալում են որպես ռևանշի միջոց թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի նկատմամբ: Ավելին՝ այդ ընկալումը դյուրինացրեց 1990-ական թթ. սկզբին Հ. Ալիևի կողմից իշխանության զավթումը: Հանրությանը նա ներկայացավ իբրև «փրկիչ», որն ազգի ցավերն ամոքելու, հայերից վրեժխնդիր լինելու և ազգի բարեկեցությունն ու երկրի զարգացումն ապահովելու ծրագիր ունի:

Ալիևի դոկտրինի ռազմավարական և աշխարհաքաղաքական բաղադրիչը պետք է դիտարկել 20-րդ դարի 50-ական թթ. վերջի և 70-ական թթ. սկզբի այն գործընթացների ծիրում, երբ արաբա-իսրայելական հակամարտության ենթատեքստում և ավելի լայն՝ գաղութատիրական համակարգի դեմ «երրորդ աշխարհի» ու «չմիացած երկրների» պայքարի ընթացքում նավթային հարստությունը և նավթի տարանցիկ ուղիները սկսեցին դիտարկվել որպես աշխարհաքաղաքական զորեղ գործիք[7]: Ալիևի դոկտրինը հակադրության մեջ է մեր տարածաշրջանի 6 երկրներից անմիջականորեն 3-ին (Հայաստան, Իրան, ՌԴ)՝ պատանդ վերցնելով տարածաշրջանի 4-րդ երկիրը՝ տրանզիտային Վրաստանը: Իրականում Անդրկովկասի ներկայիս պառակտման հիմքում ընկած են հենց Ալիևի դոկտրինը և գաղութատիրական աշխարհաքաղաքական իրողությունները, այլ ոչ թե հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ազատագրական պայքարը: Այն անշեղորեն և գրեթե անփոփոխ կյանքի կոչվեց 1990-ական թթ. կեսից սկսած մինչև 2007-2008 թթ.՝ մի կողմից ապահովելով Ադրբեջանի համախառն ներքին արտադրանքի տպավորիչ աճը, մյուս կողմից՝ տարածաշրջանում Հայաստանը համառորեն շրջանցող էներգատրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը, լինեն դրանք նավթատարներ և գազատարներ, մայրուղի, երկաթուղի (Բաքու-Թբիլիսի-Կարս) թե էլեկտրաէներգիայի բարձրավոլտ հաղորդագծեր (Բորչկա-Ախալցխա 400 կվ լարման

Հակասությունների քաղաք Բաքուն

գիծ):

Ադրբեջանն ու «Freedom House»-ը:

Չնայած այն բանին, որ Ադրբեջանը Եվրոպայի խորհրդի ու Մարդու իրավունքների խորհրդի անդամ է, նա շարունակաբար ենթարկվում է քննադատության մի շարք միջազգային մարմինների կողմից, ինչպիսիք են ԱՄՆ Պետդեպարտամենտը, «Amnesty International»-ը, «Freedom House»-ը, «Human Rights Watch»-ը և այլն:

ԱՄՆ-ում գտնվող «Freedom House»-ը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հեղինակավոր կազմակերպություն է, որի կողմից 2014 թվականից ի վեր Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 29 երկրներում իրականացված հետազոտության արդյունքներն ամփոփող վերլուծական զեկույցում Ադրբեջանը դասվում է ավտորիտար երկրների շարքը: Ադրբեջանում ազատ խոսքի և իրավապաշտպանների նկատմամբ գործադրվող ճնշումների՝ Իլհամ Ալիևի վարած հետադիմական քաղաքականությունը երկիրը հեռացնում է ԱՄՆ-ի և Եվրոպայի որդեգրած արժեքներից, և արդեն հասել է ժամանակը, որ միջազգային հանրությունը պատժամիջոցներ կիրառի Բաքվի դեմ:

ԱՄՆ Պետդեպարտամենտի՝ մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցներում պարբերաբար նշվում է, որ ավելացել են ազատ արտահայտվելու սահմանափակումները, նաև ահաբեկչությունը, ձերբակալությունները և ուժի կիրառումը լրագրողների և մարդու իրավունքների ու ժողովրդավարության պաշտպանությամբ հանդես եկող ակտիվիստների նկատմամբ:

Ադրբեջանի ամբողջատիրական քաղաքականության դրսևորումներից է նաև *ինֆորմացիոն կամ տեղեկատվական պատերազմը:*

Ներկայումս Ադրբեջանը, այսպես կոչված, տեղեկատվական պատերազմ է վարում Հայաստանի

դեմ: Տեղեկատվական պատերազմը այնպիսի գործողություն է, երբ հակառակորդը թափանցում է տվյալ երկրի պետական համակարգ և օգտագործում ցանկացած օգտակար տեղեկություն, որպեսզի խաղաղ ժամանակ հակառակորդի դեմ պատերազմ վարի: Տեղեկատվական պատերազմների դրսևորումներից են հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ ոտնձգությունը, երկրի լարված մթնոլորտում սոցիալական խմբերի մանիպուլյացիան, անվստահության, կասկածամտության սերմանումը, կրոնական բախումների հրահրումը, այլ երկրների հետ պետության հարաբերությունների խաթարումը:

Դեռևս խորհրդային շրջանում ընթանում էր պատմամշակութային հարստությունը սեփականելու տեղեկատվական պատերազմ: Ադրբեջանցի պատմաբանները ցանկանում էին ադրբեջանականացնել հայերի պատմական ժառանգությունը՝ կեղծելով հայ ժողովրդի պատմությունը: Այսօր ինֆոքաղաքականությունը Ադրբեջանի ռազմավարական կարևոր ուղեգծերից է: Ադրբեջանը հավաքում է տեղեկատվություն, որը կարող է օգտագործել հայության դեմ՝ ներկայացնելով այն սեփական հանրությանը, հայ հանրությանը, իսլամական աշխարհին, ինչպես նաև միջազգային կառույցում որոշումներ կայացնողներին: Որպես թիրախային խումբ նրանք ընտրում են երիտասարդներին: Ադրբեջանական դպրոցական դասագրքերում զետեղված են հայատյացություն սերմանող տեքստեր: Այսպես ադրբեջանցի դպրոցականների նկատմամբ մանիպուլյացիոն միջոցառումներ են իրականացվում հենց Ադրբեջանի նախագահ Ալիևի որոշմամբ:

Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիան մեծ աշխատանքներ է իրականացնում. կեղծելով պատմական փաստերը՝ ներկայացնում է, թե Արցախում բնակվել են թուրքերը, իսկ հայերը եկվորներ են: Արցախի և Հայաստանի պատմության կեղծումը իրականում ՀՀ-ի և Արցախի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիայի արդարացման միջոց է: Կեղծված են նաև Սումգայիթում, Կիրովաբադում և Բաքվում իրականացված հայ բնակչության կոտորածները, որոնք ադրբեջանցիների կողմից ներկայացվում են որպես հայկական սադրանքներ:

Ադրբեջանի նոր հոետորաբանությունը Արցախյան երկրորդ պատերազմից հետո:

2020 թ. արցախյան պատերազմը հանգեցրեց տարածաշրջանում ուժերի վերադասավորության և ադրբեջանական իշխանությունների կոշտ հոետորաբանության ի հայտ գալուն: Ըստ էության, Ադրբեջանը չսահմանափակվեց միայն այն տարածքների վերադարձով, որոնք վիճելի էին, այլ սկսեց ուժային ճնշում գործադրել անմիջապես Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի նկատմամբ: Բացի այդ՝ հաղթողի դիրքերից Ի. Ալիևը պարբերաբար կոշտ հոետորաբանությամբ դիմում է եվրոպական երկրներին, ԱՄՆ-ին և Ռուսաստանին՝ պահանջելով սահմանափակել շփումներն ու աջակցությունը ՀՀ-ին և Արցախի Հանրապետությանը:

Թեպետ Ադրբեջանը տոնում է հաղթանակը, բայց երկրի ներսում դրա ընկալման զգացողությունը բացակայում է: Սա Բաքվին մղում է պակաս հավասարակշռված քաղաքականության. մի կողմից նա փորձում է ճնշում գործադրել Ռուսաստանի և Հայաստանի վրա, մյուս կողմից օգտագործում է Թուրքիայի օգնությունը, բայց փորձում է չափից դուրս կախվածության մեջ չհայտնվել նրանից:

Այս հաղթանակը լուրջ խնդիր է ստեղծել Ադրբեջանում վերջին 20 տարվա ընթացքում իրականացվող քարոզչության համար: Իշխանությունները ժողովրդին վստահեցնում էին, որ հենց ազատագրվեն վիճելի տարածքները, դրանք անմիջապես կբնակեցվեն: Բայց այդ գործընթացը շատ դանդաղ է ընթանում, հիմնականում խոսքը ռազմական ներկայության մասին է, ոչ թե տարածքների կարգավորման: Բացի այդ՝ ի հայտ է եկել ահաբեկչական նոր գործոն: Հայտնի տվյալներով՝ կա մինչև 2000 սիրիացի ահաբեկիչ, որոնք սպասում են իրենց ընտանիքների ժամանմանը այս տարածք: Որպես արդյունք՝ Ադրբեջանի իշխանությունների քարոզչությունը կորցնում է իր հիմքը:

Ընդդիմության նկատմամբ ճնշումները Բաքվում

Հղումներ

1- Տես Rasizade A., Azerbaijan Descending into the Third World After a Decade of Independence, Journal of Third World Studies, Vol. 21, Spring 2004, http://www.kub.info/print.php?sid=6325:
2- Goldberg J., Getting Crude in Baku, The New York Times Magazine, 1998, p. 69.
3- Տես Ибадов Г., Азербайджан и Россия: общества и государства, Москва, 2001, էջ 81-82:
4- Տես Рыжков Н. И., Перестройка: история предательств, Москва, М., 1992, էջ 204-208:
5- Տես Badalov R., The likelihood of the unlikely: Democracy in Azerbaijan at the turn or the 21st century, Identities, ideologies and institutions: A decade of insight into the Caucasus: 2001-2011, Yerevan, Caucasus Institute, 2011, էջ 48-68:
6- Տես https://freedomhouse.org/reports#.VOcTOfnF-Hg:
7- Տե՛ս Մարջանյան Ա., Էներգետիկա և աշխարհաքաղաքականություն, «21-րդ դար», 2003, թիվ 1 (1), էջ 13-552:

ԻԻՀ Փորձագետների խորհուրդը

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Իրանի Իսլամական Հանրապետության պետական-քաղաքական համակարգում առանցքային նշանակություն ունեցող ինստիտուտը Փորձագետների խորհուրդն է (Māğlis-i ḫubrigan i rāhbārī), որին վերապահված է ընտրել երկրի գերագույն հոգևոր առաջնորդին: 1979 թ. Սահմանադրության մեջ նշվում էր, որ հոգևոր առաջնորդը կարող է ընտրվել կամ համապետական ընտրություններով, կամ Փորձագետների խորհրդի կողմից, բայց Սահմանադրության մեջ 1989 թ. կատարված փոփոխություններով հստակեցվեց, որ գերագույն հոգևոր առաջնորդին իրավասու է ընտրելու միայն Փորձագետների խորհուրդը՝ հիմնվելով Սահմանադրության 107-րդ և 108-րդ հոդվածների վրա: Եթե հոգևոր առաջնորդն ի վիճակի չէ կատարելու Սահմանադրությամբ ամրագրված իր պարտականությունները կամ այլևս չի համապատասխանում՝ Սահմանադրության 5-րդ և 109-րդ հոդվածներում նշված պահանջներից որևէ մեկին, կամ եթե բացահայտվում է, որ ի սկզբանե չի համապատասխանել սահմանված պահանջներին, ապա ազատվում է զբաղեցրած պաշտոնից: Սույն հարցի վերաբերյալ որոշում կայացնում են փորձագետները՝ համաձայն 108-րդ հոդվածի[1]: Հոգևոր առաջնորդի մահվան, հրաժարականի կամ իշխանությունից նրան հեռացնելու դեպքում փորձագետները պարտավոր են հնարավորինս շուտ նոր թեկնածու ընտրել և նշանակել հոգևոր առաջնորդ: Մինչ նոր հոգևոր առաջնորդի նշանակումը, Նպատակահարմարության խորհրդի[2] որոշմամբ, երկրի հոգևոր առաջնորդի բոլոր պարտավորությունները ժամանակավորապես պետք է կատարի խորհուրդը, որի կազմում ընդգրկվում են հանրապետության նախագահը, դատական իշխանության ղեկավարը և Սահմանադրության պահապանների խորհրդի ֆիկիհներից որևէ մեկը: Փորձագետների խորհուրդը, բացի հոգևոր առաջնորդ ընտրելուց, կատարում է նաև մեկ այլ գործառույթ, այն է՝ մասնակցում է Սահմանադրության վերանայման գործընթացին[3]: Սահմանադրության վերանայման խորհրդում, ի թիվս այլ գերատեսչությունների, ներառվում են նաև Փորձագետների խորհրդի 5 անդամներ[4]:

Այսպիսով՝ Փորձագետների խորհրդի ընդունած որոշումները բավականին մեծ ու լայն ազդեցություն են ունենում ԻԻՀ պետական կառավարման համակարգի վրա:

Առավել հստակեցնելու համար Փորձագետների խորհրդի ունեցած կարևորությունը հոգևոր առաջնորդի ընտրության հարցում պետք է հասկանալ այս երկու պետական ինստիտուտների միջև գոյություն ունեցող փոխազդեցությունները: Առաջին հայացքից թվում է, թե հոգևոր առաջնորդը որևէ ազդեցություն

չի կարող ունենալ Փորձագետների խորհրդի վրա, բայց վերջինս ընտրվում է համաժողովրդական քվեարկությամբ, իսկ ընտրություններն ու ընտրություններում առաջադրված թեկնածուները, ըստ Սահմանադրության 99-րդ հոդվածի, վերահսկվում են Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից, որի 12 անդամներից 6-ը ընտրվում են հոգևոր առաջնորդի կողմից, իսկ մյուս 6-ը՝ նրա համաձայնությամբ[5]: Հաշվի առնելով այս նրբությունները՝ կարելի է եզրակացնել, որ Փորձագետների խորհրդի անդամների վրա հոգևոր առաջնորդի ազդեցությունը մեծ է, իսկ վերջինս էլ շատ դեպքերում օգտագործում է այս կառույցի՝ իրենից ունեցած կախվածությունը: Նման պարագայում պետք է հիշել, որ ի սկզբանե ԻԻՀ-ն հակասություններ ունեցող պետական կառավարման համակարգ ունի, որում պահպանվում է կառավարման հիերարխիկ ձևը, բայց իրականում պետական կառավարման բոլոր մարմինները մեծ կախում ունեն միայն մեկ օղակից, որն էլ հոգևոր առաջնորդի ինստիտուտն է:

Փորձագետների խորհուրդն իր գործունեության ողջ ընթացքում կայացրել է երկու կարևոր որոշում, որոնցից առաջինը 1985 թ. Հոսեյն Ալի Մոնթազերիին ԻԻՀ հիմնադիր իմամ Խոմեյնիի փոխանորդ նշանակելն էր: 1989 թ., սակայն, ներքաղաքական զարգացումների հետևանքով, երբ Հ. Մոնթազերին դուրս եկավ իշխանության դեմ և սկսեց քննադատել կառավարության որդեգրած քաղաքականությունը քաղբանտարկյալների և մահապատիժների հարցում, Փորձագետների խորհուրդը նրան հեռացրեց պաշտոնից և նույն տարում Ալի Խամենեիին նշանակեց նոր գերագույն առաջնորդ[6]: Նոր առաջնորդի ընտրության նիստը դռնփակ էր, և միայն վերջերս՝ 2018 թ., համացանցում հայտնվեց այդ նիստի տեսագրությունը, որը լայն

քննարկումների տեղիք է տալիս[7]: Նիստը վարում էր հանրապետության նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին (1989-1997), որն առաջադրում էր Ալի Խամենեիի թեկնածությունը: Ա. Խամենեին իր ելույթի ժամանակ նշում է, որ ինքն արժանի չէ այդ պաշտոնին և չգիտի՝ կկարողանա՞ արդյոք արդյունավետորեն կատարել իր առջև դրված պարտավորությունները[8]: Այնուամենայնիվ, Հ. Ռաֆսանջանիի պնդմամբ և Փորձագետների խորհրդի մյուս անդամների համաձայնությամբ, Ա. Խամենեին նշանակվեց Իրանի Իսլամական Հանրապետության հոգևոր առաջնորդ: Թե ինչն էր Հ. Ռաֆսանջանիին դրդել գնալու նման քայլի, անհայտ է, բայց որոշակի ենթադրություններ կարելի է անել: Այսպես՝ ենթադրվում էր, որ Ա. Խամենեին, այսպես ասած, «հեշտ կառավարելի» քաղաքական առաջնորդ կլիներ, ինչը թույլ կտար Հ. Ռաֆսանջանիին երկրի ղեկը վերցնել իր ձեռքը և հետագայում հող նախապատրաստել իր՝ գերագույն հոգևոր առաջնորդ դառնալու համար: Փաստն այն է, որ այժմ Հ. Ռաֆսանջանիից մնացել են միայն հիշողություններ, իսկ Ա. Խամենեին շարունակում է մնալ ԻԻՀ գերագույն հոգևոր առաջնորդը, որը քաղաքական բավականին ազդեցիկ լծակներ ունի:

Իրանցի լրագրող Շահեդ Ալավին, որն առաջինն էր վերոնշյալ տեսանյութը ներբեռնել համացանցում, «Radio Farda»-ին տված հարցազրույցի ժամանակ նշել էր, որ դրա հիմնական նպատակը Իրանում հակակառավարական ալիքը խթանելն էր և ԻԻՀ հոգևոր առաջնորդին հանրության աչքում վարկաբեկելը: Շ. Ալավին ակնարկել է, որ այդ տեսագրությունն իրեն ուղարկել է ԻԻՀ վերնախավից ինչ-որ մեկը: Աբդոլհասան Բանիսադրը, որը ԻԻՀ առաջին նախագահն էր, մեկնաբանելով ստեղծված դրությունը, նշել է, որ այդ տեսագրությունը Շ. Ալավիին կարող էր ուղարկել այնպիսի մեկը, ով աշխատում էր ներսում և կապեր ուներ հոգևոր վերնախավում[9]:

Քաղաքական ակտիվիստ Մահմուդ Դելխասթեն «Huffington Post»-ի համար 2011 թ. գրած հոդվածում նշել է, որ Հ. Ռաֆսանջանին ժողովին է հանձնել ենթադրաբար իմամ Խոմեյնիի կողմից գրված մի նամակ, որում նշված է, որ հաջորդ գերագույն ղեկավարը չպետք է կատարի մեծ այաթոլլահ լինելու սահմանադրական պահանջը: Մ. Դելխասթեն գրել է, որ նախկին նախագահ Ա. Բանիսադրը կասկած է հայտնել նամակի իսկության վերաբերյալ, և այն զննել են ձեռագրերի մի քանի մասնագետներ, որոնք եզրակացրել են, որ այն կեղծել է իմամ Խոմեյնիից շատ ավելի երիտասարդ մեկը, ամենայն հավանականությամբ՝ նրա որդին: Ֆրանսիական «Le Monde» թերթի կողմից 1989 թ. հունիսին այս հոդվածի հրապարակումից հետո Փարիզում ԻԻՀ դեսպանատունը հանդես եկավ բողոքով և ժխտեց դրա իսկությունը[10]:

Կրոնագետ Մոհսեն Քադիվարը, որը մի շարք ուսումնասիրություններ է հրապարակել այաթոլլահ Ա. Խամենեիի՝ առաջնորդ ընտրվելու վերաբերյալ, առաջ է քաշում այն գաղափարը, որ որպես հոգևոր առաջնորդի՝ Հ. Ռաֆսանջանիի թեկնածությունը չի քննարկվել, որովհետև նա չէր կարող դա հմտորեն անել, այդ իսկ պատճառով նա պնդում էր Ա. Խամենեիի թեկնածությունը, որին դիտարկում էր որպես մանիպուլյացիայի համար թույլ գործիք[11]:

Ինչպես արդեն նշեցինք, 1989 թ. Ա. Խամենեիի ընտրության հարցում մեծ ազդեցություն ունեցավ Հ. Ռաֆսանջանին, և այս երկու առաջնորդների հարաբերությունները բավականին ջերմ էին: Հետագայում որոշակի լարվածություն է նկատվում նրանց հարաբերություններում: Այսպես՝ առաջնորդության առաջին տարիներին Ա. Խամենեին նիստերը վարում էր Հ. Ռաֆսանջանիի հետ, սակայն հետագայում նա սկսեց խորհրդակցություններ անցկացնել արդեն իր առանձնատանը, և Հ. Ռաֆսանջանին ստիպված էր լինում հանդիպումներին մասնակցելու համար գնալ այնտեղ: Մյուս կարևոր կետը, որը Հ. Ռաֆսանջանին հաշվի չէր առել, իր դիրքի թուլացումն էր ու միաժամանակ Ա. Խամենեիի հեղինակության աճը: Հենց այդ շրջանում էր, որ Հ. Ռաֆսանջանին մշակում էր կրոնական ղեկավարության և գործադիր իշխանության տարանջատման իր ծրագիրը[12]:

2006 թ. Փորձագետների խորհրդի ընտրություններն ընթացան բավականին լարված մթնոլորտում: Իրենց թեկնածուներին էին առաջադրել ծայրահեղ պահպանողականները՝ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հոգևոր հայր Մոհամմադ Թաքի Մեսբահ-Յազդին և բարեփոխական, նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին: 2007 թ. Հ. Ռաֆսանջանին ընտրվում է Փորձագետների խորհրդի նախագահ՝ առավելության հասնելով հիմնական մրցակից՝ ծայրահեղ կղերական և Սահմանադրության պահապանների խորհրդի քարտուղար Ահմադ Ջաննաթիի նկատմամբ: Խորհրդի 76 անդամներից 41-ը քվեարկել էին նրա օգտին[13]: Նշենք, որ հենց այս ընտրություններին էր, որ Սահմանադրության պահապանների խորհուրդն

Իրանի փորձագետների խորհուրդը՝ Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահությամբ

Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին

առաջին անգամ թույլատրել էր նաև կանանց և աշխարհիկներին առաջադրել իրենց թեկնածուներին, սակայն նրանք որակազրկվեցին, քանի որ չէին համապատասխանում իսլամական անհրաժեշտ չափորոշիչներին[14]:

Փորձագետների խորհրդի ընտրությունները տեղի են ունենում 8 տարին մեկ անգամ: Վերջին ընտրությունը տեղի է ունեցել 2016 թ. մայիսի 24-ին, որի ժամանակ Փորձագետների խորհրդի նոր նախագահ է ընտրվել այաթոլլահ Ահմադ Ջաննաթին, որը ստացել էր 51 դրական ձայն 86 անդամներից: Ա. Ջաննաթին պահպանողական էր և ակտիվորեն քննադատում էր նախագահ Հասան Ռոհանիի որդեգրած քաղաքականությունը, որը միտված էր վերականգնելու հարաբերությունները ԱՄՆ-ի հետ[15]: Ա. Ջաննաթին շուրջ 28 տարի գլխավորել էր ԻԻՀ Սահմանադրության պահապանների խորհուրդը և Արևմուտքի հետ հարաբերություններում կոշտ թևի կարկառուն ներկայացուցիչ էր: Հաշվի առնելով գործող հոգևոր առաջնորդ Ա. Խամենեիի տարիքը և հիվանդությունը՝ կարելի է ենթադրել, որ Փորձագետների խորհրդի հենց այս կազմին է վերապահված ընտրելու նոր գերագույն առաջնորդին:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Փորձագետների խորհուրդը հոգևոր առաջնորդի վերահսկողությամբ և անմիջական ղեկավարությամբ գործող կառույց է, որն առաջին հայացքից, թվում է, թե անկախ է, սակայն իրականում հոգևոր առաջնորդի ձեռքում կենտրոնացած գործիք է, որն էլ վերջինս օգտագործում է հոգուտ իրեն և իր իշխանության շարունակականության ապահովման համար: ■

Հղումներ

1. Տես Matn-e qāmel-e qānuni-ye asāsi-ye ǧomhūrī-ye Eslāmī-ye Īrān hamrāh-e bā eṣlāḥāt-e sāl-e 1368, Aṣl-i 108 (ԻԻՀ Սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989 թ. փոփոխություններով, հոդված 108), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf (մուտք՝ 30.05.2019):

2. Խորհրդակցական մարմին, որին վերապահված է հարթել Սահմանադրության պահապանների խորհրդի և Խորհրդարանի միջև ծագած վեճերը:

3. Տես Mātn-i Kamil-i Qanūn-i Asasī-i Ǧumhūrī-yi Islam-i Īran Hāmrah ba Iṣlaḥat-i Sal-i 1368, Aṣl-i 177 (ԻԻՀ Սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989 թ. փոփոխություններով, հոդված 177), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf (մուտք՝ 30.05.2019):

4. Տես Mātn-i Kamil-i Qanūn-i Asasī-i Ǧumhūrī-yi Islam-i Īran Hāmrah ba Iṣlaḥat-i Sal-i 1368, Aṣl-i 108 (ԻԻՀ Սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989 թ. փոփոխություններով, հոդված 108), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf (մուտք՝ 30.05.2019):

5. Տես Mātn-i Kamil-i Qanūn-i Asasī-i Ǧumhūrī-yi Islam-i Īran Hāmrah ba Iṣlaḥat-i Sal-i 1368, Aṣl-i 99 (ԻԻՀ Սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989 թ. փոփոխություններով, հոդված 99), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf (մուտք՝ 30.05.2019):

6. Տես Cage M., Why Iran's Assembly of Experts election is the real race to be watching, By Farzan Sabet, The Washington Post, https://www.washingtonpost.com/news/monkey-cage/wp/2016/02/24/why-irans-assembly-of-experts-election-is-the-real-race-to-be-watching (մուտք՝ 25.02.2021):

7. Տես Bezhan F., Leaked Video Of Khamenei Raises Questions About Iran's Supreme Leadership, https://www.rferl.org/a/iran-khamenei-leaked-video-1989-questions-leadership/28969517.html (մուտք՝ 29.03.2021):

8. Տես նույն տեղում:

9. Տես նույն տեղում:

10. Տես Lipin M., Haghighi B., Iranian Dissidents Say Rafsanjani Legacy Defined by Sinister Acts, https://www.voanews.com/world-news/middle-east-dont-use/iranian-dissidents-say-rafsanjani-legacy-defined-sinister-acts?fbclid=IwAR3k5rs8RJR_rwMmWxsQHf_jkPeP-Gy195O-6v1qLt8e2Ehr90VN-VS_PaUg (մուտք՝ 03.03.2021):

11. Տես Mihrabānī I., Čira Ḫaminh-i rāḥbār šud ū Hašimī nāšud? (Մեհրաբանի Է., Ինչու՞ Խամենեին դարձավ հոգևոր առաջնորդ, իսկ Ռաֆսանջանին՝ ոչ), https://www.radiofarda.com/a/Iran-leadership-why-khamenei-and-not-rafsanjani/29986610.html?fbclid=IwAR2hn8mL6rmDVdbjOB0pxWygHij5CJstonUC7caIke9HBag3BipgZmSC2sk (մուտք՝ 14.09.2021):

12. Տես նույն տեղում:

13. Տես Slackman M., Ex-President Back in Spotlight in Iran, as He Wins Leadership of Council, The New York Times, https://www.nytimes.com/2007/09/05/world/middleeast/05rafsanjani.html (մուտք՝ 29.03.2021):

14. Տես Farideh F., The Assembly of Experts, https://iranprimer.usip.org/sites/default/files/Politics_Farhi_Assembly%20of%20Experts_0.pdf (մուտք՝ 14.09.2021):

15. Տես Iran hardliner Jannati elected head of Assembly of Experts, BBC News, https://www.bbc.com/news/world-middle-east-36366595 (մուտք՝ 29.03.2021):

Ադրբեջանի Հանրապետության անվանակոչման հարցի շուրջ

Արարատ Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

Մուտք

Թուրք-ադրբեջանական տանդեմը մեր ժամանակներում և հատկապես վերջին մեկ-երկու տարում վարում է, ըստ էության, ոչ միայն տաք, այլև այն լրացնող և սպասարկող հակահայկական ապատեղեկատվական պատերազմ: Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ ագրեսիվ-զավթողական նկրտումներն արդարացնելու ու «հիմնավորելու» համար կեղծվում ու խեղաթյուրվում են ոչ միայն ներկայիս իրողությունները, այլև պատմությունը: Դա պետական պաշտոնական մակարդակով, հատուկ հանձնարարությամբ կատարում են նաև Ադրբեջանի հին ու նոր պատմաբանները, և դրա «արդյունքների» մասին ժամանակ առ ժամանակ հրապարակավ հանդես է գալիս ԱՀ նախագահ Իլհամ Ալիևը: Դժվար չէ նկատել, որ նրանք հավակնություններ ունեն տիրանալու ոչ միայն Արցախին, այլև բուն ՀՀ տարածքներին՝ Սյունիքին, Սևանա լճի ավազանին, անգամ Երևանին: Այս կապակցությամբ, ի պատասխան Ադրբեջանի ղեկավարության հավակնություններին, տեղին ու դիպուկ է արձագանքել ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Աննա Նաղդալյանը 2021 թ. ապրիլյան իր ճեպազրույցներից մեկի ժամանակ. «Ձավեշտալի է, երբ Հայաստանի և իր բնօրրանում ապրող հայ ժողովրդի նկատմամբ տարածքային պահանջներ է ներկայացնում ղեկավարը մի երկրի, որի անվանումն անգամ Հարավային Կովկասի տարածքում ունի միայն մեկդարյա պատմություն թե՛ քաղաքական և թե՛ անգամ աշխարհագրական առումներով: Մենք հասկանում ենք, որ Ադրբեջանում վերջին հարյուր տարում ընթացել և ընթանում է նոր ինքնության ձևավորման գործընթաց»[1]: Ահա, ի լրումն դրա, կներկայացնենք 1920 թ. ՀՀ «Յառաջ» պաշտոնաթերթում հրապարակված մի վավերագիր-վկայություն (խոստովանություն) այն մասին, թե երբ, ինչպես, ինչ նպատակով և ում կողմից է առաջին անգամ անվանակոչվել Ադրբեջանի Հանրապետությունը:

Ադրբեջան անվան ծագման նախահիմքերը

Նախ պարզաբանենք մի հարց. իրականում ինչպե՞ս է առաջացել Ադրբեջան անվանումը, և ո՞վ է 1918 թ. մայիսի 28-ին առաջին անգամ նորանկախ այդ հանրապետությունը կոչել Ադրբեջանի Հանրապետություն:

Գիտական գրականության մեջ Ադրբեջան անվանումը բացատրվում է իրանական Ատրպատական երկրամասի անվանումով (եզրով): Համաձայն իրանական հեթանոսական (նախաիսլամական) զրադաշտական կրոնի սուրբ գրքի՝ «Ավեստայի»՝ գրված իրանական հին լեզուներից զենդերենով, որը ստեղծվել է Աքեմենյանների տիրակալության շրջանում՝ Ք. ա. 1-ին հազարամյակի կեսերին, Իրանի հյուսիսային մասում ընկած Ատրպատականի երկրամասը հնում կոչվել է Ատրոպատե, որը միջին պարսկերենում՝ պահլավերենում, թարգմանաբար նշանակել է «ատրուշան», հայերեն բացատրությամբ՝ «կրակարան», «կրակատուն արևապաշտների», «կրակի տուն» կամ «կրակի տաճար»: Հայ մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանի մեկնաբանությամբ՝ այդ բառի առաջին մասը՝ ատր-ը (պահլավերեն atu), թարգմանաբար նշանակել է «կրակ», իսկ երկրորդ մասը, ըստ նրա, առայժմ մեկնաբանված չէ[2]: «Հայկական սովետական հանրագիտարանում» (ՀՍՀ) (հոդվածի հեղինակ՝ ակադեմիկոս Ս. Երեմյան) «ատրուշան»-ը բացատրվում է հետևյալ կերպ՝ պահլ. atur – «կրակ» և san – «տեղ, կրակարան, կրակատուն, մեհյան, որտեղ պահվում էր «սուրբ» անշեջ կրակը»[3]: Ըստ լեզվաբան, ակադեմիկոս Էդ. Աղայանի՝ ատրուշանը այն տեղն էր, որտեղ կրակը միշտ վառ էր պահվում, այլ խոսքով՝ կրակատուն[4]: Հայկ. ՍՍՀ ԳԱ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» «ատրուշան»-ը դարձյալ մեկնաբանվել է որպես «կրակատուն», «կրակապաշտների պաշտամունքի տեղ»[5]:

«Ատրոպատե»-«ատրուշան» բառի նման լեզվաբանական մեկնությունների ու հղումների նպատակն էր ցույց տալ, որ դրա նախահիմքը Հյուսիսային Իրանի Ատրոպատեն-Ատրպատական երկրամասի անվանումն է, որից էլ արդեն մեր ժամանակներում աշխարհագրական ու քաղաքական առումներով փոխառվել, յուրացվել ու շրջանառության մեջ է դրվել Ազրբայջան-Ադրբեջան անվանումը: Թուրք-ադրբեջաներեն երկիրը կոչվում է Ազերբայջան, որը կազմված է պարսկերեն «ազեր» (թարգմանաբար՝ «կրակ») և «բայջան» (թարգմանաբար՝ «երկիր») բառերից: Հայերենում այդ անվանման հիմքում ընկած է «ադուր» կամ «ադր» բառը, որը նշանակել է «կրակ», իսկ «պատեն»-ը՝ «պատ, ամրոց, տաճար»:

Պատմականորեն գոյություն է ունեցել երկու Ադրբեջան. մեկը՝ Իրանի հյուսիսարևմտյան մասում գտնվող իրանական Ատրպատական-

Ադրբեջանը, իսկ մյուսը՝ Անդրկովկասի կամ Այսրկովկասի հարավարևելյան հատվածում գտնվող Ադրբեջանը, որն էլ կազմում է ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը: Փաստենք, որ հին ժամանակներում Ատրպատականը և դրանից փոքր-ինչ հարավ ընկած Մարաստանը ժամանակ առ ժամանակ ներառվել են Մեծ Հայքի հայկական թագավորությունների կազմում կամ էլ սերտ կապերի մեջ են եղել իրար հետ[6]:

Մ. թ. ա. 1-ին դարի սկզբին ներկայիս Ադրբեջանի տարածքում 26 ցեղերի միավորման հիմքի վրա առաջանում է Աղվանք պետությունը, որը հետագայում հիմնականում բարեկամական ու դաշնակցային հարաբերություններ է ունեցել Մեծ Հայքի հայոց թագավորության հետ: Միջին ու հետագա դարերում հաստատվելով Մեծ Հայքի ու Առաջավոր Ասիայի տարածքներում՝ թյուրք քոչվոր, ապա մոնղոլ, թուրքմեն և այլ նվաճող վայրագատուն ցեղեր կոտորում, ձուլում կամ դուրս են մղում Կովկասի աղվանական երկու տասնյակից ավելի ցեղերին (ժողովուրդներին): Հասկանալի է, որ մշակույթով Հայաստանին ու հայ ժողովրդին մոտ Աղվանից աշխարհն ու աղվանից ժողովուրդը որևէ ցեղային, լեզվական, հոգևոր-մշակութային կապ ու ընդհանրություն չէին կարող ունենալ 11-րդ դարից սկսած Այսրկովկաս ու Առաջավոր Ասիա ներթափանցած տափաստանաբնակ քոչվոր սելջուկ-թյուրքերի կամ հետագայում մոնղոլ-թաթարների և մյուս նվաճող էթնիկ տարրերի հետ:

Այս համատեքստում ընթերցողի մոտ կարող է տարակուսանք ու զարմանք առաջացնել, օրինակ, Ադրբեջանի՝ խորհրդային շրջանի պատմագրության վառ դեմքերից մեկի՝ Ալիսոյբաթ Սումբատզադեի (և ոչ միայն նրա) այն խոսքը, թե ոչ ավել, ոչ պակաս «Ադրբեջանի պատմությունը հաշվվում է շատ հազարամյակներ»[7]: Խորհրդային պատմագրության մեջ ձևակերպում ստացած այս կեղծիքի գաղափարական-քաղաքական հիմքերը ստեղծվել են խորհրդային ժամանակներից՝ սկսած 1920-ական թվականներից: Դրա նպատակն էր Անդրկովկասի երեք «եղբայրական» հանրապետությունների պատմական անցյալի միջև ընդհանրության, կապի ու հավասարության նշան դնելը: Կոմունիստական գաղափարախոսության կարգախոսներից էր, օրինակ, այն, որ խորհրդային ժողովուրդները պետք է լինեին իրավահավասար, միանման ճակատագիր ունեցող, անցյալում ճնշված ու հարստահարված, որոնց լենինյան կոմկուսը եկավ փրկեց ճնշումից ու շահագործումից: Այսպես, օրինակ, եթե հայոց, նաև վրաց անցյալի պատմությունը շատ հին է, ապա նոր-նոր որպես ազգ-ժողովուրդ ձևավորված ադրբեջանական ժողովրդին ևս բարոյահոգեբանական առումով չվիրավորելու համար պետք է դարձնել առաջին երկուսին հասակակից: Ադրբեջանական ժողովրդի պատմությունը ևս պետք է հասցվեր հին ու հնագույն ժամանակներ, մինչև իսկ հայոց պատմության հնագույն շրջանը. չէ՞ որ նրանք անցյալում պետք է ունենային նույն պատմական ճակատագիրը, իսկ արդեն խորհրդային ժամանակներում՝ խորհրդային ժողովուրդների հետ միասնաբար կառուցեին սոցիալիզմ ու կոմունիզմ:

Ահա սա է եղել խորհրդային պատմագրության գաղափարախոսական հայեցակարգերից մեկը: Եվ այս ամենը՝ այն դեպքում, երբ ընդամենը 11-րդ դարի կեսերից հրոսակային ներխուժմամբ այս տարածաշրջան ներթափանցեցին ու բնակություն հաստատեցին օղյուզ, սելջուկ թյուրք և ապա մոնղոլ, թուրքմենական կարակոյունլու ու աղկոյունլու և այլ քոչվոր տափաստանաբնակ տարրեր, իսկ դրանից միայն մեկ հազարամյակ անց՝ 1918 թ., պատմաքաղաքական իրադարձությունների բերումով հիմնվեց Ադրբեջան կոչվող պետությունը:

«Ադրբեջանցի ազգ» եզրույթի մասին

Արդյոք գոյություն ունեցել է ադրբեջանցի ազգ կամ ժողովուրդ: Այդ ժողովրդի ցեղասերման հարցը գիտության մեջ վիճահարույց է: Ադրբեջանցի ժողովրդի ցեղասերման միջուկը թյուրքական քոչվոր ցեղերն են, որոնք, 11-րդ դարից հաստատվելով մեր տարածաշրջանում և ընդունելով մուսուլմանական կրոն, դառնում են այդ տարածքում իշխող էթնոտարր: Մեր կարծիքով՝ նման անվանումով ազգ մինչև Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության (ԱԿՄՀ) անկախության հռչակումը չի եղել: Մինչև 1918 թվականը արևելակովկասյան մուսուլմանական տարրը հայտնի էր կովկասյան թաթար կամ թյուրք անվանումներով: Մինչ այդ արխիվային, պատմավավերագիր, հուշագիր և այլ աղբյուրներից, նյութերից ու գրականությունից մեզ հայտնի է կովկասյան մուսուլման, կովկասյան թաթար կամ պարզապես թյուրք կոչվող բնակչությունը: Հարկ է նաև արձանագրել, որ Ատրպատականի մուսուլման տարրը մեծապես կրել է իրանական բարձր մշակույթի ազդեցությունը և հայտնի է ազերի անվամբ: Սխալվում են բոլոր նրանք, ովքեր թյուրք-թաթարական էթնիկ ծագում ունեցող ներկայիս ադրբեջանցիներին անվանում են ազերի: Հարկ է նշել, որ Անդրկովկասի թյուրք-թաթարների և Թուրքիայի թուրքերի լեզուն ու ավանդույթներն ընդհանրական են:

Մյուս կողմից՝ «Ատրոպատեն-Ադրբեջան»-ը աշխարհագրական հասկացություն է. Ադրբեջան կամ ադրբեջանցի անվանումը դրվել է որոշակի քաղաքական նպատակով: Ինչպես նշվեց, այն ի հայտ է եկել 1918 թ. մայիսի 28-ին՝ շնորհիվ իր կնքահայր Խալիլ փաշայի: Նախախորհրդային աղբյուրներում կովկասյան թուրք, թաթար և այլ անվանումների կարելի է հանդիպել ամենուրեք, իսկ, օրինակ, Ռուսական կայսրության 1897 թ. համընդհանուր մարդահամարի կովկասյան տարեցույցում կամ անդրկովկասյան երկրամասի վիճակագրական, վարչական, հարկային, կրթական և այլ ժողովածուներում ու ցուցակագրություններում Ադրբեջան և ադրբեջանցի անվանումների երբեք չեք հանդիպի:

1918 թվականից առաջ ադրբեջանական պետությունների գոյության մասին խոսք չի կարող լինել,

ինչպես ներկայացվում է «Ադրբեջանի պատմություն» յոթհատորյակում[8], որում շահական Պարսկաստանի կազմում եղած Արևելակովկասյան երկրամասի խանությունների պատմությունը ներկայացված է որպես Ադրբեջանի պետականության պատմություն:

Համեմատության կարգով նշենք, որ պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք լավ գիտե, որ վաղնջական ժամանակներից սկսած՝ հազարամյակների ընթացքում և մինչև 20-րդ դարի սկզբին Հայաստանի անկախության վերականգնումը, հայ ժողովուրդը հայրենի հողի վրա և ոչ միայն այնտեղ կերտել է առնվազն վեց համահայկական պետություն (թագավորություն): Ինչ վերաբերում է Անդրկովկասի արևելյան հատվածներում նախորդ դարերի ընթացքում ձևավորված պետական կազմավորումներին՝ մարզերին, ամիրայություններին, խանություններին և այլն, ապա դրանք եղել են արաբական, սելջուկյան, մոնղոլական, թուրքմենական, իրանական և այլն: Ադրբեջանցի անվամբ էթնիկ ժողովուրդ չի եղել, որ ստեղծած լիներ իր պետականությունը և պատմական այդ հիմքի վրա էլ հավակնություններ ունենար իրեն հայրենիք համարվող և անգամ դրա սահմաններից դուրս ընկած այլ տարածքների նկատմամբ:

Արևելակովկասյան մուսուլմանների անկախացման հիմքերը: Ադրբեջան անվան ծագումը

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում, այդ թվում՝ Անդրկովկասում տեղի ունեցող գաղափարական, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական տեղաշարժերի ու փոփոխությունների հետևանքով կայսրությունում կատարվեցին մեծ հեղաբեկումներ, որոնց նպաստեց նաև Առաջին աշխարհամարտը: 1918 թ. Անդրկովկասյան Դաշնության փլուզումից հետո և թուրքական զորքերի՝ Անդրկովկաս ներխուժման պայմաններում վրացիների ու արևելահայերի նման արևելակովկասյան թյուրք-մուսուլմանները ևս կարողացան ստեղծել իրենց անկախ պետությունը:

1918 թ. մայիսի 26-ի կեսօրին (ժամը մոտավորապես 12.00-ին) Կովկասի փոխարքայի նախկին պալատում վրաց, հայ և մուսուլման հատվածների ներքաղաքական սուր հակասությունների ու տարամերժ քաղաքական կողմնորոշումների հետևանքով Անդրկովկասյան սեյմը (խորհրդարանը) վրաց սոցիալ-դեմոկրատ մենշևիկների նախաձեռնությամբ, ձայների ճնշող մեծամասնությամբ որոշում ընդունեց Սեյմի, ուստի և ապրիլի 9 (22)-ին իր անկախությունը հռչակած Անդրկովկասի Դաշնային Հանրապետության (ԱԴՀ) լուծարման մասին, և այդ նույն օրը՝ ժամը մոտավորապես 16.00-ին, Վրաց ազգային խորհուրդը՝ Նոյ Ժորդանիայի նախագահությամբ, ակնկալելով կայսերական Գերմանիայի հովանավորությունը, Վրաստանը հռչակեց անկախ պետություն՝ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն (ՎԴՀ): Հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, Թիֆլիսում Անդրկովկասի մուսուլմանների ժամանակավոր ազգային խորհուրդը՝ «Մուսավաթ» («Հավասարություն») կուսակցության հիմնադիր ու առաջնորդ Մամեդ Էմին Ռասուլզադեի ղեկավարությամբ, ստանալով Անդրկովկաս ներխուժած ցեղակից թուրքերի անվերապահ աջակցությունն ու հովանավորությունը, հիմնականում Բաքվի և Ելիզավետպոլի (ոչ ամբողջությամբ) նահանգների սահմաններում հայտարարեց Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության (ԱԿՄՀ) անկախության մասին[9]: Ինչպես նկատում ենք, մայիսի 27-ի հայտարարության մեջ Ադրբեջան (թուրքերեն արտասանությամբ՝ Ազերբայջան) պաշտոնական անվանումը դեռ չկա: Մեկ օր անց՝ մայիսի 28-ին, փաստորեն՝ Հայաստանի անկախության հռչակման օրը, դարձյալ փոխարքայի նախկին պալատում կովկասյան թյուրք-թաթարների մեծ բարեկամ ու ցեղակից օսմանցի թուրք Խալիլ փաշայի նախաձեռնությամբ ու հեռագնա առաջարկով նորահռչակ Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետություն անվան փոխարեն ընտրվեց (ըստ էության՝ կրկնօրինակվեց) Իրանի հյուսիսարևմտյան մասում գտնվող պատմական Ադրբեջան երկրամասի անվանումը: Դրա հիման վրա էլ հանգամանալի քննարկումից հետո 24 կողմ և 2 ձեռնպահ ձայներով[10] ընդունվեց մեկ այլ լրացուցիչ որոշում, որով պաշտոնապես հռչակվեց ԱԿՄՀ անկախությունը, և միաժամանակ կատարվեց անվանափոխություն: Այդպիսով ԱԿՄՀ-ն վերանվանվեց ու առաջին անգամ պաշտոնապես կոչվեց Ադրբեջան (ամբողջական անվանումը՝ Ադրբեջանի Դեմոկրատական **Հանրապետություն (ԱԴՀ)**)[11]: Ի դեպ, նկատենք, որ Վրաստանի և Ադրբեջանի նորահռչակ հանրապետությունների անվանումներին հավելվեց «Դեմոկրատական» եզրը, իսկ Հայաստանի անվանը՝ ոչ, բայց դա ամենևին էլ չէր նշանակում, թե նրանք պետաիրավական առումով ավելի ժողովրդավարական էին, քան Հայաստանի Հանրապետությունը: Մուսուլմանների՝ ավելի քան երեք տասնյակ անդամներից կազմված ազգային խորհուրդը, նույն օրն ընդունելով անկախության մասին ակտը, կազմեց կառավարություն՝ մուսավաթական Ֆաթալի Խան-Խոյսկու գլխավորությամբ, իսկ մայիսի 30-ին ի լուր աշխարհի հայտարարվեց Ադրբեջանի անկախության մասին[12]: Այնուհետև՝ հունիսի 16-ին, Ադրբեջանի ազգային խորհուրդն ու կառավարությունը փոխադրվեցին Ելիզավետպոլ (Գյանջա):

Ի լրումն այս ամենի՝ **Ադրբեջան** անվան առնչությամբ, իբրև պատմավավերագիր վկայություն, Արտաշես Չիլինգարյանի (Ռ. Դարբինյան) խմբագրությամբ լույս տեսնող ՀՀ կառավարության և ՀՅԴ Բյուրոյի «Յառաջ» պաշտոնաթերթի՝ 1920 թ. մարտի 16-ի **«Խալիլ փաշայի ծրագիրները»** հաղորդում-հրապարակման մեջ, Կովկասում և տարածաշրջանում ռազմաքաղաքական բնույթի մեկնաբանություններից զատ, բերված է նաև 1918 թ. վերաբերող հետևյալ քաղվածքը. «Երբ Կովկասը չորս հանրապետութիւնների մէջ բաժանուեց (նկատի էին առնվում Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը և Հյուսիսային Կովկասը – Ա. Հ.), ամուր կուան հաստատուեց

թաթարական նոր հանրապետութեան մէջ – Քուր գետի արևելեան շրջանում Ադրբէջան անունով: Անունը լաւ ենք ընտրել չէ՞, ասում էր Խալիլ փաշան քմծիծաղ (ընդգծումն մերն է – Ա. Հ.), ակնարկելով պարսկական Ատրրպատական, որի նոր հանրապետութեան հետ ձուլելուն ոչ միայն բաղձանք ունէին, այլև այդ խնդրին ամէն կերպ մղումն էին տալիս»[13]: Տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադարձություններին քաջատեղյակ անանուն հոդվածագիրը նկարագրում է, որ նորահաստատ թաթարական պետությունը 1918 թ. ամռան և աշնան ամիսներին, որ բոլոր կողմերից գրավված էր թուրքական՝ «իսլամական բանակի» կողմից, թուրքական մահիկով պատված հանրային շենքերը և այլն իր վրա թողնում էին թուրքական նահանգի տպավորություն[14]: Անանուն հեղինակի այս հոդվածն ունեցել է շարունակություն «Յառաջ»-ի հաջորդ՝ մարտի 17-ի՝ 56-րդ համարում:

Այն հարցի շուրջ, թե իրականում որն է Ադրբեջանի անկախության հռչակման ստույգ օրը, պատմագիտական ու հուշագրական գրականության մեջ կա տարակարծություն: ՀՀ առաջին վարչապետ Հովի. Քաջազնունին վկայում է, որ մայիսի 26-ին Անդրկովկասյան Ֆեդերատիվ (Դաշնային) Հանրապետության կազմալուծումից հետո՝ «նոյն օրը Վրաստանը յայտարարեց իր անկախութիւնը: Երկու օր անցած, Մայիսի 28-ին, նոյնը արին Ազրբէյջանը և Հայաստանը»[15]: Այսինքն՝ ըստ Հովի. Քաջազնունու՝ Ադրբեջանի անկախությունը, ինչպես Հայաստանինը, հռչակվել է մայիսի 28-ին: Անկախացման այդ խառն օրերի առնչությամբ ՀՀ 2-րդ վարչապետ Ալ. Խատիսյանը գրում է, որ «թաթարները ևս կը պատրաստուին Մայիս 28-ին յայտարարել Ատրբէյջանի անկախութիւնը»[16]: Իսկ ՀԺԿ հիմնադիր Միք. Պապաջանյանը Հայոց ազգային ժողովի մայիսի 28-ի երեկոյան նիստում ունեցած իր ելույթում առաջ անցնելով նշում էր, որ թուրքերն արդեն ձևավորել են պառլամենտ և ընտրել կառավարություն[17]: Ի դեպ, հարկ է նշել, որ կովկասյան թյուրք-թաթարների՝ Ադրբեջան անվան յուրացման նման հավակնությունների առնչությամբ շահական Պարսկաստանի կառավարությունը անգամ բողոք է ներկայացրել[18] միջազգային ատյաններում: Տեղեկություն կա, որ նորահռչակ ԱԴՀ կառավարությունը (վարչապետ՝ Ֆ. Խան-Խոյսկի) որպեսզի փարատի իրանական կողմի մտավախությունները, երբեմն արտասահման ուղարկվող գրություն-փաստաթղթերում, ըստ նպատակահարմարության, գործածել է «Կովկասյան Ադրբեջան» անվանումը[19]: Այսպիսով՝ պատմության մեջ առաջին անգամ Կասպից ծովի արևմտյան ափին ստեղծվում է մի պետական կազմավորում, որը կոչվում է Ադրբեջանի Հանրապետություն:

Հարկ է կրկին շեշտել, որ «Ադրբեջան» եզրը բացառապես վերաբերել է Իրանի պատմական երկրամաս Ատրպատականին, որի բնակիչները հայտնի են ազերի անվամբ: Հենց այդ պատճառով էլ, ինչպես ասվեց, ժամանակին շահական Պարսկաստանի կառավարությունը բողոքել է նորանկախ Հարավարևելյան Անդրկովկասի՝ թյուրք-

Ադրբեջանի կառավարությունը 1918 թ.

թաթարական էթնիկ տարրերից, նաև փոքրաթիվ լեզգի, թալիշ, ուդի և այլ ժողովուրդներից բաղկացած երկրամասը Ադրբեջան անվանելու առնչությամբ[20]: Սա ինքնին նշանակում էր տարածքային հավակնություններ իրանական Ադրբեջանի նկատմամբ: Այս ամենով հանդերձ՝ արհեստականորեն արևելակովկասյան հատվածում Ադրբեջան կոչվող պետությունում այժմ էլ ամենաբարձր մակարդակով հայտարարվում է նույնիսկ Արևմտյան Ադրբեջանի մասին՝ նկատի ունենալով ՀՀ տարածքը: Խոսվում է Սևանա լճի ավազանի, Սյունիքի, անգամ Երևանի մասին՝ իբրև նորահայտ Ադրբեջանի մասերի: Սա փաստում է, թե ինչպիսի հեռագնա նկրտումներ ունի ներկայիս Ադրբեջանի ռազմատենչ ղեկավարությունը: Արցախին ռազմաքաղաքականապես տիրելուց հետո, թիկունքում ունենալով մեծ եղբայր Թուրքիայի հովանավորությունն ու աջակցությունը, ռազմատենչ գործողություններով ու քարոզչական հոետորաբանությամբ նա ցանկանում է բռնազավթել բուն ՀՀ տարածքները: Քողարկված կերպով դրսևորվող նրա հեռագնա մյուս հավակնությունն էլ վերաբերում է իրանական Ատրպատականին՝ Ադրբեջանին:

Խալիլ փաշան իբրև Ադրբեջան անվան կնքահայր

Հրապարակի վրա եղած վավերագիր նյութից պարզ է դառնում, թե իրականում ով է եղել Ադրբեջանի Հանրապետություն անվան կնքահայրը: Իհարկե, խոսքը, լայն իմաստով, Թուրքիայի, իսկ ավելի կոնկրետ՝ նրա ռազմաքաղաքական գործիչներից, հայ ժողովրդի ջարդարարներից Խալիլ փաշայի մասին է: Խալիլ Կուտ փաշան (1882-1957) երիտթուրքական եռապետության պարագլուխներից էր, Իսմայիլ Էնվեր փաշայի հորեղբայրը: Նա նույնպես «Մեծ Թուրանի» ցնորամիտ գաղափարի ջատագովներից էր: Առաջին աշխարհամարտի տարիներին, ավելի ստույգ՝ 1916-1918 թթ., գլխավորել է Միջագետքում գործող թուրքական 6-րդ բանակը: 1918 թ. մարտին նա մեկ այլ

ջարդարարի՝ Էնվերի խորթ եղբայր Նուրի փաշայի հետ Ատրպատականում բանակցել է մուսավաթականների հետ, որպեսզի վերջիններս աջակցեն Անդրկովկաս ներխուժած թուրքական բանակին՝ գրավելու Առանը՝ Կուր և Արաքս գետերի միջակայքը[21]: Տեղեկություն կա, որ Կովկասում թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշան Պարսկաստանով իր 300 զինվորական հրահանգիչների հետ ժամանել էր Գյանջա՝ նպատակ ունենալով առաջին հերթին լուծելու «Բաքվի Կոմունայի պրոբլեմը»[22]: Անկախացման այդ օրերին նախկին Մեյմի մուսուլման անդամները ցանկանում էին իմանալ թուրքական հրամանատարության վերաբերմունքը անկախության հարցում, ինչի համար Գյանջա էր մեկնել նրանց Ազգային խորհրդի պատվիրակությունը՝ Ն. Ուսուբբեկովի գլխավորությամբ: Անմիջապես պարզվել էր, որ թե՛ Բաթումից Խալիլ Բեյն ու Մեհմեդ Վեհիբ փաշան և թե՛ Գյանջայից Նուրի փաշան ու, ըստ ամենայնի, Խալիլ փաշան միանշանակ սատարել են Ադրբեջանի անկախացումը: Հայտնի է, թե Խալիլ և Նուրի փաշաները ինչպիսի մեծ դերակատարություն են ունեցել 1918 թ. սեպտեմբերի 15-ի Բաքվի հայերի (28884)[23] և 1920 թ. մարտի 22-23-ի Շուշիի հայերի (մոտ 8000) կոտորածներում[24]: Սակայն փաստենք, որ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումի պայմանագրի կնքումից հետո ընդամենը 10 հազ. քառ. կմ ընդգրկող նորանկախ ՀՀ սահմանի երկայնքով տեղակայված էին Խալիլ փաշայի գլխավորած թուրքական զորամասերը: Ստեղծված ռազմաքաղաքական անկայուն պայմաններում ՀՀ ՆԳ նախարար, Մայիսյան հաղթական հերոսամարտերի կազմակերպիչ ու ոգեշնչող Մեծն Արամը (Սարգիս Հովհաննիսյան), հաշվի առնելով Հայաստանի «փափուկ» վիճակը, փորձել է հանդիպել ու բանակցել 1915 թ. Վանի ինքնապաշտպանության օրերից իրեն ծանոթ այդ նույն Խալիլ փաշայի հետ: Հանդիպումը տեղի է ունեցել 1918 թ. օգոստոսի 31-ին Երևանի երկաթուղային կայարանում ջերմ ձեռքսեղմումով և անգամ գրկախառնությամբ, ինչը հակադաշնակցական գրականության մեջ հաճախ է շահարկվել: Արամի զգացական, սակայն միաժամանակ դիվանագիտական այդ նուրբ քայլը նպատակ ուներ ինչ-որ կերպ ապահովելու նորաստեղծ պետության կայունությունն ու նրա ժողովրդի անվտանգությունը: Ի դեպ, նրանց միջև եղած անձնական կապի շնորհիվ այդ հանդիպումից հետո Խալիլ փաշան բառիս բուն իմաստով սովյալ և համաճարակներով տառապող Հայաստանին հատկացրեց 25 հազար փութ ցորեն, ինչպես նաև հրահանգ տվեց հայությանը մշտապես անհանգստացնող Բաշ Գառնիի շրջանի Միլլի ձորի թաթարներին հեռանալու այդ վայրից[25]: Նշենք նաև, որ այդ նույն օրերին Խալիլ փաշան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեսակցել է նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին: Ի դեպ, Առաջին աշխարհամարտի ավարտին, ջարդեր կազմակերպելու հիմնավորմամբ, Խալիլ փաշան ընդգրկվել էր անգլիացիների կողմից Մալթա աքսորվելիք պատերազմի հանցագործների ցուցակում[24]:

Ամփոփում

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ Խալիլ Կուտ փաշան է Ադրբեջանի Հանրապետության անվանակոչման կնքահայրը, մի անվանում, որը պարունակել է աշխարհաքաղաքական իմաստ և նվաճողական (էքսպանսիոնիստական) հեռագնա հավակնություններ ինչպես Իրանի, այնպես էլ Հայաստանի հանդեպ:

Հին ու նոր Թուրքիան առաջնորդվել ու առաջնորդվում է պանթյուրքական ու պանթուրանական գաղափարախոսությամբ և ներկայումս ստեղծված՝ Միջերկրական ծովից մինչև Խաղաղ օվկիանոս ձգվող իբրև թե հոգևոր-մշակութային նպատակներ հետապնդող Թուրքական պետությունների կազմակերպությունը (ԹՊԿ), անշուշտ, ունի ռազմատենչ աշխարհաքաղաքական նշանակություն: Անդրկովկաս, Միջին և Կենտրոնական Ասիա, Սիբիր և այլ հսկայածավալ տարածքներ հասնելու և, վերջին հաշվով, իբրև իրենց պատմական հայրենիք դրանց տիրելու թուրքական հեռագնա հավակնությունների հետ, որոնք պետք է մտահոգեն նաև ՌԴ-ին, Իրանին պետք է մտահոգի Ադրբեջանի շարունակությունը համարվող Ատրպատականի (Ազրբայջան) կեղծիքը. իզուր չէր, որ Խալիլ փաշայի նախաձեռնությամբ 1918 թ. քաղաքական հրապարակ իջեցվեց Ադրբեջան կոչվող հանրապետությունը:

Ծանոթագրություն

1. ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք՝ https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/04/15/spox-armenpress/10894):
2. Տես Աճառեան Հր., Հայերէն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 290-291:
3. Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Եր., 1974, էջ 665:
4. Տես Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 124:
5. Տես «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», խմբ.՝ Ս. Աբրահամյան և ուրիշներ, հ. 1, Եր., 1969, էջ 206:
6. Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Եր., 1971, էջ 591, 624, 629 և այլն:
7. Сумбатзаде А. С., Азербайджанская историография XIX – XX веков, Б., 1987, с. 3.
8. Տես «История Азербайджана», в семи томах, Баку, 1998-2003:
9. Տես «Հայոց պատմություն», հ. 4, գիրք 1, Եր., 2010, էջ 14-15:
10. Տես Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920
11. թթ., Եր., 2008, էջ 23:
12. Տես «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2014, թիվ 1, էջ 216:
13. Տես Векилов Р. А., История возникновения Азербайджанской Республики, Баку, 1998, էջ 18:
14. «Յառաջ», Յեր., 16 մարտի 1920 թ., թիվ 55:
15. Նույն տեղում:
16. Քաջազնունի Յովհ., Հայաստանի Հանրապետութիւն, Եր., 1993, էջ 21:
17. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 160:
18. Տես ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 9:
19. Տես Ադրբեջան, hy.wikipedia.org /wiki/:
20. Տես ru.wikipedia.org/wiki/Азербайджан—(топоним):
21. Տես Ադրբեջան, hy.wikipedia.org (wiki):
22. Տես Խալիլ, hy.wikipedia.org (wiki):
23. Векилов Р. А., указ. соч., с. 17.
24. Տես Իշխանեան Բ., Բագուի Մեծ սարսափները, Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920, էջ 103-104:
25. Տես «Нагорный Карабах в 1918-1923 гг.», сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян, Ер., 1992, էջ 416:
26. Տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2005, էջ 233:
27. Տես Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 114:

Հայ ազգային-ազատագրական պայքարի փուլերը, մարտավարական փոփոխություններն ու արտաքին կողմնորոշման խնդիրը

Անի Մելքոնյան
Պատմաբան



Հայոց պետականության անկումից հետո Հայաստանը կովախնձոր դարձավ քոչվոր զավթիչների միջև: Քոչվորների իրարահաջորդ արշավանքներն ու ծանր լուծը հայ ազգային շրջանակներում հասունացրին Հայաստանի ազատագրության և սեփական պետություն ունենալու գաղափարը:

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը նախ ծնունդ առավ ազգային-եկեղեցական շրջանակներում, այնուհետև դրա կրողը դարձան հայ խոջաները (վաճառականներ) և պահպանված հատուկենտ ազնվականական տները: Հայ ժողովրդի՝ ավելի քան 600 տարի տևած ազգային-ազատագրական պայքարը ենթարկվեց մարտավարական մի շարք փոփոխությունների՝ յուրաքանչյուր դարաշրջանին համապատասխան կրելով ժամանակաշրջանի մտածողության կնիքը:

Ինչպես ասացինք, Հայաստանի անկախության վերականգնման գաղափարի առաջին կրողը հայ հոգևորականությունն էր, որի միջոցով էլ այն տարածվեց ավելի լայն շրջանակներում: Հայերի ստրկական ծանր վիճակը, շարունակվող արտագաղթը, ալան-թալանը, կոտորածներն ու հալածանքները հոգևորականները բացատրում էին հայերի գործած բազում մեղքերով, որոնք առաջ էին բերել Աստծու զայրույթը, ուստի ժամն էր, որ հայերն ապաշխարեին: «Ահա եկեղեցական այս միջավայրում է ծնվում ազատագրական մտքի յուրօրինակ արտահայտություններից մեկը՝ հայ ազատագրական լեգենդը»[1]: Այդ լեգենդի համաձայն՝ Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Մեծը «մահվան մահճում գուշակել էր ոչ միայն հայկական պետականության կործանումը, այլև Հայաստանում օտար ամենադաժան տիրապետությունների հաստատումը և հայերի՝ աշխարհով մեկ ցրվելը: Տեսիլի համաձայն՝ Հայաստանը կարող էր ազատագրվել միայն երկար տարիներ անց, բայց առանց արտաքին քրիստոնյա հզոր պետության օգնության սեփական ուժերով դա հնարավոր չէր»[2]: Այս լեգենդն էլ կանխորոշեց հայ ազգային-ազատագրական պայքարի հետագա մարտավարությունը՝ Հայաստանի ազատագրման գործում հույսը դնել ոչ թե սեփական ուժերի, այլ արտաքին միջամտության՝ քրիստոնյա պետությունների օգնության վրա: «Ազատագրական լեգենդը տարբեր պատմաշրջաններում, կախված քաղաքական իրադրությունից, տարբեր «փրկիչներ»ի է մատնանշել, ազատագրական առաքելությունը վերագրել տարբեր հասցեատերերի: Հայերի համար ազատարար Արևմուտքը սկզբում Բյուզանդիան էր (նշվում էին որպես հոռոմեացիներ): Կ. Պոլսի անկումից հետո (1453) ազատարար Արևմուտքը տեղափոխվեց էլ ավելի արևմուտք՝ դեպի Հռոմ, դեպի ֆրանկների աշխարհը: Ազատագրական առաքելությունը հերթականությամբ վերապահվում էր մե՛րթ Հռոմի պապին ու Վենետիկի դոժին, մե՛րթ Բուրբոններին, Հաբսբուրգներին ու գերմանական տարբեր իշխաններին և ի վերջո ռուսաց ցարին»[3]: «Ազատարար» Արևմուտքը, օգտվելով հայերի ծանր վիճակից, պահանջում էր կաթոլիկություն ընդունել, հայերն էլ իրենց հերթին Հայաստանի ազատագրման համար պատրաստ էին դավանաբանական որոշ զիջումների, բայց Արևմուտքն այդպես էլ խոսքից գործի չանցավ:

16-17-րդ դարերում սկսվեցին հայ ազատագրական պայքարի գործիչների անվերջանալի թվացող դեգերումները «ազատարար» Արևմուտքում: 1547 թ. Ստեփանոս Ե Սալմաստեցու գլխավորությամբ Ս. Էջմիածնում հրավիրվում է գաղտնի խորհրդաժողով. քննարկման թեման էր Հայաստանի ազատագրման հարցը: Խորհրդաժողովն ընդունում է մի «աղերսագիր» և որոշում կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Վենետիկ ու Հռոմ: 1548 թ. պատվիրակությունը հասնում է Վենետիկ և տեսակցում Վենետիկի դոժին, 1549 թ.՝ լինում Հռոմում, այնուհետև՝ Վիեննայում և Վարշավայում, որտեղ Ստեփանոս Ե-ն հանդիպում է Կառլոս 5-րդ կայսեր և Սիգիզմունդ 2-րդ թագավորի հետ: 1551 թ. հայկական պատվիրակությունը ձեռնունայն վերադառնում է Հայաստան:

1562 թ. մայիսի 20-ին հայոց կաթողիկոս Միքայել Ա Սեբաստացին հրավիրում է գաղտնի խորհրդաժողով, որի ընթացքում որոշվում է Եվրոպա ուղարկել մի պատվիրակություն՝ Աբգար Թոխատեցու ղեկավարությամբ: 1563 թ. լինելով Վենետիկում և Հայաստանի նկատմամբ հովանավորության խոստում ստանալուց հետո Աբգար Թոխատեցին ուղևորվում է Հռոմ: Նրա ջանքերը, սակայն, ապարդյուն են անցնում՝ բախվելով «ազատարար» Արևմուտքի սառն անտարբերությանը: 1575-1584

թթ. և հետագա տարիներին ևս շարունակվեցին հայ գործիչների ապարդյուն դեգերումները Արևմուտքում:

1677 թ. Ս. Էջմիածնում Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը հրավիրում է գաղտնի ժողով, որին մասնակցում էին նաև Արցախի ու Սյունիքի մելիքները: Ընտրված պատվիրակությունը՝ Հակոբ Դ Ջուղայեցու գլխավորությամբ, «1677 թ. հունիսին անցնում է Վրաստան և բանակցություններ վարում Քարթլիի թագավոր Գեորգի 11-րդի հետ: Այստեղ մշակվում է հայ-վրացական համատեղ պայքարի ծրագիր, որի համաձայն՝ հայերը պետք է դիմեին Արևմուտքի, իսկ վրացիները՝ Ռուսաստանի օգնությանը»[4]: Սակայն 1680 թ. օգոստոսի 1-ին Հակոբ Դ Ջուղայեցին հանկարծամահ է լինում, և պատվիրակությունը ստիպված վերադառնում է Հայաստան:

Հայ ազատագրական պայքարի նոր փուլը կապված է Իսրայել Օրու անվան հետ: 1680-ական թթ. վերջերին Վենետիկում հաստատված Իսրայել Օրին երկար դեգերումներից հետո՝ 1698 թ., հանդիպում է Պֆալցի իշխան Հովհան Վիլհելմին և նրան ներկայացնում Հայաստանի ազատագրության խնդիրը: Այնուհետև ուղևորվելով հայրենիք՝ 1699 թ. ապրիլի 9-ին Օրին Սյունիքի Անգեղակոթ գյուղում հրավիրում է գաղտնի ժողով: Մելիքների խորհրդաժողովը որոշում է օգնություն խնդրել Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ինից, Տոսկանայի մեծ դուքս Կոզմաս 3-րդից և Պֆալցի մեծ իշխան Հովհան Վիլհելմից: Մելիքների դիմումներով և Մինաս վարդապետ Տիգրանյանցի ուղեկցությամբ 1699 թ. ապրիլի 29-ին Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա: 1700 թ. վերջերին Օրին արդեն Վիեննայում էր, որտեղ Ավստրիայի Լեոպոլդ 1-ին կայսրը նրան հուշեց օգնության խնդրանքով դիմել Ռուսաստանի ցարին: Եվրոպան փաստորեն ձեռքերը լվաց Հայաստանի ազատագրումից, իսկ մերժում ստացած Օրին ստիպված էր հայացքն ուղղել դեպի հյուսիս՝ հզորացող Ռուսաստան: 1701 թ. հուլիսի 7-ին Օրու գլխավորած պատվիրակությունը հասավ Մոսկվա: Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի ազատագրության հույսը կապվեց ոչ թե Արևմուտքի, այլ Հյուսիսի՝ Ռուսաստանի հետ:

Օրու՝ Պետրոս 1-ինին ներկայացրած զեկուցագրում նշվում էր, որ հայերը վաղուց իրենց հույսը կապել են Ռուսաստանի օգնության հետ. «….այս խեղճ ժողովուրդը միշտ ապրել ու ապրում է Ձեր թագավորական մեծությունից օգնություն ակնկալելու հույսով: Ժողովրդի մեջ կա մի նախապատմություն, թե… գալու է Մոսկվայի օգոստոսափառ տնից ինչ-որ մի իշխան, Ալեքսանդր Մեծից ավելի քաջ մեկը, որը ազատելու է քրիստոնյաներին և վերականգնելու է հայոց թագավորությունը»[5]: Այսպիսով՝ քաղաքական նոր պայմաններից ելնելով՝ հայ ազատագրական միտքը նոր փոփոխությունների ենթարկվեց՝ արևմտակենտրոնից, դառնալով հյուսիսակենտրոն:

Չխորանալով մանրամասնությունների մեջ՝ նշենք միայն, որ 1722 թ. սկսված ռուսական բանակի պարսկական արշավանքը, թեև ցանկալի արդյունքը չտվեց, բայց, ըստ էության, սկիզբ դրեց հայ-ռուսական ռազմական համագործակցության:

Այլ էին ազգային-ազատագրական պայքարի ընկալումները Արցախում և Սյունիքում: Արցախի հայկական զինված ուժերը ազատագրական կռիվների միջոցով երկրամասից դուրս քշեցին պարսկական վարչակազմին և զորամասերին. «….փաստորեն, 1722 թ. վերջերին և 1723 թ. սկզբներին ամբողջ Արցախն ազատագրված էր պարսկական իշխանության մնացուկներից»[6]: 1724 թ. Գյուլիստանի և Ջրաբերդի զինված ուժերը ջախջախիչ պարտության մատնեցին Արցախի որոշ շրջաններում հաստատված քոչվոր թուրքերին (Կովկասի թուրքեր, ներկայիս եզրույթով՝ ադրբեջանցիներ): Շուտով, սակայն, սկսվեց Օսմանյան Թուրքիայի արշավանքը տարածաշրջան, և թշնամու դեմ միայնակ մնացած Արցախի ազատագրական ուժերը, մինչև 1731 թ. դիմադրելով, պարտություն կրեցին բացառապես ուժերի անհավասարության պատճառով. տարիներ շարունակ հերոսաբար պաշտպանվող արցախցիները ի վերջո բախվեցին թուրքական ուժերի քանակական գերակշռությանը, բայց Արցախում ազատարարական տրամադրությունները պահպանվեցին նաև հետագայում: Արցախի հետ միաժամանակ դիմադրության դրոշ էր պարզել նաև Սյունիքը: Ի տարբերություն Արցախի, որտեղ 40.000-անոց հայկական զինուժ կար, Սյունիքում այդպիսի ռազմական ուժ չկար: Ի տարբերություն Արցախի, որն ուներ ազատագրական պայքարը ղեկավարող երկու հեղինակավոր գործիչներ՝ Եսայի Հասան-Ջալալյանն ու Ավան հարյուրապետը, Սյունիքում նման հեղինակավոր գործիչներ չկային: Դրանով էր պայմանավորված այն, որ Սյունիքի ազատագրական ուժերն իրենց հայացքն ուղղել էին Վրաստան, որտեղից էլ Սյունիք ժամանեց Վախթանգ թագավորի մերձավորագույն զինակիցներից Դավիթ Բեկը: Կարճ ժամանակում նրա շուրջը հավաքվեցին շուրջ 2.000 մարտիկներ: 1725 թ. Գողթնի և Մեղրիի մարտերից հետո Սյունիքն ազատագրված էր, ցավոք կարճ ժամանակով, ինչպես Արցախը: 1728 թ. Դավիթ Բեկը մահացավ, և Սյունիքի ազատագրական ուժերը ղեկավար ընտրեցին Մխիթար Սպարապետին: Ցավոք սրտի, շուտով այդ ուժերը պառակտվեցին, Մխիթարը գրեթե միայնակ մնաց և, չնայած դրան, շարունակեց հերոսական պայքարը: 1730 թ. Օրդուբադում թուրքերին ծանր պարտության մատնելուց հետո Մխիթար Սպարապետը սպանվեց խնձորեսկցի մի խումբ դավաճանների ձեռքով: Մխիթարի սպանությունից հետո Սյունիքում չգտնվեց մեկը, որը կշարունակեր Դավիթ Բեկի գործը, բայց, չնայած դրան, «Սյունիքի հայության առանձին զինված ջոկատներ, ապավինած լեռնային անմատչելի վայրերին, մինչև 30-ական թվականների կեսերը դեռ շարունակում էին պարտիզանական պայքարը»[7]:

18-րդ դարի երկրորդ կեսին հայ ազատագրական պայքարի կենտրոններ դարձան Հնդկաստանի և Ռուսաստանի գաղթավայրերը, մասնավորապես՝ «Մադրասի խմբակի» (Շ. Շահամիրյան, Մ. Բաղրամյան, Հ. Էմին և ուրիշներ) և ռուսահայ

գաղթօջախի գործիչների (Հ. Լազարյան, Հ. Արղության և այլք) գլխավորությամբ, որոնք առաջ էին քաշում Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետություն ստեղծելու նախագիծ: Հայ ազատագրական շարժման այս փուլի ամենանշանավոր դեմքը թերևս Հովսեփ Էմինն էր: Երկարատև մաքառումներից հետո՝ 1759 թ. վերջերին, Էմինը վերջապես Հայաստանում էր, որը բացասական առումով ցնցեց նրան. հայ ժողովուրդը վերածվել էր պատմական հիշողությունը կորցրած իրավազուրկ ստրուկի: Հայաստանում չգտնելով պայքարի պատրաստ որևէ ուժ՝ Էմինը հայացքը դարձրեց դեպի Ռուսաստան: Եկատերինա 2-րդ կայսրուհու և վարչապետ Վորոնցովի կողմից հայերին օգնելու խոստում ստանալուց հետո նա մեկնում է Վրաստան՝ նպատակ ունենալով վրացական բանակի և հայ մելիքների ուժերով ազատագրելու Արևելյան Հայաստանը: Էմինի գաղափարները, ի վերջո, պաշտպանություն գտան Արցախի մելիքների շրջանում:

Էմինի գործունեությանը ուշադիր հետևում էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որն էլ Գանձասարի կաթողիկոսից և մելիքներից պահանջեց հրաժարվել Արցախում հաստատված Էմինի ծառայություններից և հեռացնել նրան Արցախից: 1767 թ. մելիք Հովսեփը ճարահատյալ խնդրում է Էմինին թողնել Գյուլիստանը: Էմինը ստիպված հեռանում է Արցախից և 1768 թ. մեկնում Հնդկաստան՝ շարունակելով պայքարը Հայաստանի ազատագրության համար:

Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, Մովսես Սարաֆյանի և նրանց հաջորդների գործունեությունը հստակ ուրվագծեց հայ ազատագրական պայքարի նոր ուղղվածությունը՝ ավանդական Արևմուտքի փոխարեն դեպի Ռուսաստան: Այս ուղղությունն ավանդական դարձավ հետագա տարիներին: Իր հերթին Ռուսաստանը ձգտում էր ընդլայնվելու դեպի Կովկաս, և այդ ճանապարհին որպես հուսալի հենարան էր ընկալվում հայ ժողովուրդը: Ահա թե ինչու ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ընթացքում հայ ժողովուրդն աջակցեց Ռուսաստանին:

1804-1813 թթ. տեղի ունեցած ռուս-պարսկական առաջին պատերազմն ավարտվեց 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի պայմանագրի կնքմամբ, որով հաղթող «Ռուսաստանի կազմի մեջ էին մտնում հյուսիսարևելյան Հայաստանի հետևյալ շրջանները՝ Գանձակը, Ղարաբաղը, Ջանգեզուրը, Շիրակը»[8], իսկ մինչ այդ՝ 1801 թ., Վրաստանի հետ միասին Ռուսաստանի կազմում էին ներառվել վրաց թագավորությանը ենթակա հայկական գավառները՝ Փամբակը, Լոռին և Ղազախ-Շամշադինը: Իսկ ահա 1826-1828 թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմից հետո Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանը Ռուսաստանին զիջեց Երևանի ու Նախիջևանի խանությունները և Օրդուբադի գավառը, այսինքն՝ Արևելյան Հայաստանի մեծ մասը, բացառությամբ Պարսկահայքի, միացավ Ռուսաստանին:

Այլ ճակատագիր էր վիճակված Արևմտյան Հայաստանին ու արևմտահայությանը: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ռուսական զորքերը գրավեցին Ախալցխան, Ախալքալաքը, Կարսը, Բայազետը, Ալաշկերտը, Դիադինը, Օլթին, Քղին, Էրզրումը, Խնուսը և Մուշը: Թեև պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, սակայն Ադրիանապոլսի պայմանագրով հայկական տարածքներից Ռուսաստանին անցան միայն Ախալքալաքն ու Ախալցխան, իսկ մյուս տարածքները Անգլիայի ու Ֆրանսիայի ճնշմամբ Ռուսաստանը ստիպված եղավ թողնել Թուրքիային: Սա դարձավ վատ նախադեպ ռուս-թուրքական հետագա պատերազմների համար, երբ, որպես կանոն, Ռուսաստանը Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրո-Հունգարիայի ճնշմամբ ստիպված Թուրքիային էր թողնում իր գրաված տարածքները: Բացառություն եղան 1877-1878 թթ. պատերազմների ժամանակ Ռուսաստանին անցած Արդահանի, Սարիղամիշի, Օլթիի և Կարսի շրջանները, որոնց հիման վրա էլ կազմավորվեց Կարսի մարզը (19.000 քառ. կմ):

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արմատական փոփոխություն տեղի ունեցավ հայ ազգային-ազատագրական պայքարում. Հայաստանի ազատագրության հարցը դարձավ միջազգային դիվանագիտական խնդիր և դիվանագիտական օրակարգ մտավ որպես Հայկական հարց: Առաջին հայացքից դրական այս երևույթը, սակայն, ակնկալվող դրական արդյունքը չունեցավ հայության համար, քանզի մեծ տերությունները մի կողմից Հայկական հարցը մահակ դարձրին Թուրքիայի գլխին՝ նրանից իրենց ցանկալի զիջումներ կորզելու համար, մյուս կողմից էլ նպատակ էին հետապնդում Հայկական հարցին միջամտելով չեզոքացնելու Ռուսաստանի տարածաշրջանային առավելությունը: Հայ ժողովուրդը, ներքաշվելով համաշխարհային քաղաքական խաղերի մեջ, մեկ անգամ ևս ստիպված էր ազատագրական պայքարի իր մարտավարությունը ձևել ժամանակի քաղաքական պահանջներին համապատասխան:

Բեռլինի վեհաժողովը և դրանում Սան Ստեֆանոյի 16-րդ հայանպաստ հոդվածի փոխարինումը 61-րդ անորոշ հոդվածով սառը ցնցուղի ազդեցություն ունեցան հայության համար: Հենց դրա հետևանքով էլ Խրիմյան Հայրիկը շրջանառության մեջ դրեց «երկաթե շերեփի» գաղափարը, որի էությունը, փաստորեն, ազատագրական զինյալ պայքարն էր:

Զինյալ պայքարի մարտավարությունը հայ իրականության մեջ միս ու արյուն ստացավ 1890-ականներին, երբ արդեն ձևավորվել էին ազգային-քաղաքական կուսակցությունները: Արևմտյան Հայաստանում տիրող ողբերգական իրավիճակը և արևմտահայության դանդաղ բնաջնջումը Օսմանյան Թուրքիայի կողմից ստիպեցին հայ քաղաքական շրջանակներին որդեգրել ազատագրական պայքարի նոր մարտավարություն: Ծնունդ առավ հայկական ազգային հեղափոխությունը. «….պայքարի ղեկավարությունը ստանձնեցին նոր ձևավորվող

ազգային կուսակցությունները, որոնք, չնայած ծրագրային, գաղափարական տարբերություններին, հետապնդում էին նույն գործնական նպատակը՝ թուրքական բռնակալությունից Արևմտյան Հայաստանի ազատագրումը»[9]: Հաշվի առնելով Հայկական հարցի միջազգայնացումը՝ ազգային կուսակցությունները կարծում էին, թե Հայկական հարցի վերջնական լուծումը ի վերջո վերապահված է միջազգային դիվանագիտությանը: Հայկական հարցի վրա մեծ տերությունների ուշադրությունը հրավիրելու նպատակով հնչակյանները 1890 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում խաղաղ ցույց կազմակերպեցին, որը, սակայն, թուրքական իշխանություններն արյան մեջ խեղդեցին: Արդեն պարզ էր, որ Հայկական հարցը դիվանագիտական ճանապարհով լուծվելիք հարց չէ. բնաջնջման եզրին կանգնած հայության գիտակից շրջանակներին կյանքը ստիպում էր անհավասար կռվի մեջ մտնել թուրքական բռնակալության դեմ: Դիվանագիտական խաղաղ ճանապարհով Հայկական հարցը լուծելուն ձգտող հայ քաղաքական միտքը հակվեց պայքարի մարտավարությունը փոխելուն՝ որդեգրելով զինված պայքարի մարտավարությունը: Ելնելով Օսմանյան կայսրության պայմաններից՝ հայ ազատագրական շարժման ղեկավար շրջանակները ստիպված էին ընտրել հայդուկային պայքարը՝ ֆիդայական կռիվների մարտավարությունը: Ֆիդայական կռիվներին լրացնելու էին գալիս ինքնապաշտպանական մարտերը, Արևելյան Հայաստանից խմբերի փոխադրումը Երկիր, անհատների ահաբեկումները, զինատար խմբերը և այլն: Հայ ազատագրական զինյալ պայքարի առաջին փուլին բնորոշ ռոմանտիզմի արգասիք էր Բաբ Ալիի խաղաղ ցույցը, որի ժամանակ զորքն ու խուժանը փակեցին ցուցարարների ճանապարհը և սկսեցին ջարդը: Ցույցն ավարտվեց ամբողջ քաղաքում հայերի ջարդով, որին զոհ գնաց մոտ 2.000 հայ:

Հաշվի առնելով նախորդ շրջանի դասերը՝ հայ ազատագրական պայքարի ղեկավար ուժերը, մասնավորապես՝ Դաշնակցությունը, որոշեցին վերանայել պայքարի մարտավարությունը՝ 1895-1898 թվականների համար: 1895-1896 թթ. համիդյան ջարդերը ազատագրական պայքարում ղեկավար դեր ստանձնած ՀՅԴ-ին դրդեցին դիմելու առավել արմատական քայլերի: Միջազգային հանրության ուշադրությունը Հայկական հարցի վրա սևեռելու նպատակով ՀՅԴ ուշադրության առանցքում հայտնվեց կայսրության մայրաքաղաք Կ. Պոլիսը: Այդ շրջանում Դաշնակցությունը որդեգրեց «զուգակցված հարվածների» մարտավարությունը, որին բնորոշ էր «Երկրում, Կ. Պոլսում ու կայսրության ծովեզրյա խոշոր քաղաքներում միաժամանակյա կամ ժամանակի առումով մեկը մյուսին անմիջապես հաջորդող երկու և ավելի զուգակցված ու մասշտաբային հարվածներ հասցնելու գործելաոճը»[10]: Այս մարտավարության արդյունք էին Օտոմանյան բանկի գրավումը, Սամաթիայի ռմբային կռիվները և այլն, իսկ գործողությունների նպատակն էր վրեժ լուծել հայ ժողովրդի 1895-1896 թթ. ջարդերի համար և դնել քաղաքական պահանջներ՝ ապահովելով Հայկական հարցին մեծ պետությունների միջամտությունը: Օտոմանյան բանկի գործողության արդյունքներից մեկն այն էր, որ մեծ տերությունների ձեռնարկած քայլերը կաշկանդեցին Աբդուլ Համիդի հետագա գործողությունները: Համիդն ինքն էլ ավելի զգուշավոր դարձավ, և 1896 թվականից հետո՝ մինչև 1909 թ. Ադանայի ջարդերը, արևմտահայության զանգվածային ջարդեր տեղի չունեցան: Թեև առիթները քիչ չէին, հայ հեղափոխականների գործողություններով կաշկանդված Համիդը ստիպված եղավ անպատասխան թողնել նույնիսկ 1905 թ. իր դեմ կազմակերպված մահափորձը:

Հետագայում, սակայն, իրադարձությունները դասավորվեցին ի վնաս հայության: Ելնելով արտաքին քաղաքական անբարենպաստ պայմաններից՝ ազգային-ազատագրական պայքարի ղեկավար ուժերը ստիպված էին հերթական անգամ փոխել պայքարի մարտավարությունը, այս անգամ՝ երիտթուրքական հեղաշրջումից հետո: 20-րդ դարի սկզբին մեծ տերությունները զբաղված էին իրենց խնդիրներով, և Հայկական հարցը հետին պլան էր մղվել, ուստի հայերը ստիպված էին ուղիղ երկխոսության մեջ մտնել և փորձել լեզու գտնել թուրքերի հետ, մանավանդ որ երիտթուրքերն իշխանության էին եկել ֆրանսիական հեղափոխության «ազատություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգներով և սկզբնապես լավ քողարկում էին իրենց իրական նպատակները: Հայ քաղաքական ուժերը, իրավիճակից ելնելով, անցան խորհրդարանական լեգալ գործունեության, սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ երիտթուրքերը պատրաստ չէին երկխոսության: Երիտթուրքական կառավարության իրական դեմքը լիովին բացահայտվեց 1909 թ. ապրիլի 1-ին կազմակերպված և իրականացված Ադանայի ջարդերից հետո. «Հետզհետէ անտանելի կը դառնային մանաւանդ համաթուրանական գաղափարախօսութեամբ «թիւրքճի» շարժման ճնշումները՝ օսմանեան պետութեան ոչ թուրք փոքրամասնութիւններուն նկատմամբ»[11]: Փաստացի վերադարձ էր կատարվել նախկին քաղաքականությանը. հայկական նահանգներում կամայականություններն ու բռնությունները հիշեցնում էին Աբդուլ Համիդի օրերը, հետևաբար հայերը նորից ստիպված էին մտածել ինքնապաշտպանության մասին: Այդ նպատակով էր, որ 1911 թ. օգոստոս-սեպտեմբերին տեղի ունեցած ՀՅԴ 6-րդ Ընդհանուր ժողովը ձևավորեց «Ինքնապաշտպանության մարմին», որն էլ լիազորված էր վարելու զինամարտական ողջ գործը: Հայ քաղաքական շրջանակները, համոզվելով, որ երիտթուրքերը շարունակում էին հայերի բնաջնջման աբդուլհամիդյան քաղաքականությունը, ստիպված էին հերթական անգամ փոխել պայքարի մարտավարությունը՝ նորից դիմելով մեծ պետությունների միջամտությանը՝ հիշեցնելով նրանց Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և 1895 թ. «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի մասին:

Այս շրջանում հայության համար ոգևորիչ էին 1912 թ. հոկտեմբերին բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունն ու Ռուսաստանի հայանպաստ դիրքորոշումը: Թուրքիային և նրա դաշնակիցներին հարվածելու նպատակով մեծ տերությունները որոշեցին իրագործել բարենորոգումների ծրագրեր, սակայն վերահաս պատերազմը հերթական անգամ խառնեց հայ քաղաքական ուժերի մտադրությունները: Վրա հասավ ողբերգական 1915 թ., երբ թուրքական պետության կողմից իրականացվող ցեղասպանության պայմաններում Դաշնակցության գերխնդիրը դարձավ արևմտահայության բեկորների փրկությունը ինքնապաշտպանական մարտեր կազմակերպելու միջոցով: Այսպիսով՝ 1908-1914 թթ. հայ ազգային-քաղաքական կուսակցությունների՝ որպես ազատագրական պայքարի ղեկավար ուժերի համար բարդ ու հակասական մի շրջան էին, երբ մի քանի անգամ փոփոխվեցին մարտավարություններն ու օրակարգային խնդիրները:

Նորագույն ժամանակաշրջանում ազատագրական պայքարի նոր մարտավարությունը մատնանշեց 1917 թ. դեկտեմբերին Հայոց ազգային խորհրդի կողմից արտակարգ լիազորություններով Երևան ուղարկված Արամ Մանուկյանը. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ոչ ոք չի հետաքրքրուում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[12]: Ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ առաջին անգամ հայ ժողովուրդն ընտրում է սեփական ուժերին ապավինելու մարտավարություն: Այս մարտավարությունը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ամենաճիշտն էր, որ Մայիսյան հերոսամարտերի միջոցով ծնունդ տվեց Հայաստանի Հանրապետությանը: Իհարկե, ազգային-ազատագրական պայքարը չավարտվեց Հայաստանի Հանրապետության ստեղծմամբ: 1918-1920 թթ. ՀՀ ղեկավարությանը հաջողվեց դիվանագիտական ճանապարհով Հայաստանին միացնել մի շարք հայկական տարածքներ, և մինչև խորհրդայնացումը Հայաստանի Հանրապետությունը փաստացի տիրապետում էր 70.000 քառ. կմ տարածքի (1918 թ. հունիսի 10.000 քառ. կմ-ի փոխարեն): 1920 թ. նոյեմբերի 22-ի Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով (Սևրի պայմանագրի հիման վրա) Հայաստանի Հանրապետությանը պետք է միացվեր ևս 90.000 քառ. կմ Արևմտյան Հայաստանից:

Թվում էր, թե բազմաչարչար Հայկական հարցը վերջապես քիչ թե շատ արդարացի լուծում է ստանում, սակայն արագ փոփոխված արտաքին քաղաքական դրությունը ողբերգական եղավ Հայաստանի համար, որն իր կամքից անկախ ընկավ թուրք-բոլշևիկյան խարդավանքների ծուղակը, իսկ «դաշնակիցները» արագ մոռացան իրենց փոքր դաշնակից Հայաստանի մասին՝ նրան միայնակ թողնելով թուրք-բոլշևիկյան գերակշիռ ուժերի դեմ: Անհավասար պատերազմում պարտված Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացվեց, իսկ նրա տարածքը բզկտվեց թուրք-բոլշևիկյան դաշինքի կողմից: Բայց Հայաստանի Հանրապետությունը շարունակեց ապրել հայ ժողովրդի սրտում «որպես մշտավառ հուշ անցյալի և իբրև կենդանի հույս ապագայի»[13]: Այդ հուշն ու հույսն էին, որ 1988 թ. դարձան ազգային-ազատագրական պայքարի նոր փուլի կայծն ու ոգեշնչումը: 1988 թ. փետրվարին Ստեփանակերտում տեղի ունեցած առաջին ցույցերը վերաճեցին Արցախյան շարժման՝ ընդգրկելով ոչ միայն ԼՂԻՄ-ը, այլև ՀԽՍՀ-ն ու հայկական սփյուռքը: Ազգային-ազատագրական պայքարի այս շրջանի սկիզբը ևս աչքի էր ընկնում ընդգծված ռոմանտիզմով, երբ հայությունը հավատում էր, որ խաղաղ ճանապարհով կհասնի Արցախի միացմանը մայր Հայաստանին: «1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի XX գումարման արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց դիմել Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին խնդրանքով՝ խորապես ըմբռնել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ձգտումները և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ տեղափոխելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ տեղափոխելու հարցին դրական լուծում տալու համար»[14]: Ի պատասխան արցախցիների արդարացի պահանջի՝ նախ Ադրբեջանի, ապա նաև ԽՍՀՄ ղեկավարությունները հայության ազատասիրական ձգտումները ճնշելու համար դիմեցին բռնությունների, իսկ կարճ ժամանակ անց Ադրբեջանը Արցախի դեմ պատերազմ սանձազերծեց, որից, իհարկե, Հայաստանը չէր կարող անմասն մնալ և Արցախին օգնելու համար ներքաշվեց անհավասար պատերազմի մեջ: Ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ երկրորդ անգամ հայությունն ապավինեց սեփական ուժերին և փոքրաթիվ ուժերով մեծ հաղթանակ տարավ. Արցախն ազատագրվեց, ու դրանով էլ ծնունդ առան մերօրյա հայկական երկու անկախ պետությունները՝ Հայաստանի ու Արցախի Հանրապետությունները: Թվում էր, թե ազգային-ազատագրական պայքարի այս փուլում տարած հաղթանակից հետո՝ հայությունը շարունակելու է իր պայքարը արդեն նոր մարտավարությամբ, որը որպես հաղթող պետություն դրսևորելու էր դիվանագիտական ճակատում Հայ դատի հանձնախմբերի հաջողություններով, որոնք ի վերջո հանգեցնելու էին հայության վերջնական նպատակի՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի կենսագործմանը: Հայաստանում, սակայն, ամեն ինչ գլխիվայր շուռ եկավ, երբ 2018 թ. թավշյա հեղափոխության միջոցով իշխանության եկավ

դրածոների մի խմբակ, որի միակ «առաքելությունը» հայ ժողովրդի հաղթանակները փոշիացնելն ու հայկական պետությունները վերացնելն էր: Դրա համար պետք էր սկսել հայկական երկու պետություններին ծնունդ տված արցախյան հաղթանակի արժեզրկումից, ինչն էլ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը հաջողությամբ իրագործեց: Նախ զարգացրին այն թեզը, որ թավշյա հեղափոխության հաղթանակն ավելի կարևոր է, քան Արցախի հաղթանակը, հետո բոլշևիկների օրինակով պատերազմի հերոսներին բանտերում փակեցին, բանակի հեղինակավոր, պատերազմներով անցած սպաներին փոխարինեցին գրասենյակային զինվորականներով, Արցախի ու արցախցիների դեմ հզոր արշավ սկսեցին՝ չմոռանալով այդ ամենը համեմել «խաղաղության» մասին գայթակղիչ խոստումներով, և, ի վերջո, Հայաստան բերեցին պատերազմը: Պատերազմ, որի ընթացքում Հայաստանը հետևողականորեն առաջնորդեցին դեպի ծրագրված պարտություն: Այնուհետև «պատերազմը կանգնեցնելու» և «խաղաղության դարաշրջան» բացելու պատճառաբանությամբ Նիկոլ Փաշինյանը կապիտուլյացիոն համաձայնագիր ստորագրեց՝ թշնամուն հանձնելով հայկական Արցախի 75 %-ը, այդ թվում՝ հայոց զենքի փառք Շուշին (որը հայության համար հաղթանակների խորհրդանիշ էր, և որի հանձնումը հայությանը հոգեբանորեն ընկճելու նպատակ ուներ): Չբավարարվելով այս ամենով՝ Հայաստանի կոլաբորացիոնիստ ղեկավարը Ադրբեջանին հանձնեց (և ամեն օր շարունակում է հանձնել) Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքները՝ զուգահեռաբար դյուրահավատներին «կերակրելով» «խաղաղության» մասին կեղծ խոստումներով:

Հայաստանում իշխանության բերված այս դրածոների դեմ 2020 թ. նոյեմբերի 11-ին սկսվեց «Հայրենիքի փրկության շարժում» ազգային-ազատագրական պայքարը: Շարժումը, ցավոք սրտի, հասարակության լայն շերտերի ընդգրկվածության բացակայության պատճառով լուրջ հաջողություններ չգրանցեց և ավարտվեց 2021 թ. հունիսի 20-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններով, որոնց հետևանքը եղավ դրածո խմբակի վերարտադրությունը:

Ազգային-ազատագրական պայքարի մի նոր փուլ մեկնարկեց 2022 թ. ապրիլի 23-ի ջահերթով: Պայքարի սկզբնավորողն ու շարժիչ ուժը 2021 թ. նոյեմբերին ձևավորված դիմադրության շարժումն է, որին հաջողվել է համախմբել և փողոց դուրս բերել մեծաթիվ մարդկանց, թեև հանուն արդարության պետք է ասել, որ շարժումը դեռևս համազգային բնույթ չի ստացել: 2022 թ. հունիսի 14-ին շարժման ղեկավարությունը մարտավարական որոշակի փոփոխություններով ազդարարեց շարժման առաջին փուլի ավարտն ու նոր փուլի սկիզբը, որի տևողությունն ու արդյունքները կախված կլինեն շարժման ղեկավարների ընտրած մարտավարությունից (հարկ եղած դեպքում այդ մարտավարությունը ժամանակին փոխելու կարողությունից), սեփական սխալներն ու բացթողումները շտկելու վճռականությունից և անկախ ամեն ինչից պայքարը շարունակելու կամքից: Միաժամանակ վճռական խոսքը հայ ժողովրդինն է՝ երկարատև ու ծանր պայքարի իր պատրաստակամությամբ, այն գիտակցությամբ, որ պայքարի ընթացքում չպետք է ակնկալի որևէ արտաքին ուժի միջամտությունը, այլ գործի վճռական մենակի հոգեբանությամբ, քանզի մեր ֆիզիկական անվտանգությունն ու հայկական պետականության գոյությունը հետաքրքիր են միայն մեզ: Կարևոր գործոն է նաև ազգային-ազատագրական այս պայքարում ամեն գնով հաջողության հասնելու անհրաժեշտության գիտակցումը, քանզի դիմադրության շարժման հաջողությունից են կախված հայկական երկու պետությունների գոյությունն ու հայ ժողովրդի հետագա ճակատագիրը: ■

Հղումներ

1. Հովհաննիսյան Պ., Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես-XVIII դարի վերջ). դասախոսություններ, Եր., 2010, էջ 7:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում, էջ 8:
4. Նույն տեղում, էջ 22:
5. Նույն տեղում, էջ 35:
6. Նույն տեղում, էջ 48:
7. Նույն տեղում, էջ 66:
8. Հայոց պատմություն, խմբ.՝ Հր. Սիմոնյան, Եր., 2012, էջ 312:
9. Նույն տեղում, էջ 369:
10. Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Եր., 2002, էջ 13:
11. Տասնապետեան Հր., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդ. Ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 103:
12. Աստուածատուրեան Ա., Արամը Երեւանում, «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ», Եր., 1991, էջ 89:
13. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 609:
14. http://www.nkr.am/hy/karabakh-national-liberation-movement (մուտք՝ 11.07.2022).

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. Աստուածատուրեան Ա., Արամը Երեւանում, «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ», Եր., 1991:
2. Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Եր., 2002:
3. Հայոց պատմություն, խմբ.՝ Հր. Սիմոնյան, Եր., 2012:
4. Հովհաննիսյան Պ., Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես-XVIII դարի վերջ). դասախոսություններ, Եր., 2010:
5. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

բ) Համացանցային նյութեր

1. http://www.nkr.am/hy/karabakh-national-liberation-movement.

ՀՅԴ կազմակերպական ապակեդրոնացումը ծուռ հայելիներու մէջ

Խաժակ Մկրտիչեան
ՀՅԴ Բիւրոյի անդամ

Դաշնակցականութիւնը մէկ ամբողջութիւն է՝ նոյն հարթութեան վրայ գտնուող երեք բաղադրիչներով՝ երդումը, ծրագիրը և կանոնագիրը: Իւրաքանչիւր փորձ, որ կը միտի զանոնք իրարմէ անջատել կամ մէկուն միւսէն աւելի նախապատուութիւն տալ, դաշնակցականութեան աղաւաղում է: Դաշնակցականի երդումը բոլորը զիրար կը շաղկապէ իբրև խոստում՝ «միշտ հաւատարիմ մնալու ՀՅԴ ծրագրին, կանոնագրին ու որոշումներուն»:

Կանոնագրային տրամադրութիւններու լոյսին տակ մեծ առաւելութիւն է կազմակերպական ապակեդրոնացումով գործելու եղանակը, սակայն միշտ զայն պէտք է ընկալել գաղափարական կեդրոնացումին կցուած: Իսկ գաղափարական կեդրոնացումը կը նշանակէ նոյն սկզբունքներուն հաւատալ և նոյն ռազմավարական մեկնակէտն ու հայեցակարգը ընդունիլ: Գաղափարական կեդրոնացումի սահմանումն ու նշաձողը յստակօրէն տեղադրուած են երդման տառին ու ոգիին մէջ՝ ծրագրին ու որոշումներուն հաւատարիմ ըլլալու ձևակերպումով: Գաղափարական կեդրոնացումն է, որ Դաշնակցութեան՝ տարբեր պայմաններու ու միջավայրերու մէջ գործող միաւորներուն կուտայ նոյն կազմակերպութեան պատկանելու դիմագիծ, այլապէս արդիւնքը պիտի ըլլայ այն, որ ՀՅ Դաշնակցութեան անուան տակ ձևաւորուած տարբեր կուսակցութիւններ կազմուին, որոնք տարբեր բաներու կը հաւատան և տարբեր սկզբունքներ ունին:

Կազմակերպական ապակեդրոնացումը, սակայն, ՀՅԴ կանոնագրային այն սկզբունքներէն է, որոնք եթէ ոչ չարաշահուած, ապա գոնէ թիւր ձևով են մեկնաբանուած ու մատուցուած ծուռ հայելիի մէջ: Երբեմն սխալ մեկնաբանութեամբ կազմակերպական ապակեդրոնացումը կը տարուի բացարձակութեան, աւելի յաճախ ալ՝ անիշխանականութեան, երկու պարագաներուն ալ՝ դաշնակցականութիւնը մասնատուած ձևով ընկալելու, կազմակերպական ապակեդրոնացումը գաղափարական կեդրոնացումէն և երդումէն անջատ մեկնաբանելու սխալ ընթացքով:

Ոմանք կազմակերպական ապակեդրոնացումը կը մեկնաբանեն այնպէս, թէ զայն իրենց իրաւունք կուտայ իրենց ղեկավարութեան յանձնուած շրջանին մէջ ընելու, ինչ ուզեն, և գերադաս մարմինները իրաւունք չունին միջամտելու: Այստեղ միտումնաւոր կամ անգիտակցաբար մոռացութեան կը տրուի այն հանգամանքը, որ կազմակերպական ապակեդրոնացումով ընձեռուած գործելակերպային ազատութիւնը չի կրնար հակասել ծրագիրով ու Ընդհանուր ժողովներու որոշումներով ձևաւորուած գաղափարական կեդրոնացումին և երդման մէջ ընդգծուած՝ որոշումներուն հաւատարիմ ըլլալու

յանձնառութեան: Կազմակերպական ապակեդրոնացումը միջոցներու յարմար ընտրութիւն կատարելու ազատութիւնն է, և ոչ թէ ռազմավարական պահանջներն ու որոշումները կատարելու կամ չկատարելու անիշխանականութիւն: Աւելին՝ այն նոյնիսկ առիթ չի տար ըստ ճաշակի որոշումներուն մէկ մասը կատարելուն, իսկ միւս մասը չկատարելուն:

Կազմակերպական ապակեդրոնացման միւս ծուռ մեկնաբանութիւնը այն է, որ ոմանք կը մտածեն, թէ այնքան ատեն, որ հարցը կը վերաբերի իրենց ղեկավարման յանձնուած շրջանին, իրենք բացարձակ ազատութիւնը ունին որոշումներ առնելու՝ առանց նուազագոյն խորհրդակցութեան առիթ ստեղծելու: Բայց պէտք է գիտակցիլ, որ մանաւանդ քաղաքական կեանքին մէջ խնդիրներն ու յարաբերութիւնները փոխշաղկապուած են: Ուստի եթէ աշխարհաքաղաքական տարածքի մը մէջ առնուած որոշում մը իր հետևանքներով դուրս կրնայ գալ տուեալ տարածքի սահմաններէն, կարելի չէ կազմակերպական ապակեդրոնացումը բացարձակութեան տանիլ և անտեսել այլ շրջանի մէջ խնդիրներ յառաջացնող հաւանական հետևանքները: Հետևաբար անհրաժեշտ է գիտակցիլ, որ նման պարագաներուն միշտ կարիք կայ խորհրդակցութեան ու համադրման: Այլապէս ՀՅԴ գործելակերպային մեծ առաւելութիւն նկատուող կազմակերպական ապակեդրոնացումը կը տարուի բացարձակութեան, որ տեղ մը կառուցելու միտումով առնուած որոշում մը այլ տեղ մը կրնայ վնասել: Անհրաժեշտ է ուրեմն, դաշնակցականութիւնը ընկալել իր ամբողջութեան մէջ և չփորձել զայն մասնատել ու ըստ ճաշակի մեկնաբանել ու կիրառել: Ի վերջոյ, Ա. Ընդհանուր ժողովին տուած պատգամը միշտ ուժի մէջ է. «Յեղափոխական գործի մէջ իրաւունքի և պահանջի խնդիր չի կրնար ըլլալ, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան և բաւարարութեան խնդիր»: ■

Մեզմէ պիտի չլսէք

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Պիտի չլսէք մեզմէ ձեզ հանգստացնող խօսքեր:

Հանգիստ չէ Հայաշխարհը ահա արդէն քանի՜ դարէ ի վեր: Մենք կը զգանք այդ անհանգստութիւնը, այդ իսկ պատճառաւ ծնունդ ենք առեր 132 տարի առաջ: Մենք կը կրե՛նք այդ անհանգստութիւնն ու կ՚ենթարկուինք անոր հետևանքներուն, և մեր նպատակն է, որ Ազգը հաւաքաբար կրէ այդ անհանգստութիւնը, որպէսզի ի վերջոյ կարենանք յաղթահարել մեզ անհանգստացնող ազդակները և այս արևուն տակ մե՛նք ալ ապրինք հանգիստ միւս ժողովուրդներուն հետ:

Պիտի չլսէք մեզմէ ձեզ հանդարտեցնող խօսքեր:

Ինչպէ՞ս կրնանք ձեզ հանդարտեցնել ուզել, երբ ամեն օր հալածանքի ենթարկուած էք, ե՛նք բոլորս միասին: Կը հալածուինք տևաբար, որովհետև չենք ուզեր հրաժարիլ մեր ինքնութենէն, երես դարձնել մեր հաւատքին, այլոց լեզուներով փոխարինել մե՛ր լեզուն, մերուիլ ուրիշներու, խառնուիլ, փոշիանալ ու անհետանալ: Ոճիր պիտի ըլլայ ձեզ հանդարտեցնելը, մղելը, որ համակերպիք, հաշտուիք, ընդունիք ձեզի պարտադրուող ճակատագիրը:

Պիտի չլսէք մեզմէ ձեզ ինքնախաբէութեան մղող խօսքեր:

Այո՛, մենք ալ տեսած ենք արութեան գործեր, մենք ալ ունեցած ենք փայլուն յաղթանակներ, այո՛, մենք ալ քաղաքակրթութիւն ենք կերտած ու աշխարհին բաշխած «միտք, առած, երգեր», բայց չենք կրնար անոնցմով շլանալ ու չտեսնել մեր ներկայ վիճակը: Չտեսնել մեր ինքնութիւնը պաշտպանելու անկարողութիւնը, մեր սահմանները պաշտպանելու անկարութիւնը, մեր իրաւունքները պաշտպանելու ապիկարութիւնը:

Պիտի չլսէք այդ խօսքերը, բայց պիտի լսէք այլ խօսքեր:

Պիտի լսէք կռիւի մղող կոչեր, յարատեւ կռիւի, ինչպէս պատգամեր է մեզի մեր հիմնադիրներէն անմահն Քրիստափոր՝ յիշեցնելով, թէ ազատութեան հասնելու համար տարբեր ազգեր որքա՜ն երկար մարտնչեր են՝ 50 տարի, 100 տարի, իրլանտացիները՝ 600, հիմա արդէն աւելի քան 700 տարի...

Պիտի լսէք բողոքի պոռթկումներ, ընդվզումի փայլատակումներ, ըմբոստացման հրաւէրներ ընդդէմ մեր դէմ նիւթուող դաւերուն, մեզ տակաւին ա՛լ աւելի ճնշելու փորձերուն, մեզ նորանոր ցեղասպանութիւններու, մաքրագործումներու ենթարկելու նկրտումներուն:

Պիտի լսէք և պահանջատիրական խօսքեր, պահանջատիրական՝ ուղղած ամենէն առաջ մենք մեզի, ապա՝ նաև աշխարհին: Պահանջատիրական՝ մեր տունը կարգի դնելու, մեր ուժերը համախմբելու, մեր միջոցները խնայելու և ամրապնդելու, մեր արժէքներուն ու մեր պատմութեանը տէր կանգնելու, մեր թիրախները յստակացնելու, մեր հարուածներն անշեղ դարձնելու ու անվհատ շարունակելու մեր հայամարտը, իսկ մեր դրացիներէն, մեր դաշնակիցներէն ու մեր բարեկամներէն պահանջելու, որ տարածաշրջանի խաղաղութեան սիրոյն, աշխարհի՛ խաղաղութեան սիրոյն հասկնան, որ իւրաքանչիւր ազգ բոլորին հաւասար իրաւունքներ ունի, իրաւունքներ՝ խաղաղ ապրելու և ստեղծագործելու:

Մենք մեր այս ինքնութենէն, մեր այս առաքելութենէն հրաժարողը չենք: Այլապէս կը դադրինք մենք մե՛նք ըլլալէ: Կը կորսնցնենք գոյութեան մեր իրաւունքը:

Այո՛, 132 տարեկան երիտասարդէ մը դուք երբեք պիտի չլսէք պարտութեան համակերպելու խօսքեր:

Սասունց Դաւիթ. գործ՝ Խորէն Հակոբյանի

Վրացական «Բորբա» թերթը Հայոց ազգային խորհրդի՝Երևան փոխադրվելու որոշման մասին՝ըստ «Մշակ» թերթի

6 հուլիսի 1918 թ.[1]

«Борьба» լրագիրը գրում է. «Սոց(իալ)-դեմոկրատական ֆրակցիայի նախաձեռնությամբ <Հայոց> ազգային խորհուրդը քննեց Ազգային խորհուրդը Երևան տեղափոխելու հարցը: Սոց(իալ)-դեմոկրատներն այս հարցի վերաբերյալ որոշ կերպով բացասական կարծիք հայտնեցին, որովհետև քաղաքական դրությունը Երևանում և արտաքին պայմանները չեն ընձեռում ոչ մի հնարավորություն արդյունավետ աշխատանքի համար: Երևանում Ազգ(ային) խորհուրդը կտրված կլինի միջազգային հարաբերությունների և կապակցությունների շրջանից:

Սոց(իալ)-դեմոկրատական ֆրակցիայի կարծիքով՝ ծայրահեղ դեպքում Երևան կարող է գնալ կառավարությունը, որի առաջին գործը պետք է լինի հիշատակագիր ուղղել օսմանյան կառավարությանն այն մասին, որ թուրքական զորքերը խախտում են հաշտության դաշնագիրը, և անկարելի է պետական նորմալ կյանք ստեղծել, քանի որ օսմանյան զորքերը գտնվում են հայկական հասարակապետության տերիտորիայի վրա:

Ազգային ժողովի[2] մեծամասնությունը, որ բաղկացած է դաշնակցականներից, չհամաձայնեց սոց(իալ)-դեմոկրատների ցուցումների հետ և որոշեց երկու շաբաթվա ընթացքում Ազգային խորհուրդը տեղափոխել Երևան»:

Այս լուրը թարգմանելով «Борьба»-ից՝ պետք է հետևյալ երկու ուղղումն անենք. Ազգ(ային) խորհուրդը Երևան փոխադրելու հարցը քննության է դրվել ոչ թե սոց(իալ)-դեմոկր(ատական) ֆրակցիայի նախաձեռնությամբ, այլ Երևանից եկած հատուկ պատգամավորության առաջարկությամբ: Հակառակ այդ տեղափոխության խոսել և ձայն են տվել ոչ միայն սոց(իալ)-դեմոկրատները, այլև սոց(իալիստ)-հեղափոխականները: Վերջիններս, <կուսակցության> կենտր(ոնական) կոմիտեի որոշման համաձայն, վճռական կերպով դեմ են եղել այդ տեղափոխությանը, քանի որ ճանապարհները փակ են, և Երևանում նստող Ազգ(ային) խորհուրդն ու կառավարությունը կտրված պետք է լինեն Թիֆլիսից և ընդհանրապես դրսի աշխարհից: Նրանք բերել են նաև ֆինանսական և տնտեսական տեսակետից դժվարություններ այդպիսի շտապ տեղափոխության դեմ: Սակայն դաշնակցականներն իրենց ձայներով անց են կացրել հարցը հօգուտ տեղափոխության:

«Մշակ», 12 հուլիսի 1918 թ., թիվ 134

(«Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)» (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., «Հայկարլի» տպարան, 2009, էջ 122-123):

---

1. Թվագրվում է համաձայն Հայոց ազգային խորհրդի համապատասխան որոշման ընդունման օրվա:

2. Խոսքը Հայոց ազգային խորհրդի մասին է:

ԴՐՕՇԱԿ

Խունտայի նոր զոհը
Երևան, հուլիսի 15, 2022